

ՀԱՅԱՍՏԱՆ

տեղեկագիր

№ 3 (5)
սեպտեմբեր, 2005

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՓՈԽՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Արմեն Այվազյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախնական հարցադրումներ	3
2. Հայագիտությունը որպես հասարակագիտական առարկա: Այլևայլ ազդեցությունները	4
3. Հայագիտությունը որպես ինքնապաշտպանական համակարգ	7
4. Հայագիտությունը որպես դիմադրության անհամաչափ (ասիմետրիկ) միջոց	9
5. Հայագիտության զարգացման հին ու նոր խոչընդոտները	10
6. Հայրենի և արտասահմանյան հայագետների համագործակցության մասին	23
7. Հայրենի հայագիտության կոոպտացիայի մեխանիզմները	24
8. Դիմադրական աշխատանքի և ձգտումների բացակայության հետևանքները	27
Եզրակացություններ	38
Հավելված Ա	40
Հավելված Բ	43
Հավելված Գ	49
Հավելված Դ	62
Հավելված Ե	76
Հավելված Զ	100
Հավելված Է	116
Հավելված Ը	119
Հավելված Թ	129
Հավելված Ժ	150
Հավելված ԺԱ	151

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Արմեն Այվազյան

1. Նախնական հարցադրումներ

1990թ. ի վեր համաշխարհային քաղաքականության մեջ արձանագրված արմատական փոփոխություններն ուժգնորեն անդրադարձել են Հայաստանի բոլոր ոլորտներին, այդ թվում՝ գիտությանն առհասարակ և հայագիտությանը՝ մասնավորապես: Գիտական աշխարհի արտաքին և ներքին պայմանների կտրուկ փոփոխությունը, այդ միջավայրում նոր ու բարդ խնդիրների առաջացումը պահանջում են վերանայել հայագիտության զարգացման ռազմավարությունը:

Ստորև փորձելու ենք լուսաբանել հայագիտության զարգացմանն առնչվող գիտատեսական մի շարք փոխկապակցված խնդիրներ.

1. հայագիտությունն առարկան, նրա դերը հայոց պետականության կայացման ու զարգացման գործում,
2. հայագիտության զարգացման ավանդական ճանապարհի գնահատումը,
3. աշխարհաքաղաքական ու քաղաքական ազդեցությունները հայագիտության ներկա զարգացման վրա,
4. հայագիտական «դպրոցների» տարբերակում, նրանց հակամետ գաղափարախոսությունների և ծրագրային դիրքորոշումների բացահայտում ու դասակարգում,
5. հայագիտական դպրոցների ինքնատիպ ազդեցությունները անհատ հայագետների աշխարհայացքի և գիտական արտադրանքի վրա,
6. հայրենի և արտասահմանյան հայագետների համագործակցության գիտաբարոյական սկզբունքների ճշտորոշում,
7. կադրային քաղաքականությունը հայագիտության ոլորտում.
8. հայագիտության կոնկրետ անելիքները՝ միջազգային ասպարեզում հակահայկական քարոզչությունն ու, մասնավորաբար, պատմության կեղծումը չեզոքացնելու գործում,
9. հայագիտության զարգացման ռազմավարական սկզբունքների ճշտորոշում:

2. Հայագիտությունը որպես հասարակագիտական առարկա: Այլնայլ ազդեցությունները

Հայագիտությունը բազմաձյուղ հասարակագիտական առարկա է, որը կոչված է ուսումնասիրելու հայ էթնոսը՝ նրա բազմադարյա պատմությունը, մշակույթը, լեզուն, ժողովրդագրությունը, ազգային բնավորությունն ու հոգեբանությունը:

Հասարակագիտական բոլոր առարկաների պես՝ հայագիտական ուսումնասիրությունները ևս ունենում են որոշակի սկզբնական «հետազոտական դիրքորոշումներ», որոնք մեծապես ազդում են բուն հետազոտությունների ընթացքի և արդյունքների վրա: Այդ նախնական դիրքորոշումները գործում են, մասնավորապես.

1. գիտական դպրոցների որդեգրած գաղափարախոսությունների և նպատակադրումների մակարդակում,
2. անհատ գիտնականի հոգեկանի և բանականի մակարդակում:

«Գիտական դպրոց» ասելով հասկանում ենք այնպիսի դպրոցներ, որոնք ունեն՝ ա) աշխատանքը կազմակերպելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական որոշակի բազա, բ) գիտական նույնանման մեթոդաբանությամբ առաջնորդվող ու միմյանց հետ համագործակցող գիտնականների խումբ, գ) կադրեր վերարտադրելու և նրանց աշխատանքով ապահովելու հնարավորություն, դ) ներքին և արտաքին մասնագիտական միջավայրում սխալները, թյուրիմացությունները, գրագողությունը կանխող և արգելող քննադատության առկայություն: Կեղծ-գիտական դպրոցում այս վերջին պահանջը՝ քննադատության գործունեությունը, բացահայտորեն անտեսված է:

Հասարակագիտական առարկաներն ուղղակիորեն շահույթ չեն ապահովում, այդ իսկ պատճառով այս բնագավառում գիտական դպրոցներ ստեղծողն ու դրանց նյութապես, քաղաքականապես ու բարոյապես հովանավորողը կարող են լինել միմիայն պետական, քաղաքական, կրոնական, մշակութային կամ այլ կարգի կառույցները, որոնք ունեն ֆինանսական որոշակի կարողություն¹: Ընդ որում՝ այս կառույցների կարճաժամկետ և երկարաժամկետ գործունեությունը կառուցվում է, նախ և առաջ, աշխարհաքաղաքական, տնտեսական, ռազմական, հոգևոր, գաղափարախոսական, կրթական և այլ բնագավառներում ունեցած հստակ նպատակների ու լուծման սպասող հերթական անհետաձգելի խնդիրների հաշվառմամբ: Սովորաբար հասարակագիտությունը հովանավորող կառույցներն ակնկալում են աջակցություն ստանալ իրենց այժմեական խնդիրների լուծման հարցում: Այդպես էր անցյալում, այդպես է նաև մեր օրերում: Խորհրդային «ամերիկանոլոգիան» (ի դեմս, հատկապես, մոսկովյան «ԱՄՆ-ի և Կանադայի ինստիտուտ»-ի շուրջը ձևավորված գիտական դպրոցի) ստեղծվել էր հատուկ Կրեմլին ու նրա քաղաքական նպատակներին ծա-

¹ Այդպիսի կարողություն և ցանկություն ունեցող գերհարուստ անհատները նույնպես որոշակի տնտեսական և քաղաքական կառույցների ներկայացուցիչ են (զուցե առավել, քան այլ խավերի ներկայացուցիչները), ուստի նրանց ինքնուրույն գործունեության շառավիղը, եթե այն չի համընկնում իր պատկանած կառույցների ծրագրերին, խիստ սահմանափակ է:

ռայելու համար, իսկ ամերիկյան «սովետոլոգիան» ստեղծվել էր հատուկ Սպիտակ տանն ու նրա քաղաքական նպատակների սպասարկման համար: Նույնպիսի իրավիճակ է տիրել ու տիրում նաև մի շարք այլ տարածաշրջանների ու ժողովուրդների պատմության, մշակույթի ու ներկա քաղաքական-տնտեսական հարցերի հետազոտության բնագավառում, օրինակ՝ չինագիտության, արաբագիտության, արևելագիտության մեջ¹:

Առանց հովանավորի կարող են գոյատևել, ստեղծագործել և սահմանափակ թվով հետևորդներ ունենալ առանձին անկախ գիտնականները, բայց *հասարակագիտական դպրոցն* առանց հովանավոր-պատվիրատուի գոյատևել չի կարող:

Այսպիսով, գիտական (կամ կեղծ-գիտական) դպրոցի ստեղծումն ու շարունակական գործունեությունը պայմանավորված են գիտնականների խմբի և այն հովանավորողի (հովանավորողների) համագործակցությամբ: Տոտալիտար համակարգերում այդ համագործակցությունը վերածվում է պետության անսքող, անզեն աչքով տեսանելի թելադրանքի: Սակայն արևմտյան ժողովրդավարության պայմաններում ևս գոյություն ունի այդպիսի համագործակցություն, որի արդյունքում գիտական դպրոցների նպատակները դարձյալ շեղվում են զուտ գիտական խնդիրներից ու միախառնվում աշխարհաքաղաքական, քաղաքական, գաղափարախոսական և այլ նպատակներին: Պարզապես, Արևմուտքում այս թելադրանքը բավականին քողարկված է ու նաև միտումնավոր անտեսվում է:

Արժե մեջբերում կատարել Մասաչուսեթսի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Լ.Չորբաջյանի մի ուսումնասիրությունից, որտեղ բավականին հանգամանորեն քննված են նաև այս հարցերը²: Խոսելով արևմտյան պետական ու տրանսնացիոնալ ուժերի (իսթաբլիշմենթի) պատվերը կատարող գիտնականների մասին՝ Չորբաջյանը, մասնավորապես, նկատում է. «Իսթաբլիշմենթի վերլուծաբանների և դիտորդների մոտեցումը շատ է նմանվում հենց նույն իսթաբլիշմենթին: Այդ իսթաբլիշմենթը բաղկացած է տրանսնացիոնալ կորպորատիվ ներդրողներից և արևմտյան ինդուստրիալիզացված պետությունների կառավարություններից: Այս հանրային ու մասնավոր հատվածների դերակատարները դրսից ստեղծում են նպատակներ և փաթեթում դրանք (Անդրկովկասյան) տարածաշրջանի վզին: Կիրառվում են մահակի և կարկանդակի քաղաքականության զանազան խթանիչներ, ինչպիսիք են՝ վարկերի կամ օգնության այլ տեսակների խոստումը կամ մերժումը, որոնց նպատակն է՝ ստիպել տարածաշրջանային դերակատարներին համաքայլ շարժվել իրենց մեծ ծրագրին: Այս ինտերվենցիոնիստական համատեքստում՝ տարածաշրջանային պատմությունն ու ժողովրդի կամքը համարվում են խոչընդոտ հաջողությանը հասնելու ճանապարհին, քանի որ դրանք հակասում են միմյանց, հաճախ ծառայում են որպես հակամարտության հիմք, խնդիրներ են առաջացնում հաշտեցման ճանապարհին և կարող են անցանկալի եզրակացությունների հանգեցնել, օրինակ՝ որ

¹ Տե՛ս Edward W. Said, «Orientalism» (New York: Vintage Books, 1994), p. 108. Նկատենք, որ այս գիրքն առաջին անգամ լույս է տեսել 1979թ.:

² Levon Chorbajian, ed., «Making a State: From Secession to Republic In Nagorno-Karabagh» (New York: St. Martin's Press, 2001), pp. 7-9.

հայերը Լեռնային Ղարաբաղն իրենցը համարելու շատ ուժեղ փաստարկներ ունեն։ Իսթաբուլի ժողովի մոտեցումը տեխնոկրատական է և շեշտադրումը՝ շատ գործնական։ Արա՝ այն, ինչ կրեթի գործի իրականացմանը՝ սա է օրվա հրամայականը։ Միաժամանակ՝ թույլ մի՝ տուր պատմությունը, մշակույթը կամ տեղի կարիքները միջամտեն։ ... Իրականում, այս մոտեցումն այնքան ամուր է թրծված արևմտյան քաղաքական ու առևտրային առաջնահերթության դիրքորոշումներում, որ որոշ վերլուծաբաններ և դիտորդներ չեն էլ փորձում այն թաքցնել»¹։

Արևմտյան հասարակագետները, հատկապես նրանք, ում աշխատանքն անմիջականորեն առնչվում է իրենց պետության արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներին, ստիպված են հաշվի նստել իրենց աշխատատեղով ապահովողի կարծիքի հետ։ Նրանց զգալի մասը, եթե ոչ մեծամասնությունը, դա անում է հաճույքով, ներքին գիտակցական կամ ենթագիտակցական համոզվածությամբ։

Այս երևույթն առանձին աշխատությամբ քննադատաբար վերլուծած Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Էդվարդ Սաիդը (ծագումով պաղեստինցի արաբ) չափազանց կարևոր հետևությունների է հանգել. «Ժամանակակից արևելագետները... լեզվական ֆակուլտետներում իրենք իրենց կրավորականորեն չեն մեկուսացրել։ Ճիշտ հակառակը... Նրանց մեծամասնությունն այսօր արդեն չի տարբերվում... քաղաքական գիտություններում աշխատող այլ «փորձագետներից» ու «խորհրդատուներից»։ Այսպիսով՝ վաղուց է գիտակցվել, որ, օրինակ, «ազգային բնավորության վերլուծաբանի»² և իսլամական ինստիտուտների գիտնականի միջև դաշինքը լայն հնարավորություններ է ստեղծում ռազմական-ազգային անվտանգության հարցերի հետազոտության համար»³։

Բնականաբար, այդպիսի քաղաքականացված կադապարներում կատարվող վերլուծություններն օբյեկտիվ լինել չեն կարող։ Լ.Չորբաջյանը նկարագրում է նաև այն մեխանիզմները, որոնք կաշկանդում են արևմտյան գիտնականների ու փորձագետների (մասնավորապես, Անդրկովկասի հարցերով զբաղվող մասնագետների)՝ անկախ և անկողմնակալ կերպով հետազոտելու հնարավորություններն ու բուն իսկ ձգտումը. «Արևմտյան վերլուծաբաններն ու դիտորդներն ուզում են մեզ հավատացնել, որ իրենց տեսակետները լավ մտածված են, հիմնված են գործին վերաբերող բոլոր գործոնների օբյեկտիվ քննության վրա և անկանխակալ են։ Այս համատեքստում արժե նրանց հարց տալ. իսկ նրանք ունեն՞ արդյոք քաղաքական այլ դիրքորոշումներ որդեգրելու հնարավորություն։ Այլ կերպ ասած՝ եթե իսթաբուլի ժողովի վերլուծաբաններն ու դիտորդները ցանկանան պաշտպանել հակառակ կարծիքներ, արդյոք նրանք կարո՞ղ են դա անել։ Կարո՞ղ է նրանցից որևէ մեկն առաջ տանել այն տեսակետը, որ ինքնորոշումը՝ միջազգային իրավունքի ավելի բարձր

¹ Որպես իսթաբուլի ժողովի վերլուծաբանների կողմնակալության ու նախատրամադրվածության վաղ օրինակ, Չորբաջյանը նշում է նրանցից մեկի՝ Նեյլ Մրքֆարլեյնի պարզ ու հստակ հետևյալ հայտարարությունը. «Նախկին ԽՍՀՄ տարածքի տասնհինգ հանրապետությունները գոյություն ունեն խորհրդային իշխանության գծած սահմաններում, ու *կարևոր չէ, թե դրանք համապատասխանում են էթնաշխարհագրական սահմաններին կամ նրանցում ապրող ժողովուրդների ցանկություններին*» (Levon Chorbajian, ed., «*Making a State*», op.cit., p. 8-9).

² Է.Սաիդը նկատի ունի Կենտրոնական հետախուզական վարչությունում 1940-ական թթ. ի վեր այդ ուղղությամբ վերլուծություններ կատարող մասնագետներին։

³ Edward W. Said, «*Orientalism*», p. 107.

սկզբունք է, քան արդի պետությունների տարածքային ամբողջականությունը, որ Ղարաբաղի հայերի դատն արդար է և պետք է ճանաչվի անկախ պետականության տեսքով, կամ՝ որ Ղարաբաղի հայերի նկատմամբ Ադրբեջանի նախկին վերաբերմունքն արդար պատճառ է եզրակացնելու համար, որ նրանց Ադրբեջանի կազմում բռնի ընդգրկելու շարունակվող փորձերը, անկախ ինքնավարության խոստացվող մակարդակներից, լինելու են անկենսունակ մի լուծում, որն անխուսափելիորեն կբերի աղետալի հետևանքների: Եվ այդ ամենից հետո կարո՞ղ են այդ վերլուծաբաններն ու դիտորդները աշխատել և պարզևատրվել հիմնական ուղղության պատկանող հաստատություններում (հանրային և մասնավոր հատվածում), ինչպես որ այժմ աշխատում ու պարզևատրվում են: Մեր կարծիքն այն է, որ իսթաբլիշմենթի վերլուծաբաններն ու դիտորդները, փաստացիորեն, *կառուցվածքայնորեն անազատ* են որդեգրելու և պաշտպանելու այդպիսի տեսակետներ, եթե միայն նրանք համաձայն չեն մարզինալացման ենթարկվել իրենց իսկ մասնագիտություններում, այսինքն՝ զիջել-փոխել իրենց ներկա հեղինակավոր ակադեմիական պաշտոնները պակաս կարևորներով՝ զուգահեռաբար հրաժարվելով տրանսնացիոնալ ընկերությունների, պետքարտուղարությունների, արտգործնախարարությունների և ազգային անվտանգության ծառայությունների տրամադրած դրամաշնորհներից և խորհրդատվության դիմաց ստացված վարձերից, ինչպես նաև միջազգային միջնորդական կազմակերպություններում և մամուլի հիմնական օրգաններում ունեցած իրենց դիրքերից:

Իսթաբլիշմենթի վերլուծաբանների և մեկնաբանների ու նրանց կարիերաների միջև եղած կապերի քննարկումը տհաճ գործ է: Այդ կապերը տրամագծորեն հակասում են այն նախընտրելի նկարագրին, ըստ որի նրանք իբր սեփական ուժերի վրա վստահ, անկախ և ազատ մտածող արևմտյան մտավորականներ են: Հետևաբար, զարմանալի չէ, որ այդպիսի կապերը և դրանց ազդեցությունը թաքնված մնան այդ մասնագետներից ոմանց գիտակցությունից անգամ ու նաև հմտորեն քողարկվեն աշխարհից առհասարակ¹:

Նկատենք նաև, որ եթե անգամ որևէ առանձին հասարակագետ փորձի ձեռքադաշտվել բոլոր կարգի կողմնակի ազդեցություններից, ներառյալ իր գիտական դպրոցում ընդունված հիմնարար դիրքորոշումներից ու հետազոտական կանոններից (ինչը հազվադեպ է պատահում), նա, միևնույն է, առաջնորդվելու է որոշակի գաղափարախոսական, հոգեբանական, շահադիտական և այլ նպատակներով, որոնք դարձյալ կարող են ամբողջովին չգիտակցվել իր իսկ կողմից: Եվ առհասարակ՝ գաղափարազերծված, «մաքուր» հասարակագիտություն չի լինում²:

3. Հայագիտությունը որպես ինքնապաշտպանական համակարգ

Արդյո՞ք հայագիտությունը, զուտ հասարակագիտության առանձին ճյուղ լինելուց բացի, հայության կյանքում ունի նաև որոշակի այլ դերակատարում:

Այս հարցին պատասխանելուց առաջ, սակայն, պետք է ճիշտ պատկերացնել հայ

¹ Ibid., p. 32.

² Արևմտյան հեղինակների մի շարք տեսությունները՝ գաղափարախոսությունների «մահվան» մասին, նախատեսված էին ընդամենը քայքայելու ԽՍՀՄ-ում տիրող գաղափարախոսությունը և, ընդհակառակը, ամրապնդելու արևմտյան տերությունների դավանած գաղափարախոսությունը:

ազգի ներկա կացությունը:

Բանն այն է, որ այժմ (ինչպես և վերջին շուրջ մեկ ու կես դարում) հայությունը՝ որպես ազգ, որպես հավաքական միավոր ու միասնական օրգանիզմ, լինել-չլինելու պայքարի մեջ է իրենից քանակապես, նյութական ռեսուրսներով ու տարածքային առումով բազմակիորեն գերազանցող թշնամի ուժերի դեմ: Անցյալում էլ, այսօր էլ այդ ուժերը նույնն են՝ Թուրքիան (սուլթանական, ապա իթթիհադական, այնուհետև հանրապետական) և նրա անդրկովկասյան դաշնակիցը, որի մարմնավորումը 1918 թվականից ի վեր Ադրբեջանի Հանրապետությունն է (մուսավաթական, ապա խորհրդային, այնուհետև հետխորհրդային)¹: Հայության համար այս հակամարտությունը տանուլ տալն անթույլատրելի է. դա կնշանակի, ոչ ավելի, ոչ պակաս, Հայաստանի՝ աշխարհի երեսից վերացում և հայ ազգի արագընթաց ու վերջնական կազմալուծում²: Հայ ազգի գոյության համար ամենակենսական նշանակություն ունեցող գործունեությունն այս *օրեկտիվ պայքարն է*, որովհետև նրա ընթացքից ու վախճանից է կախված իր լինել-չլինելու հարցը:

Եթե խորհրդային կայսրության օրոք Թուրքիայի և Ադրբեջանի հետ հայության հակամարտությունը չուներ ռազմական կամ բավականաչափ հստակ որևէ այլ ճակատ, ապա 1988-1994թթ. (հատկապես, 1991թ. ԽՍՀՄ փլուզումից հետո) հայ-թուրք/ադրբեջանական հակամարտությունն արդեն ընդունեց իրական պատերազմի բնույթ՝ տեսանելի փոփոխություններ առաջացնելով նաև տարածաշրջանի քաղաքական քարտեզի վրա:

Հայության գոյապայքարն այժմ կենտրոնացած է ներկա Հայաստանի հայաթափումն ու դրան զուգընթաց հոգևոր-մշակութային հայագերծումը կասեցնելու վրա: Հայոց ներկա գոյամարտի գլխավոր նպատակը Հայաստանը կենսունակ պետություն դարձնելն է, որ, ի թիվս այլ խնդիրների լուծման, նախատեսում է նաև ազգային արժեքների պահպանման վրա հիմնված հասարակության կառուցում:

Այսպիսով, հայազգիտությունն ուսումնասիրում է կենդանի և պայքարող օրգանիզմ՝ հայ ազգը: Հետևաբար, հայազգիտության արտադրանքը՝ հայ ազգի մասին խորքային գիտելիքը, անխուսափելիորեն ուժ է և զենք, ընդ որում՝ և՛ հայության, և՛ նրա դեմ պայքարող թուրք-ադրբեջանական դաշինքի, և՛ հայությունն իր շահերին ծառայեցնել ցանկացող եր-

¹ Անդրկովկասի թյուրքախոս մահմեդականությունը հակահայ պայքարին միացել էր դեռևս 1905-1906թթ.:

² Հայերին Հայաստանի վերջին բեկորից վտարելու կամ այնտեղ իսկ ոչնչացնելու մասին բացահայտ արտահայտվում են Ադրբեջանում և Թուրքիայում գործող քաղաքական, ներառյալ իշխանական ուժերի ներկայացուցիչները: Ադրբեջանի պաշտպանության նախարար, գեներալ Սաֆար Աբիևը հայտարարում է, թե «Հայկական պետությունը ստեղծվել է օկուպացված ադրբեջանական հողերի վրա» (ANS.az 12/7/01) և որ ադրբեջանական բանակը «կարող է անցնել Երևանից այն կողմ» (ANS via BBC Monitoring 3/22/02): Ադրբեջանի պաշտպանության նախարարության խոսնակ գնդապետ Ռամիզ Մելիքովը հայտարարում է բառացիորեն հետևյալը. «Առաջիկա 25-30 տարում Հարավային Կովկասում Հայկական պետություն չի լինի: Այդ ազգը գլխացավանք է եղել իր հարևանների համար և իրավունք չունի ապրելու այս տարածաշրջանում: Այսօրվա Հայաստանը ստեղծված է պատմական ադրբեջանական հողերի վրա: Ես հավատում եմ, 25-ից մինչև 30 տարում այդ տարածքները նորից կվերադառնան Ադրբեջանի իշխանության ներքո» (*Zerkalo*, 8/4/04): Ադրբեջանի երեք նախագահների օրոք նրանց արտաքին հարցերի գծով խորհրդական, պանթուրքականության ջատագով Վաֆա Գուլուզադեն այս միտքն այսպես է արտահայտում. «Հողերն ազատագրվելու են, Հայաստանը ստիպված է լինելու Ադրբեջանին վերադարձնել վերջին թիզը: **Այլապես այս տարածաշրջանում հայերի ներկայությունը հարցականի տակ է**» («Վաֆա Գուլուզադեն առաջարկում է դադարեցնել դարաբաղյան բանակցությունները». «Ազգ», 10 հուլիս 2002): Գուլուզադեի համար կա Ղարաբաղյան հարցի լուծման միայն մի տարբերակ՝ դուրս քշել հայերին «ամբողջ Ադրբեջանից» (տե՛ս Azeri ex-adviser says Armenians should be driven out of Karabakh, *Azadliq*, Baku, 10 October 2001, p. 4).

րորդ ուժերի համար:

Հայագիտության արտադրանքի նշանակությունը տարբեր է հայության և օտարների համար:

Հայությանը հայագիտությունը տալիս է մի կողմից՝ ինքնաճանաչում (որն արթնացնում և մոբիլիզացնում է ազգի ներուժը), մյուս կողմից՝ արտաշխարհում իր վիթխարի պատմական-մշակութային ժառանգությամբ ըստ արժանվույն ներկայանալու հնարավորություն (որը բարենպաստ արտաքին միջավայրի ստեղծման գրավականներից է):

Եվ հակառակը. օտար ուժերին հայագիտությունն ընձեռում է մի կողմից՝ հայությանը հասկանալու և նրա վրա ներազդելու արդյունավետ միջոց, մյուս կողմից՝ արտաշխարհում հայության ու հայկական հարցերի շուրջ *իրենց համար* ցանկալի միջավայր ստեղծելու հնարավորություն: Ինչպես թուրք-ադրբեջանական գոեհիկ «հայագիտությունը», այնպես էլ հայկական հարցերում դրան քողարկված կերպով սատարող ամերիկյան կեղծ-հայագիտական դպրոցը նպատակ ունեն հասնելու նշված խնդիրներին հայոց անցյալի և ներկայի աղճատման ու կեղծարարության միջոցով: Մա նշանակում է, որ հայրենի հայագիտության ուսերին է ընկնում մի լրացուցիչ խնդիր՝ միջազգային ասպարեզում ու նաև բուն հայկական միջավայրում թուրք-ադրբեջանական հակագիտական ու հակահայկական քարոզչության չեզոքացման խնդիրը:

Խնդիրը դիտելով այս իրողությունների համատեքստում՝ կարելի է եզրակացնել, որ *հայության համար* հայագիտությունը կենսական և ինքնապաշտպանական մի շարք կարևոր խնդիրներ լուծող, ռազմավարական նշանակություն ունեցող գիտական համակարգ է:

Կարելի է տալ և փոքր-ինչ այլ ձևակերպում՝ հայության համար հայագիտությունը ինքնապաշտպանական գիտական համակարգ է, իսկ հայության դեմ պայքարող ուժերի համար՝ հարձակողական կեղծ-գիտական համակարգ:

4. Հայագիտությունը որպես դիմադրության անհամաչափ (ասիմետրիկ) միջոց

Միջազգային քաղաքական համակարգն ապրում է մշտական ձևափոխումներ, պարբերաբար այս կամ այն ազգին ոտքի կանգնելու, տասնամյակներով ու դարերով չլուծված խնդիրներ լուծելու, վաղնջական իդձերն ու երազանքներն իրականացնելու հնարավորություն է տալիս: Այդ պահերին շատ բան կախված է լինում տվյալ ազգի ոգուց, մտավոր ու ֆիզիկական պատրաստվածությունից, հավաքական ներուժն արագ զինվորագրելու կարողությունից: 1375թ. Կիլիկյան Հայաստանի կործանումից հետո օտար ուժերի դեմ երկարատև լինել-չլինելու պայքարի մեջ գտնվող հայության համար այդպիսի պատմական իրադրություններ ստեղծվել են ընդամենը երեք անգամ՝ 1722-1735թթ., 1890-1921թթ. ու 1988-ից մինչև այժմ ընկած ժամանակահատվածում: Մենք դեռևս ապրում ենք ազգային-ազատագրական չավարտված պայքարի ու գրեթե անխուսափելի գալիք պատերազմի նախապատրաստման շրջանում:

Այսպիսի պայմաններում Հայաստանը՝ որպես փոքր և թույլ պետություն, հաճախ ստիպված է զիջումների գնալ քաղաքական ու տնտեսական այլազան հարցերում: Բայց հայ ազգի գաղափարախոսական ու բարոյահոգեբանական հիմքում ընկած պատմական փորձի և հիշողության աղավաղման հարցերում զիջումներն անթույլատրելի են: *Իրականում, որքան ստիպված լինենք զիջել քաղաքական բնագավառում, այսինքն՝ որքան ավելի չլուծված խնդիրներ թողնենք ապագային, ճիշտ նույն չափով էլ պետք է ավելի վառ պահենք ազգային ոգին, որը հիմնված է ազգի պատմական փորձի ճշմարիտ բացահայտման, ընկալման և յուրացման վրա:* Հետագայում միայն ազգային ոգու բարձր լինելու դեպքում կարելի կլինի վերականգնել տնտեսությունը և ամուր պետություն կառուցել:

Գիտությունն այն բնագավառն է, որը սկզբունքային հնարավորություն է ընձեռում ապացուցել սեփական ճշմարտությունը, դիմադրել զանազան ճնշումներին և, անկախ դիմացի ուժերի քանակական կամ այլևայլ ռեսուրսների գերակշռությունից, հաղթանակել՝ հենվելով ընդամենը մեկ վերացական թվացող հասկացության՝ ճշմարտության վրա: Իսկ երբ հայոց պատմության հանգուցային հարցերում դրսից թելադրվում են քաղաքական նպատակների լուծմանը միտված՝ աղավաղված մեկնաբանություններ ի հաշիվ ճշմարտության, ի հաշիվ հայոց ազգային արժանապատվության և դրանք ընդունվում են առանց քննադատության (այսինքն՝ առանց դիմադրության), ապա դրանով իսկ կոտրվում է ազգի բուն ոգին՝ զրկելով հայությանը հետագա ավելի բարենպաստ պայմաններում իր մեջքը շտկելու հնարավորությունից: Ոգու ջարդից հետո այլևս պետք չեն ֆիզիկական ջարդեր. ոգով ջարդված ազգը չի պայքարի ո՛չ իր ազատության ու անկախության, ո՛չ էլ մարդկային ու սոցիալական իրավունքների համար:

Այսպիսով՝ հայագիտությունն ունի կրթադաստիարակչական, քաղաքական և գաղափարախոսական հույժ կարևոր նշանակություն: Հայագիտության արդյունքները դրվել, դրվում ու դրվելու են բոլոր տեսակի և երանգի հայ քաղաքական գաղափարախոսությունների հիմքում:

5. Հայագիտության զարգացման հին ու նոր խոչընդոտները

Արդի հայագիտության բնականոն զարգացմանը խոչընդոտում են հին՝ ժառանգված և նոր՝ մեծ մասամբ արհեստականորեն ներմուծված խնդիրներ, որոնք կարելի է գատել հետևյալ հիմնական խմբերի.

ա) XIX դարի վերջի-XX դարի սկզբի արհեստական և ապակողմնորոշող գերքննադատության ցայսօր զգացվող բացասական արդյունքները,

բ) արևմտյան, հատկապես՝ ամերիկյան հայագիտության կողմնակալ, քաղաքականացված ու հաճախ թուրքամետ արտադրանքը,

գ) խորհրդային շրջանի պարտադրված կոմունիստական գաղափարախոսության մնացորդային ծանր հետևանքները,

դ) այս ասպարեզում պետական համակարգված քաղաքականության բացակայությունը:

Մանրամասներն են:

Ա. Գերքննադատության արդյունքները. - Հայկական պատմագրության հիմնասյուները՝ Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի և Եղիշեի երկերը (և ոչ միայն դրանք) XIX դարի վերջին-XX դարի սկզբին ենթարկվեցին պատմաբանասիրական գերքննադատության, որի սկիզբը դրեցին եվրոպական ու ռուսական արևելագիտական դպրոցները, այնուհետև նրանց սկսեցին ձայնակցել հայ մասնագետներից շատերը: Կոպիտ, գոեհիկ և անհարկի հարձակումների արդյունքում հայոց ոսկեդարյան գրականության գրանցած բազմաթիվ թանկարժեք փաստերը հռչակվեցին սուտ ու կեղծ: Վերանայման ենթարկվեցին հայոց պատմության բազմաթիվ հիմնահարցեր: Արդյունքում՝ աղճատվեց ինչպես հայոց հավաքական հիշողությունը, այնպես էլ հայոց պատմության մասին միջազգային հանրության պատկերացումը:

Գերքննադատության հաջորդ ծանր հետևանքն էր այն, որ, «օբյեկտիվ գիտության» քողի ներքո, հայագիտության ասպարեզ ներմուծվեցին հայոց ազգային արժանապատվությունը մեթոդաբար վիրավորելու կանոնն ու սովորույթը: Արևմտյան արևելագիտությունն ընդունելի էր համարում և ամեն կերպ խրախուսում էր «օբյեկտիվ հայագետի» այնպիսի կերպար, որը տառապում է օտարամոլությամբ՝ ի հաշիվ հայոց պատմության ու քաղաքակրթության կանոնավոր նսեմացման ու պախարակման: Իսկ ազգային շահերի գիտական պաշտպանությունը, ընդհակառակը, սկսեց դիտվել որպես նեղճակատ ազգայնամոլության դրսևորում ու նահանջ «իսկական գիտական» սկզբունքներից:

Բ. Ամերիկյան հայագիտության արտադրանքն ու ազդեցությունները. - Վերջին հինգ տասնամյակում բազմաթիվ հատորներով հրապարակ իջած ամերիկյան «հայագիտությունը» իսկական պատերազմ է սկսել հայոց ինքնության հիմքում ընկած պատմական խորհրդանիշների դեմ:

Բանն այն է, որ ամերիկյան «հայագիտությունը» ստեղծվել և զարգացել է սառը պատերազմի տարիներին և փաստորեն այդ պատերազմի հասակակիցն է: Ամերիկյան կեղծ-հայագիտությունը գործել է, հիմնականում, ամերիկյան սովետոլոգիայի քաղաքական հովանու և վերահսկողության տակ: Մյուս կողմից՝ այն արևմտյան, հատկապես բրիտանական (պակաս չափով՝ ֆրանսիական ու գերմանական) արևելագիտության ժառանգն է: Ամերիկյան «հայագիտությունը» ծնած և սնած այս երկու խոշոր դպրոցներն էլ խիստ քաղաքականացված են, երկուսն էլ, առաջնորդվելով ԱՄՆ և եվրոպական գերտերությունների աշխարհաքաղաքական շահերով, ավանդաբար, միշտ եղել են թուրքամետ, ռուսատյաց և, ածանցյալ կերպով, հայատյաց:

Այսպես՝ ամերիկյան «հայագիտությունը»՝

1. հայտարարում է, որ հայերը Հայկական լեռնաշխարհի ոչ թե բնիկ, այլ եկվոր տարր են,
2. փորձում է անջատել և իսպառ օտարել Հայաստանի պետականության հզորագույն ուրարտական շրջանը (մ.թ.ա. IX-VI դարեր) հայ ժողովրդի պատմությունից, մշա-

- կույթից ու հավաքական հիշողությունից (ցավոք, այս կետում ամերիկյան «հայագիտությունն» ունի բազմաթիվ դաշնակիցներ եվրոպական, նախկին խորհրդային և խորհրդահայ պատմագրության միջավայրում),
3. սևացնում է Հայոց պատմության և մշակույթի մեծ գործիչներին. պատմահայր Մովսես Խորենացուն բնութագրում է որպես «լկտի և կեղծարար խաբեբա», Եղիշեին՝ ստախոս, Վարդան Մամիկոնյանին՝ «ոչ հայրենասեր» ֆեոդալ, Մեսրոպ Մաշտոցին՝ «մի քրիստոնյա քահանա, որը չի ունեցել հայրենասիրական նպատակներ» և այլն,
 4. պատմական հավաստի նյութից զուրկ, հնարովի և շինծու ստեղծագործություններ է կոչում հայոց հավաքական հիշողության հիմնաքարերը՝ Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն»-ները, Եղիշեի «Վարդանանց պատերազմը», ինչպես նաև հայկական պատմագրության ուրիշ անգին աղբյուրներ,
 5. հայկական մշակույթը որակում է որպես ինքնուրույն արժեք չներկայացնող, օտար փոխառությունների մի հավաքածու,
 6. հայոց հին ու միջնադարյան պետականությունը ներկայացնում է որպես թույլ և անարյուն գոյություն,
 7. նեղացնում է պատմական Հայաստանի սահմանները,
 8. անտեսում կամ ժխտում է հին և միջնադարյան Հայաստանի ռազմական ուժն ու միջազգային կշիռը,
 9. կեղծում է Հայաստանի պատմական ժողովրդագրությունը և տարբեր ժամանակահատվածներում հայերին անհիմն կերպով փոքրամասնություն հռչակում,
 10. հռչակում է Արցախը ոչ թե միջնադարյան Հայաստանի, այլ Կովկասյան Աղվանքի մաս և, միաժամանակ, արդի Ադրբեջանն էլ՝ Աղվանքի «իրավահաջորդ»,
 11. ամերիկյան հայագիտական դպրոցի որոշ կարկառուն դեմքեր նույնիսկ ժխտում են երիտթուրքերի՝ հայերին բնաջնջելու հստակ նպատակ ունենալը և Հայոց ցեղասպանության պետականորեն ծրագրված լինելը¹:

Կեղծ-հայագիտության արտադրանքը Արևմուտքում Հայաստանի ու հայության դեմ անդադար ու մեթոդաբար տարվող թուրքամետ քարոզչական արշավի բաղկացուցիչ մասն է: Հայ ազգի խորհրդանիշների դեմ պայքարը չի էլ թաքցվում: Օրինակ՝ Ռ.Սյունին, իր իսկ խոստովանությամբ, փորձում է «կազմալուծել» Հայաստանի պատմական տարածքների պահանջատիրության հիմքում ընկած՝ հայոց պատմության ավանդական «ըմբռնումը կազմող հավատալիքների հավաքածուն»²: Հայաստանի արտակարգ և լիագոր

¹ Տե՛ս *Արմեն Այվազյան*, «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն» («Արտագերս», Երևան, 1998): «Ավարայրի անանցանելի խորհուրդը (հարցազրույց պատմաբան-քաղաքագետ Ա. Այվազյանի հետ)», «Երկիր» (օրաթերթ), մայիսի 30, 2001: *Արմեն Պետրոսյան*, «Ջեյմս Ռասելի «հայագիտական» հնարանքները», *Պատմա-բանասիրական հանդես*, 2000: *Հակոբ Զաքրյան*, «Միջին դարի գիտաժողովում կասկածի տակ է դրվել Հայոց ցեղասպանությունը (Միջուրբահայ որոշ գիտնականներ նպաստել են դրան)», «Ազգ», 6 ապրիլ 2002:

² Ronald Grigor Suny, «Looking toward Ararat: Armenia in Modern History» (Bloomington: Indiana University Press, 1993), pp. 4-5.

դեսպան, ԱՄՆ քաղաքացի Ջիվան Թաբիբյանը երկրորդում է Սյունիի մտքերը՝ ասելով, թե հայության մտայնության մեջ տեղ ունեցող «յուրաքանչյուր ընդունված տեսակետ, յուրաքանչյուր կարգախոս, յուրաքանչյուր քննադատությունից դուրս գտնվող գաղափար և անձ պետք է մանրամասն գննել, ստուգման ենթարկել, վիճարկել, քննարկել, ապա դրանց մարտահրավեր նետել»¹:

Արևմուտքում հայոց քաղաքակրթությունն ու մշակույթն այնչափ աղճատված ու նսեմացված են ներկայացվում, որ անգլերենով ընթերցող սփյուռքահային կարող են հիասթափեցնել իր հայ լինելուց անգամ:

Բերենք այս չդադարող հակահայկական քարոզչության երկու ամենաթարմ օրինակ:

2004թ., Մաթյու Քարանյանի և Ռոբերթ Քուրքյանի խմբագրությամբ, լույս տեսավ Հայաստան և Արցախ այցելող զբոսաշրջիկների համար նախատեսված շքեղ մի «Ուղեցույց»՝ «*The Stone Garden Guide: Armenia and Karabagh*» (*Stone Garden Productions, Los Angeles/Yerevan*): «Ուղեցույցը» նմանատիպ խիստ կարևոր ձեռնարկների շարքում, թերևս, առավել ամբողջականն ու պրոֆեսիոնալն է: Եվ ճիշտ այս աննախադեպ ձեռնարկի մեջ կատարված է հերթական հակահայկական դիվերսիան՝ պատմության հատվածը, խայտառակ բովանդակությամբ, գրել է տիսահոռակ Ռոնալդ Սյունին: Գրվածքը լեցուն է կեղծ-հայագիտության վերոհիշյալ դրույթներով: Նշենք դրանցից մի քանիսը.

- Սյունին «ավելի քան 100.000 քառ. մղոն» (իմա՝ շուրջ 160.000 քառ. կմ) է հաշվում պատմական Հայաստանի տարածքը, այսինքն՝ ուղիղ կիսով չափ փոքրացնում է այն²:
- Նորից հայերին համարում է «Ուրարտուի անկումից քիչ անց, հավանորեն, արևմուտքից ժամանած, հնդեվրոպական լեզվով խոսող» եկվորներ՝ «նախահայեր», որոնք «միախառնվեցին տեղական ժողովուրդների հետ» (*Shortly after the fall of Urartu, the Indo-European-speaking proto-Armenians migrated, probably from the West, onto the Armenian plateau and mingled with the local peoples*)³:
- Հերթական անգամ ապատեղեկացնում է, թե իբր «հայերն առաջին անգամ հիշատակված են Բեհիսթունյան արձանագրության մեջ»⁴:
- Ավելին, Սյունին պնդում է, թե իբր «գուտ հայկական մշակույթը, կարելի է ասել, սկիզբ է առնում քրիստոնեության ընդունումով» (*A distinctly Armenian culture may be said to begin with the conversion to Christianity*)⁵: Սրանով Սյունին, փաստորեն, մերժում է հայկական ինքնություն մշակույթի ու, հետևաբար, ինքնության գոյությունն ընդհուպ մինչև 4-րդ դար, որն անհերթություն է:

¹ [Every assumption, every shibboleth, every sacred cow must be scrutinized, tested, argued, debated and challenged]. – Ambassador Jivan Tabibian, «The Risk of Democratization: Reforming Diaspora institutions will require freeing them from each other's clutches, and insuring their autonomy», *Armenian International Magazine*, August-September 1999 (Vol. 10, ¹ 8&9), p. 33.

² Matthew Karanian and Robert Kurkjian, «*The Stone Garden Guide: Armenia and Karabagh*» (Stone Garden Productions, Los Angeles/Yerevan: 2004), p. 23.

³ Ibid. Քննադատությունը տե՛ս Մ. Այվազյան, «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն», էջ 21-26:

⁴ M. Karanian and R. Kurkjian, «*The Stone Garden Guide*», p. 23.

⁵ Ibid, p. 24.

- Անդրադառնալով 450-451թթ. հայ-պարսկական պատերազմին՝ Սյունին այն տպավորությունն է ուզում ստեղծել, թե Վարդան Մամիկոնյանը և իր զինակիցները բոլորովին էլ հայրենիքի սիրով վառված չեն եղել, այլ կռվել են զուտ իրենց հոգիների փրկության համար: Եվ միայն հետագա դարերում են նրանց վերագրել հայրենասիրական նկրտումներ: Ահավասիկ. «Գրողների հետագա սերունդները Եղիշեի հայոց նահատակներին վերածեցին ազգի հայրենասեր պաշտպանների, որոնք սիրել են իրենց հայրենիքի՝ Հայաստանի հողը: Մինչդեռ նրանք հիմնականում մտահոգված էին փրկություն և հավերժություն ստանալով» (*Later generations of writers turned the Armenian martyrs of Yeghishe, who were largely concerned about salvation and eternity, into patriotic defenders of the nation who loved the soil of their motherland, Armenia*)¹:
- Մովսես Խորենացին նշված է իբրև 8-րդ դարի հեղինակ²:
- Մովսես Խորենացու հայտնի «Թեպետ և փոքր ածու ենք...» խոսքը մեջբերված է Ռ.Թոմսոնի աղճատված թարգմանությամբ, թեև Սյունին հրաշալի ծանոթ է այդ քաղաքականապես վնասակար կեղծիքի ինչպես բացահայտմանը, այնպես էլ ճիշտ թարգմանությանը³:
- Սյունին ներկայացնում է հայոց միջնադարյան պետությունը որպես մշտապես միմյանց ու իրենց թագավորների հետ կռվող «փոքր թագավորություններ և իշխանություններ», և իբր «հայերը հազվադեպ են մեկ ընդհանուր միապետի կառավարման տակ եղել»⁴:
- Ըստ Սյունու՝ Կիլիկյան «Հայաստանի վերջին թագավորները, փաստորեն, ավելի շատ ֆրանսիացի էին, քան հայ» (*The last kings of Armenia were, in fact, more French than Armenian*)⁵:

Այս «Ուղեցույցը», անշուշտ, կունենա հազարավոր արտասահմանցի, ներառյալ սփյուռքահայ ընթերցողներ, ուստի դժվար չէ պատկերացնել հայոց պատմության այդպիսի ներկայացման բացասական ազդեցությունը:

Նույն Ռ.Սյունին 1999թ. Սթանֆորդի համալսարանի պրոֆեսոր Դեյվիդ Լեյթինի հետ համատեղ հրապարակեց «Հայաստան և Ադրբեջան. Ղարաբաղից ելքի փնտրտուք» ընդարձակ հոդվածը, որտեղ արդեն շարադրված է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մի «ծրագիր»⁶: Այդ 13 կետանոց ծրագրի համաձայն, Արցախի հայության ինքնապահպանման ամենահուսալի երաշխիքը՝ նրա պաշտպանության բանակը, պետք է լուծարվի, զինվորական ստորաբաժանումների փոխարեն արցախցիները պետք է բա-

¹ Ibid, p. 25.

² Ibid, p. 25.

³ Ibid, p. 25. Մանրամասն քննադատությունը տե՛ս *Ս.Սյվլազյան*, «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ», էջ 136-143:

⁴ *M. Karanian and R. Kurkjian, «The Stone Garden Guide»*, p.25. Այս հայտնի թուրքական տեսակետի քննադատությունը տե՛ս *Ս.Սյվլազյան*, «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ», էջ 36-37:

⁵ Ibid, p. 27.

⁶ *David D. Laitin and Ronald Grigor Suny, «Armenia and Azerbaijan: Thinking a Way Out of Karabakh»*, *Middle East Policy*, Vol. VII, October 1999, №1).

վարարվեն նորաստեղծ ոստիկանությամբ (կարծես այժմ չունեն), Ստեփանակերտի կառավարական շենքի վրա պետք է ծածանվի Ադրբեջանի դրոշը, նույն շենքում պետք է նստի Բաքվից նշանակված ներկայացուցիչը, Շուշին պետք է դառնա կիսով չափ հայկական, կիսով չափ ադրբեջանական քաղաք, մինչդեռ «Ղարաբաղից դուրս Ադրբեջանում գտնվող նախկին հայկական քաղաքական միավորները, ինչպես, օրինակ, Շահումյանի շրջանը, հայերի համար կորած կհամարվեն» (*Former political Armenian enclaves outside Karabakh in Azerbaijan, like the Shahumian district, would be lost to Armenians*): Հետագայում այս դրույթը «միս ու արյուն» ստացավ դիվանագիտական ասպարեզում, մասնավորապես, Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (PACE) 2005թ. հունվարին ընդունած Դեյվիս-Աթլինսոնի տխրահռչակ բանաձևում, որը, ի տարբերություն ադրբեջանցի տեղահանված անձանց, անտեսում է հայ փախստականների՝ իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու իրավունքը¹:

Այս ենթախորքում ամենագովեշտականը Սյունի-Լեյթինի առաջարկած ծրագրի 4-րդ կետն է՝ «ադրբեջանցի զինվորներին ու ոստիկանությանը կթույլատրվի մտնել Ղարաբաղի Հանրապետության տարածք միայն Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանին ընդունելի պայմանների հիման վրա» (*4. Azerbaijani soldiers or police would be allowed on the territory of Republic of Karabakh only under conditions acceptable to the parliament of the Republic of Karabakh*): Սա արդեն ոչ այլ ինչ է, եթե ոչ նոր պատերազմի նախապատրաստում, քանի որ հե՛նց այդպիսի կետերը, եթե, իհարկե, դրանք ընդունվեն և գործադրվեն (ինչը պետք է ամեն գնով բացառել), կարող են դառնալ հակահայկական նոր ջարդերի հիմք, ինչպես այդ եղավ Շուշիում 1920թ. մարտին:

Ցավոք, ո՛չ ԱՄՆ-ում, ո՛չ այլուր չկա հայկական որևէ լուրջ դիմադրություն նմանատիպ հակահայկական քարոզչությանը²: Որևէ ամերիկահայ կազմակերպություն, որևէ ամերիկահայ գիտնական դեռևս չի համարձակվել պատշաճորեն պատասխանել Սյունու և շատ ուրիշների հարձակումներին հե՛նց նույն այն հեղինակավոր պարբերականներում, որտեղ լույս են տեսնում նման նյութերը:

Ամերիկյան «հայագիտության» ենթակառուցվածքն ու կադրերն ունեն հետևյալ բնորոշ հատկությունները.

ա) շոայլ հովանավորություն ու հզոր պատվիրատու՝ ի դեմս ԱՄՆ պետական շահերը պաշտպանող միջանկյալ օղակների և անհատների,

բ) երկարաժամկետ ծրագրավորում,

գ) տեսական-գաղափարական նախապես գծված հստակ շրջանակներ,

դ) կարծր վերահսկողություն իրենց տիրույթում գործող հայագետների, իսկ այժմ՝ արդեն բոլոր հայագետների վրա,

ե) կադրերի նպատակային պատրաստում,

զ) բավականին սերտ ու հաճախադեպ ներքին կապերի ապահովվածություն:

¹ Александр Манасян, «Резолюция PACE – это призыв к войне», «Голос Армении», 10 февраля 2005.

² Հայաստանում այն տողերիս հեղինակի՝ «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ» մենագրության 1998թ. լույսընծայմամբ այդպիսի դիմադրության հիմք ստեղծեց:

Միյունքի ամենահարուստ ու քաղաքականապես փոքրիշատե կազմակերպված համայնքը՝ ամերիկահայությունը, մասամբ լիովին անտեղյակ է Հայոց պատմությանն ու մշակույթին, մասամբ էլ՝ օտար ուժերի մշակված կեղծ տեսությունների և, ըստ այդմ էլ, հայավնաս գաղափարախոսության ազդեցության տակ է: Ամերիկահայության այսպիսի տխուր վիճակը մեծապես ազդում է ոչ միայն մյուս հայ գաղթավայրերի վրա, այլև սպառնում է ներառել Ռուսաստանի և նույնիսկ Հայաստանի երիտասարդությունը, որի մի զգալի մասն այս կամ այն չափով արդեն իսկ ամերիկյան կենսաձևի և մշակույթի ազդեցության տակ է:

Գ. Գաղափարականացվածության և արտաքին թելադրանքի ազդեցությունը խորհրդահայ պատմագրության վրա. - Խորհրդային պայմաններում հայազգիտությունն ունեցավ մեծ, բայց և չափազանց հակասական զարգացում:

Մի կողմից՝ ստեղծվեցին հայազգիտական մի շարք խոշորագույն հիմնարկներ, որոնք ապահովվեցին կադրերով ու նյութաֆինանսական անհրաժեշտ բազայով: Աշխատանքային բավականին լավ պայմանների տևական՝ շուրջ յոթ տասնամյա գոյությունը թույլ տվեց ստեղծել մի շարք հիմնարար հայազգիտական աշխատություններ, ինչպես նաև պատրաստել հարյուրավոր որակյալ կադրեր: Խորհրդային Հայաստանում ստեղծվել և գործում էր հայազգիտության ամենահզոր օջախը, որը խոշորագույն ներդրում ունեցավ հայոց պատմության և մշակույթի ուսումնասիրության մեջ:

Մյուս կողմից՝ Խորհրդային կայսրության մաս կազմող Հայաստանում հայազգիտությունը ենթակա էր Կրեմլի քաղաքական ու գաղափարական դաժան վերահսկողությանն ու թելադրանքին: Հայոց պատմության ու մշակույթի հին, միջնադարյան, նոր ու նորագույն շրջանի բազմաթիվ հիմնահարցերի ազատ և անկաշկանդ հետազոտումն անհնար էր: Փոխարենը՝ հայաստանցի մասնագետները պարտադրված էին աշխատել մոսկովյան ու լենինգրադյան արևելագիտական կենտրոններից ներմուծված «գիտական» կաղապարների շրջանակներում կամ կատարել քարոզչական նպատակներ հետապնդող՝ քաղաքական պարզունակ պատվեր:

Հայազգիտության մեջ միակողմանիորեն և արհեստականորեն զարգացվող «գիտական» այդպիսի ուղղություններից ու հիմնահարցերից նշենք մի քանիսը.

- հայերն իրենց հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում հռչակվել էին եկվորներ,
- Ուրարտուն համարվում էր հայ ժողովրդի պատմության հետ ընդամենը կողմնակի, հպանցիկ կապ ունեցող պետություն,
- Հայաստանի տնտեսական ու սոցիալական ողջ պատմությունը քննվում էր միմիայն մարքս-լենինյան տեսության շրջանակներում: Մասնավորապես՝ խիստ ուռճացվում էր դասակարգային պայքարի նշանակությունն ու դերը հասարակության զարգացման մեջ,
- հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը ներկայացվում էր միակողմա-

նի դրական մոտիվներով,

- XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազատագրական շարժման պատմությունը կամ լռության էր մատնվում, կամ՝ անասելիորեն աղճատվում,
- ամբողջովին կեղծվում էին Հայաստանի առաջին հանրապետության պատմությունը, ներառյալ՝ հայ-թուրքական, հայ-ադրբեջանական ու հայ-վրացական հարաբերությունները,
- Խորհրդային Միության, ներառյալ Խորհրդային Հայաստանի պատմությունը նույնպես մատուցվում էր խիստ գունազարդված ու մեծ աղավաղումներով,
- ցեղասպանությանն անմիջականորեն հետևած տասնամյակներում հայությանը պարզապես արգելվեց ազատորեն անդրադառնալ իր կորուստներին, մտածել ապաքինման ուղիների մասին:

Հայ հասարակական մտքի զարգացման վրա հատկապես բացասաբար անդրադարձավ վերջին հարյուրամյակի պատմության կեղծումը, քանի որ այդպիսով հայությունը, փաստորեն, զրկվում էր ներկա դրությունը իրապաշտորեն գնահատելու և իր անելիքներն ըստ այդմ որոշելու հնարավորությունից:

Այսպիսով, խորհրդային պայմաններում անհնար էր մշակել (առավել ևս՝ կիրառել) ազգային շահերին համապատասխանող՝ հայագիտության զարգացման ռազմավարություն: Բնականաբար, հայոց պատմության քաղաքական հայեցակարգը, նրա զարգացման տեսական ու գաղափարական հիմքերը շարունակում էին մշակվել ու Հայաստան ներմուծվել հիմնականում դրսից՝ խորհրդային գաղափարախոսության մշակման կենտրոններից:

Այս ամենը թույլ չտվեց խորհրդային հայագիտությանը հասնել ազգային շահերի գիտակցման վրա խարսխված՝ ինքնուրույն գիտական դպրոցի մակարդակին:

Դ. Ազգային-պետական հովանավորության մերօրյա պակասն ու դրա հետևանքները. - Նկատենք, որ հայագիտության, ներառյալ հատկապես պատմագիտության, մերձագույն կապերը գաղափարախոսության հետ բերել էին նրան, որ խորհրդային պայմաններում առանձնահատուկ՝ «մանրադիտակային» վերահսկողություն էր հաստատվել այդ ոլորտներում աշխատող գիտնականների, նրանց գրածի և դասավանդածի նկատմամբ: Ենթարկվելով գաղափարախոսական մամլիչին և արհեստական ընտրությանը՝ հայագետները դարձան հայ մտավորականության քաղաքականապես, թերևս, ամենակրավորական շերտերից մեկը, մինչդեռ բնական պետք է լիներ հակառակը: Ավելին՝ հայագիտության ղեկավարությունն ի պաշտոնե կուսակցական գաղափարախոսության ու պետական քաղաքականության ամենաջերմ պաշտպանն էր, անգամ եթե այդ քաղաքականությունը հակասում էր ազգային շահերին (բացառություններ, իհարկե, եղել են):

1988թ. սկսված Ղարաբաղյան հուժկու շարժումը ներգրավեց ժողովրդական լայն խավերին, ներառյալ մտավորականությանը, այդ թվում՝ հայագետներին: Անկախության

առաջին տարիների հույսերն ու ոգևորությունը, Արցախյան հերոսամարտը հայազետներին դեռևս պահում էին ազգային-պետական շահերի պաշտպանման դիրքերում: Սակայն 1995թ. հետո սկսված խաղաղության շրջանը եկավ խորտակելու հայազետների՝ պետական հովանավորություն ստանալու բոլոր հույսերը: Մինչդեռ դրսից ֆինանսական օժանդակությունը չուշացավ, ու հայազետներից շատերին իրենց հովանավորության տակ վերցրին արևմտյան աշխարհաքաղաքական շահերը հետապնդող՝ սառը պատերազմի տարիներին կոռ կազմակերպվածություն ստացած կեղծ-հայազիտական կառույցները:

Սակայն Հայաստանի նորանկախ պետությունը հայազիտությունը ոչ միայն առանց ֆինանսական աջակցության, այլև առանց քաղաքական ու գաղափարախոսական ուղղվածության խոր վերանայման թողեց, որ, թերևս, առավել վտանգավոր է: Հայաստանի պետությունը հրաժարվեց ակադեմիական հաստատությունների հետ կազմակերպել ու ծրագրավորել հայազիտության զարգացման աշխատանքները, դրանով իսկ հայազիտության զարգացումը, փաստորեն, մատնեց ինքնահոսի, իսկ ավելի ստույգ՝ դրսից կառավարելի և ուղղորդվող մի վիճակի:

Հատկապես պատմագիտության զարգացման համար չափազանց բացասական հետևանքներ ունեցավ այն, որ ոլորտի ղեկավարությունը թողնվեց կոմունիստական շրջանում ազգային շահերը բազմիցս ոտնահարած ֆունկցիոներ պատմաբանների ձեռքում: Մի՞թե զավեշտական չէ, որ խորհրդային շրջանում «գաղափարական պարտադրանքի» և սահմանափակումների մասին այժմ ճամարտակում է պատմագիտության մեջ կոմունիստական քաղաքականությունը կուրորեն կենսագործողներից մեկը՝ արդի հայազիտության թիվ 1 «ղեկավար», ակադ. Վլ. Բարխուդարյանը¹: Որքա՛ն ուժեղ բարոյազրկող պատգամ է հասարակազետների երիտասարդ սերնդին. «Կեղծեք, որքան կարող եք, քծնեք այսօրվա հզորներին, և եթե նույնիսկ վաղը տերերը փոխվեն, դուք կքննադատեք ձեր իսկ արածը՝ կարծես այդ ամենի հետ կապ չեք էլ ունեցել: Ու որևէ մեկը ձեզ դրա համար չի կշտամբի: Դուք նորից կլինեք ձիու վրա»:

Հայաստանի հայազիտության այսօրը

Արդյունքում՝ հակառակ շատ ավելի մեծ գիտական իր կարողականությանը՝ Հայաստանի հայազիտությունն այսօր տխուր կացության մեջ է: Այն՝

1. գուրկ է միասնությունից և չունի ներքին համերաշխություն,
2. բերված է խիստ հատվածական, կոտորակված մի վիճակի, երբ նույնիսկ միևնույն ինստիտուտների աշխատակիցներն ու աշխատանքային խմբերը միմյանց հետ գործնական կապեր չունեն,
3. գործում է առանց զարգացման ընդհանուր հայեցակարգի,
4. հայազիտական առանձին կառույցների աշխատանքները չեն կոորդինացվում,

¹ Հայազիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները (զեկուցումների ժողովածու), Միջազգային համաժողով, Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003, էջ 74:

5. հայագիտության զարգացումը չի ծրագրվում ու համադրվում՝ իր առաջնահերթություններով, ուղղություններով, թեմատիկայով, եղանակներով: Ավելի ստույգ՝ այժմ հայաստանյան հայագիտությունն աստիճանաբար ենթարկվում է ամերիկյան «հայագիտության» ռազմավարական ծրագրավորմանը,
6. չունի հեղինակավոր, արդի պահանջներին համապատասխանող ղեկավարություն, որն ի վաճակի կլինե՞ր մշակել և իրականացնել հաջող զարգացումն ապահովող քաղաքականություն: Ընդհակառակը՝ հայագիտության ղեկավարության վերին և միջին զգալի շերտեր կոռումպացված են և բարոյագրկված¹,
7. տազնապալի իրավիճակ է ստեղծվել հայագետների նոր սերունդ պատրաստելու բնագավառում: Ոլորտում տիրող ֆինանսական անապահովությունը հնարավորություն չի տալիս խոստումնալից երիտասարդներին ընտրել գիտական կարիերա կամ շարունակել այն²,
8. միտված է ավելի դրսի, քան ներսի հետ համագործակցության. հայագետներից շատերը վերցված են արևմտյան աշխարհաքաղաքական շահեր հետապնդող կեղծ-հայագիտական կառույցների հովանավորության տակ.
9. չունի պետական կամ ազգային լուրջ հովանավորություն,
10. անհաղորդ է ազգային արժանապատվության պաշտպանության հույժ կարևոր խնդրին:

Վերջին դրույթի վերաբերյալ ասելիքը շատ է, սակայն հիշատակենք միայն վերջին դեպքը: Վաշինգտոնի Կոնգրեսի գրադարանում Հայաստանի և Վրաստանի գծով պատասխանատու Լևոն Ավդոյանը ՀՀ ԳԱԱ-ն անվանեց «մեռելածին» հիմնարկ, հայաստանյան պատմագիտությունը՝ «շովինիստական, անհանդուրժողական, խելագար և բացարձակ տգետ, բունիաթովական», տողերիս հեղինակին էլ՝ «ինտելեկտուալ ահաբեկչություն իրականացնող»³: Սակայն ՀՀ ԳԱԱ պատմագիտության ղեկավարներն իրենց վերաբերող անվանարկություններն անգամ անպատասխան թողեցին ու մինչ օրս էլ քար լուրջուն պահպանեցին⁴: Ավելին՝ 2004թ. մայիսին Լևոն Ավդոյանը ժամանեց Հայաստան և հրաշալի ընդունելություն գտավ բոլորի կողմից⁵:

Ազգային-պետական հովանավորությունը վերաբերում է ոչ միայն ֆինանսական

¹ *Գևորգ Յազըճյան*, «Անբարոյականությունը հայրենական հայագիտության մեջ», «Հարթակ», 24.12.2003, «Նոր Կեսնք» (Լոս Անջելես), 31.12.2003-03.01.2004, «Մոլորակ» (Լոս Անջելես), 14-20.01.2004, «Արարատ» (Բեյրութ), 23.01.2004: *Սրվեն Այվազյան*, «Գիտությունն ու կեղծիքն անհամատեղելի են», «Շրջադարձ» (Երևան), թիվ 2, մայիս, 2004: Տե՛ս նաև ծնթ. 29: Տե՛ս նաև Հավելված Է.՝ *Լևոն Մելիկ-Շահնազարյան*, «Где Кура – где мой дом?», «Голос Армении» 05.02.2004.

² «ՀՀ ԳԱԱ գիտական ու գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները 2001թ.» հաշվետվության համաձայն, 2001թ. պետությունը 2002թ. հունվարի 1-ի դրությամբ հումանիտար գիտությունների 10 բաժանմունքներին միասին վերցրած ֆինանսավորել է 141007,3 հազ. դրամով (մոտավորապես 250 հազ. ԱՄՆ դոլար):

³ Հայկազյան հայագիտական հանդես, այսուհետ՝ ՀՀՀ, Բեյրութ, 2000, էջ 480-482:

⁴ *Ասմիկ Գուլաչյան*, «Перлы скверны: Открытое письмо редколлегии «Арменоведческого журнала АЙКАЗЯН» по поводу выхода в свет 20-го тома», «Голос Армении», 6 сентября 2001. Տե՛ս Հավելված Ը:

⁵ Օրինակ, նրա բաց դասախոսությունը Հայաստանի Ամերիկյան համալսարանում, որը լայնորեն զովագովել էր ՀՀ մամուլում, անցավ առանց որևէ մեկի կողմից նրա անվանարկությունների հարցը բարձրացնելու. տե՛ս *US Library of Congress Area Specialist Dr. Levon Avdoyan Speaks at AUA, AUA Press Release*.

խնդրին, այլև անհրաժեշտ բարոյական ու քաղաքական աջակցություն ցուցաբերելուն: Հայոց պետական և ազգային կառույցները տակավին անտարբերություն են ցուցաբերում հայոց պատմության և մշակույթի՝ միջազգային ասպարեզում իրականացվող կեղծարարության նկատմամբ: Տպավորությունն այն է, որ հասարակագիտական բնագավառում պետական և ազգային կառույցները, լավագույն դեպքում, խորշում են ազգային շահերի պաշտպանությունից: Նման հարցերում շատ երկրներ վարում են սկզբունքային քաղաքականություն:

Բերենք երկու թարմ օրինակ միջազգային փորձից:

Պերուական օրինակ. - 2005թ. հունվարին Պերուի կառավարությունը շատ հստակ պաշտպանեց իր հնագետին՝ Ռուբ Շեյդիին, երբ վերջինս բողոքով հանդես եկավ երկու ամերիկացի հնագետների դեմ, մեղադրելով նրանց առանց պատշաճ հղումների իրենց եզրակացությունները հեղինակավոր *Nature* հանդեսում հրապարակելու, այն է՝ 10-ամյա վաղեմության աշխատանքից գրագողություն կատարելու մեջ: Պերուի Մշակույթի ազգային ինստիտուտի տնօրեն Լուիզ Գուիլերմո Լումբերասը նամակ հղեց Ամերիկյան հնագետների ընկերակցությանը (*Society for American Archaeology*)՝ նրա էթիկայի կոմիտեից խնդրելով հետաքննել այդ դեպքը: Պերուի մշակույթի նախարար Խավիեր Սոթա Նադալը հայտարարեց, որ ինքն ու արտգործնախարար Մանուել Ռոդրիգեսն այդ կապակցությամբ իրենց մտահոգություններն արտահայտում են Վաշինգտոնում Պերուի դեսպանության միջոցով: Արդյունքներն սպասել չտվեցին, և գրագողերին դատապարտեցին հե՛նց նույն ամերիկացի մասնագետները: Մասնավորապես՝ հանրահայտ Սմիթսոնյան ինստիտուտի գիտաշխատող, մարդաբան Բեթի Մեգերսը *National Geographic Society*-ին մի նամակ հղեց, որի վերնագիրն ամեն ինչ ասում էր՝ «Գրանտ շահած Ջոնաթան Հասսի և Վինիֆրեդ Քրիմերի անբարոյական վարքագիծը»¹:

Արդյոք երբևէ Հայաստանի կառավարությունը փորձ արե՞լ է իր լծակներն օգտագործել՝ հայոց պատմության և մշակույթի շերտերի ամբողջական զեղծումները կանխելու համար: Կամ փորձ արվե՞լ է գոնե բարոյապես սատարելու այն հայ մասնագետներին, ովքեր համարձակվել են ինքնուրույն քննադատել անդրօվկիանոսյան «հայագետներին»: Երբե՛ք: Տեղի է ունեցել ճիշտ հակառակը. օրինակ՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադ. Վլ Բարխուդարյանը և նրա լիակատար վերահսկողության տակ գտնվող պատմության ինստիտուտի տնօրինությունը, տուրք տալով ԱՄՆ հայագետների հետնաբեմային պահանջներին ու ճնշմանը, տապալել են տողերիս հեղինակի դոկտորական ատենախոսության պաշտպանությունը:

Որպեսզի ասվածը որպես անձնական կարծիք չհնչի, մեջբերենք մամուլում հրապարակված բազմաթիվ մեկնաբանություններից ընդամենը մի հատված Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սեն Արևշատյանի և Մատենադարանի գիտական խորհրդի նախագահ Վարդան Գրիգորյանի պաշտոնական գրությունից.

«[2003թ.] դեկտեմբերի 9-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական աստի-

¹ Rick Vecchio, «Plagiarism Charge Flies Over Discovery», *Associated Press*, January 22, 2005.

ճաններ շնորհող խորհրդի նիստում տեղի ունեցավ Մատենադարանի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Արմեն Մարտինի Այվազյանի դոկտորական ատենախոսության պաշտպանության **կանխորոշված և կազմակերպված տապալումը**:

...Ի՞նչն էր պատճառը Ա.Այվազյանի ատենախոսության նկատմամբ այսօրինակ արտառոց վերաբերմունքի: Բանն այն է, որ 1998թ. Ա.Այվազյանը հրապարակեց «Հայաստանի պատմության լուսաբանումն ամերիկյան պատմագրության մեջ: Քննական տեսություն» աշխատությունը, որի մեջ արդարացիորեն քննադատության էր ենթարկել մի շարք ամերիկյան հայագետների, որոնք, ձգտելով հաճոյանալ թուրքական պատմագրությանը, հետևողականորեն աղավաղում և ֆալսիֆիկացիայի են ենթարկում հայոց պատմության բազմաթիվ հիմնախնդիրներ: Փաստորեն, Ա.Այվազյանից վրեժ է լուծվում նրա հայրենասիրական, սկզբունքային դիրքավորման համար¹:

Վերադառնալով միջազգային գիտական ասպարեզում պետական մարմինների՝ հասարակագիտական հարցերին հոգածություն և անմիջական միջամտություն ունենալու անհրաժեշտությանը, նշենք միջազգային կյանքում բոլորովին նորերս արձանագրված մեկ այլ օրինակելի դեպք:

Իրանական օրինակ. - 2004թ. հոկտեմբերին լույս տեսավ ամերիկյան Ազգային աշխարհագրական ընկերակցության՝ *National Geographic Society*-ի «Աշխարհի ատլասի» 8-րդ հրատարակությունը, որում Պարսից ծոցը, բացի իր այդ հայտնի անվանումից, նշված էր մեկ այլ անվանմամբ ևս՝ Արաբական ծոց: Թեև վերջին անվանումը դրված էր փակագծերում, Իրանն այս քայլը համարեց քաղաքական ոտնձգություն և, ի պատասխան, արգելեց Իրանում այդ ընկերակցության բոլոր հրապարակումների վաճառքը: Բացի այդ, Իրանի Մշակույթի և իսլամական ուսմունքի նախարարությունը պահանջել էր, որպեսզի ատլասում ուղղվի նաև մի ծանոթագրություն, որը Պարսից ծոցի մի քանի կողմեր համարում է Իրանի կողմից «գրավված»: Ինչպես հայտարարեց վերոհիշյալ նախարարության պաշտոնյան, «Քանի դեռ *National Geographic*-ը չի ուղղել իր ատլասում Պարսից ծոցի կողմին (փակագծերում) Արաբական ծոցի գործածումը, արգելված են և՛ նրա հրապարակումները (հինգ տարբեր հանդեսներ), և՛ նրա ժուռնալիստների գործունեությունը²:

¹ Մեն Ս.Արևշատյան, *Վարդան Ռ. Գրիգորյան*, «ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահ» պրն. Ա.Թռչունյանին», «Ազգ», 23.12.2003: Այս ատենախոսության շուրջ ծավալված իրադարձությունների և դրանց դրդապատճառների մասին տե՛ս նաև հետևյալ հրապարակումները՝ «Պատմագիտության չինովնիկները: Դա վրեժխնդրություն է և խայտառակություն միաժամանակ» (Հարցազրույց ակադեմիկոս *Հրաչիկ Միսնյանի* հետ), «Հայոց աշխարհ», 12.12.2003: *Լևոն Միքայելյան*, «Спецзаказ для спецсовета», «Голос Армении» (Լևոն Միքայելյան, «Հատուկ պատվեր մասնագիտական խորհրդին»), 16.12.2003: *Սոս Մարգարյան*, *Ձորի Բալայան*, *Պերճ Զեյթունցյան*, *Լևոն Մևանյան*, «Ի պաշտպանություն ճշմարիտ գիտության», «Ազգ», 23.12.2003: *Գևորգ Յազըճյան*, «Անբարոյականությունը հայրենական հայագիտության մեջ» նշվ. աշխ.: *Ձորի Բալայան*, «Պատմությունը վառող է, որը չոր պետք է պահել», «Հայաստանի Հանրապետություն», 24.01.2004, «Ազգ», 23 և 24.01.2004: *Зорий Балаян*, «История – это порох, который надо держать сухим», «Голос Армении», 27.01.2004: *Никита Заробян*, «Профессор Вальтер Дилоян против профессора Вальтера Дилояна», «Голос Армении» («Պրոֆեսոր Վալտեր Դիլոյանն ընդդեմ պրոֆեսոր Վալտեր Դիլոյանի», «Գոլոս Արմենիի»), 31.01.2004: [*Օվաննես Ասրյան*], «Еще один ракурс...», (Հովհաննես Ասրյան, «Եվս, մեկ իանգրեճ (ռակուրս)...)» «Новое время», 17.02. 2004: *Գևորգ Յազըճյան*, «Պատասխանի իրավունքով: Շինծո՛ւ, թե՛ իրական պատմություն», «Հարթակ», 18.02.2004: *Արմեն Այվազյան*, «Գիտությունն ու կեղծիքն անհամատեղելի են», «Շրջադարձ» (Երևան), թիվ 2, մայիս, 2004: Լրացուցիչ նյութեր կարելի է գտնել ինտերնետային հետևյալ էջում www.artsakhworld.com/Armen_Aivazian/Reviews_and_Discussions/Articles_Eng.html: Տե՛ս Հավելված Թ.:

² *Nasser Karimi*, «Iran Bans Sale of Nat'l Geographic Atlas», *Associated Press*, November 23, 2004.

Իրանի կառավարության հաջորդ քայլն այն եղավ, որ շատ արագ՝ ընդամենը չորս շաբաթվա ընթացքում, ի մի բերվեցին և դեկտեմբերի 19-ին առանձին ժողովածուով հրապարակվեցին այդ տարածաշրջանի պատմական քարտեզները, որոնցում Պարսից ծոցն արձանագրված է իր միակ պատմական անվանմամբ: Կազմակերպվեց նաև հին և միջնադարյան այդ քարտեզների հատուկ ցուցահանդես, որի բացումը կատարեց Իրանի արտգործնախարար Քամալ Խարազին: Նա շեշտեց, որ Պարսից ծոցի անունը չի կարելի փոխել¹: Արաբական ծոց այն սկսել են կոչել միայն 1950-ական թթ. պան-արաբիստները՝ Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդել Նասերը, ապա և Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնը:

Այս առումով *Ստեյքհոլմ Փրեսի* թղթակիցը նկատում է, որ Իրանը «Արաբական ծոց» անվանման գործածումն իր ինքնիշխանության ոտնահարում է համարում:

Ցուցահանդեսում կար նաև *National Geographic*-ի 1990թ. թողարկած «Աշխարհի ատլասը», որտեղ Պարսից ծոցի Աբու Մուսա և Մեծ ու Փոքր Թունբ կղզիները նշված են որպես պարսկական, սակայն 2005թ. հրատարակման մեջ՝ արդեն իբրև Իրանի կողմից «գրավված» և Միացյալ Արաբական Էմիրությունների կողմից «պահանջվող»:

Ունենալով պետական հզոր հովանավորություն՝ իրանցի պատմաբանները և քաղաքագետները մի ամբողջ շարժում ծավալեցին ի պաշտպանություն Պարսից ծոցի պատմականորեն միակ ճիշտ անվանման, իրանցի երիտասարդները գորավիզ եղան նրանց՝ Ինտերնետի միջոցով ստորագրահավաք կազմակերպելով: Իրանցի քաղաքագետ Դավուդ Հերմիդաս Բավանդն իրավիճակը բնութագրեց գիտաբարոյական տեսանկյունից. «Մտավորականները, գիտնականները և բոլոր նրանք, ովքեր կարևոր են համարում պատմական անվանումների պահպանումը, չեն կարող լուռ մնալ փաստերի այսպիսի բացահայտ աղավաղման դեպքում: Իրանի գիտնականներն իրենց հողվածներով ու պատմական փաստերով աշխատում են պաշտպանել Պարսկական ծոց անվանումը»²:

Սկզբում *National Geographic*-ը փորձեց պաշտպանել Արաբական ծոց եզրի գործածումը, հայտարարելով, թե «այդպիսով փորձում է դյուրին դարձնել այդ տեղի հայտնաբերումն ընթերցողների համար, որոնք այն փնտրում են Արաբական ծոց անվան տակ»³: Սակայն արդեն դեկտեմբերի 8-ին իր վեբ-կայքում հանդես եկավ մի նոր հայտարարությամբ, որում արդեն դիվանագիտական լեզվով խոսվում էր հնարավոր շտկման մասին: Քիչ անց՝ 2004թ. դեկտեմբերի 30-ին, դարձյալ իր վեբ-կայքում, *National Geographic*-ը ուղղեց ինքն իրեն՝ ջնջելով Արաբական ծոց անվանումն «Աշխարհի ատլասի» վրայից (առայժմ այդ ուղղումն արված է քարտեզի միայն ինտերնետային տարբերակում, հետագայում կարվի նաև ատլասի լրացուցիչ տպաքանակի թողարկումներում): Նույն քարտեզի վրայից ջնջվեց նաև վերոհիշյալ կղզիների՝ իրանական օկուպացիայի տակ լինելու ծանոթագրությունը: Իրանի արտգործնախարար Խարազին այս կապակցությամբ նկատեց, որ *National Geographic*-ի «նահանջը հաղթանակ է յուրաքանչյուր իրանացու համար»⁴:

¹ *Ali Akbar Dareini*, «Iran Shows Persian Gulf Historical Maps», *Associated Press*, December 19, 2004.

² *Ibid.*

³ *Jasper Mortimer*, «Iran Celebrates Cartographic Victory», *Associated Press*, January 4, 2005.

⁴ *Ibid.*

Գալով մեզ՝ ցավով նկատենք, որ հայության ո՛չ պետական, ո՛չ քաղաքական, ո՛չ էլ գիտական կառույցները բողոքի նմանատիպ որևէ փորձ դեռևս չեն արել այն բացահայտ ոտնձգությունների հանդեպ, որոնց ենթարկվել ու ենթարկվում են հայոց պատմությունն ու մշակույթը, պատմական աշխարհագրությունն ու ժողովրդագրությունը, ազգային խորհրդանիշ դարձած գործիչներն ու ստեղծագործությունները¹: Հիշատակենք թեկուզ միայն այն, որ արևմտյան արևելագիտության ու «հայագիտության» մեջ Արևմտյան Հայաստանն արդեն վաղուց փոխարինվել է «արևելյան Անատոլիա» եզրով (ինչը բոլոր առումներով սխալ է), ավելին՝ պատմական Հայաստանն ինքն է դուրս մղվել միջազգային հանրագիտարանային բազմաթիվ հրատարակություններից, գրքերից ու հոդվածներից²: Մփյուռքահայ մի շարք հեղինակներ իրենք են գործածում արևելյան Անատոլիան՝ Հայաստան, Արևմտյան Հայաստան, Հայկական լեռնաշխարհ եզրերի փոխարեն: Այլևս չենք խոսում հայկական այն բազմաթիվ տեղանունների մասին, որոնք դիտավորյալ աղավաղվել և անճանաչելիորեն փոփոխվել են՝ կիսելով իրենց բնիկ ժողովրդի ճակատագիրը: Խիստ օգտակար կլինեք, եթե մենք էլ կազմակերպեինք մի ցուցահանդես, որտեղ երևար Հայաստանի՝ հնուց մինչև այսօր տպագրված օտարալեզու քարտեզների վրա գրանցվածությունը, ինչպես նաև դրանցից Արևմտյան Հայաստանի աստիճանական անհայտացումը: Օրինակ՝ դեռևս 1967թ. Մոսկվայում լույս տեսնող «Малый атлас мира» կարևոր հրատարակության մեջ Թուրքիայի քաղաքական քարտեզի արևելյան շրջանները՝ Արևմտյան Հայաստանի տարածքը, նշված են որպես «Հայաստան» (*Армения*), հետագայում այն փոխարինվեց «Հայկական լեռնաշխարհ»-ով (*Армянское нагорье*)³:

Միջազգային ասպարեզում պատմական ճշմարտությունը (և այդպիսով՝ սեփական շահերը) պաշտպանելու հայ մտքի չկամությունը ևս մեկ տխուր վկայություն է մեզանում պետական մտածողության, ազգային արժանապատվության, հետևաբար, նաև դիմադրողականության տակավին խիստ ցածր մակարդակների մասին: Քաղաքական գիտակցության այս բացերը կարող է և պարտավոր է լցնել միմիայն հայոց նորանկախ պետությունը՝ իր բոլոր կառույցներով հանդերձ:

Այսպիսով՝ Հայաստանի հայագիտությունը չունի այն ներքին միասնականությունը, համերաշխությունը, կարգապահությունը և կազմակերպչական ու ենթակառուցվածքային ինքնաբավությունը, որոնք միանգամայն բնորոշ են ամերիկյան կեղծ-հայագիտությանը:

6. Հայրենի և արտասահմանյան հայագետների համագործակցության մասին

Հայրենի և արտասահմանյան հայագետների միջև արդյունավետ համագործակցությունը նախատեսում է աշխատանքային որոշակի սկզբունքների, գիտական էթիկայի և բարոյականության նորմերի հստակ ճանաչում և պարտադիր պահպանում:

Այսօրվա դրությամբ հայաստանյան և արևմտյան, հատկապես՝ ամերիկյան հայա-

¹ Օրինակները բազմաթիվ են, տե՛ս Ս.Այվազյան, «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ»:

² Նույն տեղում, էջ 22-23, 37-40, 42-43, 63-65, 83-85 և այլն:

³ Տե՛ս *Малый атлас мира* (Москва: Главное управление геодезии и картографии Министерства геологии СССР, 1967), с. 100. Հմմտ. *Атлас мира* (Москва: Главное управление геодезии и картографии Министерства геологии СССР, 1990), с. 43.

գետների լայնածավալ գիտական համագործակցությունը բարդագույն խնդիր է:

Հայրենի և արտասահմանյան հայագետների միջև արդյունավետ համագործակցության ելակետային սկզբունքը՝ հայոց ազգային արժանապատվության նկատմամբ հարգանքն է: Այս սկզբունքի խախտումը հայագետի կողմից ի չիք է դարձնում արդյունավետ գիտական համագործակցության որևէ հնարավորություն:

ԱՄՆ հայագիտական կենտրոններում հայաստանյան և ամերիկյան հայագետների միջև փոխհարաբերությունները կարող են ունենալ հետևյալ տարբերակները.

ա) ամերիկյան հայագիտությունը, օգտագործելով իր ֆինանսական ռեսուրսները, հենվելով իր ներքին տոտալիտար կարգապահության և պետական ու քաղաքական հովանավորության վրա, աստիճանաբար կարողանում է կոռուպցիոն հայաստանյան հայագիտությունը, ստանձնել նրա «շեֆությունը» և իր տեսակետները պարտադրել նաև հայաստանյան գիտնականների միջավայրում (թեև կոռուպցիոն միջոցները տարբեր են, արդյունքը կարող է լինել մոտավորապես այնպիսին, ինչպիսին խորհրդային ժամանակներում էր, միայն թե Հայաստանի հայագիտության կախվածությունն արդեն լինելու է ոչ թե մոսկովյան և լենինգրադյան, այլ արևմտյան կենտրոններից),

բ) հայաստանյան հայագիտությունը չի ենթարկվի ճնշումների ու պարտադրանքի և ակտիվորեն կապաքարի ամերիկյան կեղծ-հայագիտական դպրոցի արտադրանքի դեմ, ինչը պարտադրաբար նախատեսում է անգլերենով ազատ ստեղծագործող նոր կադրերի պատրաստում և այդ ու այլ եվրոպական լեզուներով բարձրարժեք ուսումնասիրությունների հրատարակություն,

գ) հայաստանյան հայագիտությունը չի կարողանա սեփական արտադրանքը դուրս հանել միջազգային ասպարեզ. նրան կխանգարեն սեփական անպատրաստությունը, ամերիկյան կեղծ-հայագիտությունն ու նրա հովանավորները: Արևմտյան գիտական պարբերականներում, հանրագիտարաններում և այլ կարգի հրատարակություններում կշարունակի իշխել ամերիկյան կեղծ-հայագիտական արտադրանքը (մոտավորապես այն, ինչ ունենք այսօր),

դ) կեղծ-հայագիտության ջանքերով կստեղծվի (մասամբ արդեն ստեղծվել է) հայաստանյան հայագետների «առաջավոր» փաղանգ, որը հլու-հնազանդորեն կկատարի իրենից պահանջվածը տարբեր տեսակի վարձատրությունների դիմաց և արտասահմանում կմատուցվի որպես հայաստանյան հայագիտության «ծաղիկ» (այս գործընթացը նույնպես սկսված է):

7. Հայրենի հայագիտության կոռուպցիայի մեխանիզմները

Հայաստանի հայագիտությունը կոռուպցիոնալ համար կիրառվում են հետևյալ մեթոդներն ու եղանակները.

1. Երկարաժամկետ աշխատանքի կազմակերպում արևմտյան առաջատար համալսարաններում և գիտահետազոտական կենտրոններում: Կեցության և ճանապարհի ծախսերը լիովին իր վրա է վերցնում հրավիրող կողմը:
2. Արտասահմանյան կարճաժամկետ ուղևորությունների պարբերական կազմակերպում, որոնց ընթացքում հայաստանցի մասնագետի ծախսերը լիովին իր վրա է վեր-

ցնում հրավիրող կողմը:

3. Կարճաժամկետ՝ մինչև մեկ տարի տևողությամբ, դրամաշնորհներ, որոնք տրվում են Հայաստանում որոշակի աշխատանք կատարելու դիմաց:
4. Կոնֆերանսների կազմակերպում արտասահմանում և Հայաստանում, որոնց ծախսերը լիովին իրենց վրա են վերցնում արևմտյան մեկենասները: Ընդ որում՝ հենց այդ մեկենասներն էլ որոշում են մասնակիցների ցանկը՝ իրենց հրավերով հաճախ պարզևատրելով իրենց «գիտական» գծի հայաստանցի պաշտպանին կամ համակերպվողին և, ընդհակառակը, հրավերի մերժումով պատժելով իրենց գծի քննադատին կամ հակառակվողին: Մակայն ամենակարևորն այն է, որ այդ պարբերական կոնֆերանսները ձևավորում են հայագիտության նոր համախառն «դպրոցը»՝ ամերիկյան մեկենաս կեղծ-դպրոցի ղեկավարությամբ:
5. Հայրենի հայագիտության ղեկավար պաշտոնյաների անհատական ու նույնիսկ ընտանյոք հրավերներ արտասահման: Օրինակ՝ 1990-ական թթ. ի վեր Վենետիկի համալսարանի պրոֆեսոր Լ.Զեքիյանը բազմիցս, շարքային պրոֆեսորի համար անհասկանալի միջոցներով, նմանատիպ հրավերներ է կազմակերպել հայագիտության բոլոր ղեկավար պաշտոններն ու լծակներն իր ձեռքերում կուտակած ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի համար: Պետք է նկատել նաև, որ Լ.Զեքիյանի հայացքները Հայաստանի և Սփյուռքի մասին ունեն հստակ հակահայաստանյան բնույթ¹, իսկ նրա կապերը Թուրքիայի հայագիտական կենտրոնների հետ չափազանց սերտ են ու սիրալիր²: Ուստի բոլորովին պատահական չէ, որ 2004թ. հոկտեմբերին կաթոլիկ վարդապետը (Ճիշտ ինչպես Ռ.Սյունին ու Ժ.Լիպարիտյանը ԱՄՆ-ում) կազմակերպեց թուրք և հայ պատմաբանների մերձեցման հերթական մի «գիտաժողով»՝ «Հայերն ու թուրքերը պատմության մեջ. 1000 տարվա վաղեմության հարաբերություններ» վերնագրով, որն ինքնին հուշում է ինչ-որ բարեկամական հարաբերությունների մասին: Ընդ որում, գիտաժողովի ձևաչափը խիստ անհավասար պայմաններ էր նախատեսել. թուրքական կողմը ներկայացրել էր 6 զեկուցում, հայկականը՝ ընդամենը 1³ (տե՛ս նաև Հավելված Ա):
6. Առավել վտանգավոր կոռպտացիայի մի ծրագիր է հայաստանցի ուսանողների և ասպիրանտների հետ աշխատանքի կազմակերպումը, այսինքն՝ դեռևս մասնագիտական պատրաստություն չունեցողների կանխիչ «ուղեղի լվացում», ինչպես ժամանակին արվում էր «ուրարտագիտության» լենինգրադյան կենտրոններում⁴:

¹ Իտալիայում համալսարանական ուսումն ավարտած և Հայաստան վերադառնալ պատրաստվող մի ուսանողի՝ Ա.Ք.-ին, Զեքիյանը խորհուրդ էր տվել մնալ արտասահմանում, քանի որ, իր համոզմամբ՝ «Հայաստանն առաջիկա 10-15 տարվա մեջ կործանվելու է, ուստի անհրաժեշտ է սփյուռքն ամրացնել»:

² Տե՛ս այս ուսումնասիրության Հավելված Ա-ն՝ Պրոֆ. Լ.Զեքիյանը Թուրքիայում: Զեքիյանի քննադատությունը տե՛ս նաև *Սրմեն Սյվազյան, «Հիմնատարեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի»,* մասն Ա, Երևան, «Մամարկ», 2003, էջ 128-131:

³ *Հակոբ Չաքրյան*, «Հայկական հարցին նվիրված գիտաժողով Վենետիկում, թե՛ այդ հարցն առանց Հայաստանի մասնակցության լուծելու արատավոր պրակտիկայի նոր դրսևորում», «Ազգ», 27.10.2004:

⁴ 2002թ. հոկտեմբերին Հարվարդում կայացած գիտաժողովին այս առաջարկով հանդես էր եկել Մովսես Խորենացուն բազմիցս անվանարկած ու նրա «Հայոց պատմության» անգլերեն թարգմանությունը միտումնավոր աղավաղած պրոֆ. Ռ.Թոմսոնը (տե՛ս *NAAASR Newsletter*, Fall-Winter 2002, p. 8-9): Հնարավոր է, այսպիսի մի ծրագրի մշակման համար անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու համար էր 2003թ. Հայաստանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի մագիստրատուրա «սովորելու» էր եկել ամերիկացի մի ուսանող, որը բացարձակապես չունեի հայագիտական նախասիրություններ ու հետաքրքրություններ (տողերիս հեղինակը նրան մեկ կիսամյակ դասավանդել է):

Բնականաբար, արտասահման նորից հրավիրվելու կամ դրամաշնորհ ստանալու ցանկություն ունեցող մասնագետը, ձգտելով կրկին արժանանալ նույն շնորհներին, ոչ միայն երբեք չի փորձելու հակառակվել, քննադատել իր մեկենասի «գիտական» տեսակետները, այլև նրան հաճոյանալու նպատակով հաճախ հարմարեցնելու է իր գրածը կեղծ-գիտական տեսակետներին:

Կոռպտացիայի համար բարենպաստ հնարավորություններ են ստեղծում նաև մի քանի այլ հանգամանք: Ինչպես ասվեց, Վլ.Բարխուդարյանի ձեռքբերում այսօր կենտրոնացվել են հայագիտության հնարավոր գրեթե բոլոր հիմնական վարչական լծակները. նա ՀՀ ԳԱԱ փոխնախագահն է և գիտքարտուղարը, ԳԱԱ հասարակական գիտությունների բաժանմունքի վարիչն է, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող՝ ԲՈՀ 004 մասնագիտական խորհրդի նախագահն է, պատմության ինստիտուտում բաժնի վարիչ է, պատմության դպրոցական դասագրքերի գլխավոր խմբագիր, 2004թ. կեսերին ԳԱԱ նախագահությունում վերստեղծված գիտական հրատարակությունների խորհրդի նախագահ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էլ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ է (այս վերջինը բացարձակ զավեշտ է՝ Վլ.Բարխուդարյանը խորհրդային շրջանում մոլի կոմերիտական-կոմունիստ էր, կատաղի աթեիստ)¹: Ըստ երևույթին, հե՛նց Վլ. Բարխուդարյանին վերջերս նկատի ունեւր «Նովոյե վրեմյա» թերթի թղթակիցը՝ թվարկելով ու քննադատելով բազմաթիվ պաշտոններ զբաղեցնող ՀՀ ԳԱԱ նախագահության պաշտոնյաներին. *«Парадокс и в том, что одни и те же люди, возведенные в свое время в ранг «бессмертных», могут быть одновременно членами президиума НАН РА и директорами научно-исследовательских институтов, председателями диссертационных комиссий, советов по издаваемой в стране научной литературы, учебников, именуемых в народе «мучебниками», и еще целого ряда почетных и к тому же неплохо оплачиваемых должностей. Возникает законный вопрос: как им удастся совмещать все это и еще заниматься наукой?!»*:

Սակայն արդյոք պատահակա՞ն է այս կենտրոնացումը, թե՞ այն բխում է հայագիտությունը լիովին կոռպտացնելու օտար ծրագրերից, որոնց իրականացմանը Վլ.Բարխուդարյանը, ըստ ամենայնի, վաղուց է կամավորապես որդեգրվել:

Մյուս անբարենպաստ հանգամանքն այն է, որ վերջին տարիներին Հայաստանում տիրող սոցիալ-տնտեսական ծանր պայմանները բերել են հայագետների շարքերի վտանգավոր չափերի հասնող նոսրացմանը: «ՀՀ ԳԱԱ գիտական ու գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները 2001թ.» հաշվետվության համաձայն, 2002թ. հունվարի 1-ի դրությամբ հումանիտար գիտությունների 10 բաժանմունքներում աշխատում էին ընդամենը 526 գիտաշխատող: Եթե նկատի ունենանք, որ նրանցից ոչ բոլորն են զբաղվում բուն հայագիտական ուսումնասիրություններով, մի մասն արդեն տարիքն առած և զառամյալ մասնագետներ են, մի մասն էլ գիտական բալաստ է, ապա խոսքը, լավագույն դեպքում, ընդամենը 150-200 մասնագետի մասին է: Հասկանալի է, որ այս թիվը

¹ *Нора Кананова, «Тихая заводь под названием «академия», «Новое время», 25 января 2005г.).*

կեղծ-հայագիտական դպրոցին թույլ է տալիս աշխատել յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին: Ընդ որում՝ աշխատանքը տարվում է հետևյալ սկզբունքներով:

Անգիջող հայրենասիրական սկզբունքներով առաջնորդվող հայագետները ենթարկվում են մեկուսացման, մասնավորապես՝

ա. չեն հրավիրվում հաճախակի կազմակերպվող գիտաժողովներին,

բ. նրանց աշխատությունները լռության են մատնվում, անգամ պարզ հղումներ չեն կատարվում, ընդամին՝ երբեմն ենթարկվում են գրագողության,

գ. մերժում են դրանց հրապարակումը արտասահմանյան հայագիտական և արևելագիտական հանդեսներում,

դ. բնականաբար, որևէ դրամաշնորհ նույնպես չեն ստանում:

Կոռուպցիայի մեծ ցանկություն ու հակումներ դրսևորողները, հաճախ՝ բավական թույլ գիտնականներ, արժանանում են վերոհիշյալ բոլոր արտոնություններին:

Իսկ դեռևս չկողմնորոշվածների հետ շարունակում է անդուլ աշխատանք տարվել:

Միջազգային գիտական ասպարեզում կեղծ-հայագիտության լիակատար վերահսկողության հաստատումը հնարավոր է դառնում ինչպես այս մեթոդների կիրառմամբ, այնպես էլ կեղծ-հայագիտության ենթակառուցվածքի հիմքում դրված բարձր կարգապահությամբ¹, լավ իրազեկվածությամբ, կազմակերպչական ու կապային առավելություններով և, հատկապես, լեզվական գերիշխանությամբ՝ անգլերեն հրատարակությունների անմրցելի քանակով:

8. Դիմադրական աշխատանքի և ձգտումների բացակայության հետևանքները

Հայագիտության, ինչպես և հայ հասարակագիտության մեջ, չափազանց թույլ է զարգացած քննադատությունը, մանավանդ՝ արևմտյան հայագետների և արևելագետների տեսական մոտեցումների և աշխատությունների նկատմամբ:

Հայրենի հայագիտության առջև կանգնած տեսական ու գործնական բազմաթիվ մարտահրավերներ մնում են անպատասխան ոչ այնքան մասնագիտական անպատրաստվածության, որքան սուր հարցերին անդրադառնալու կամքի իսպառ բացակայության պատճառով: Ավելին՝ փորձ է արվում միտումնավոր վիժեցնել այդ հարցերի արժարժույթը, որով, սակայն, խնդիրները, բնականաբար, չեն վերանում: Ներկա կացության մասին լավագույն պատկերացում կարող է տալ հայագիտական երկու համաժողովի քննությունը:

Հայագիտական երկու համաժողով

Ամերիկյան «հայագիտության» խնդրի նկատմամբ ՀՀ ԳԱԱ նախագահության և ակադեմիական ինստիտուտների որդեգրած քաղաքականությունը լիովին բացահայտվեց

¹ Բարձր կարգապահությունն ապահովելու մի շարք այլ մեթոդների մասին տե՛ս *Ս. Այվազյան, «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ», էջ 228-232:*

2003թ. սեպտեմբերի 15-20-ը Երևանում տեղի ունեցած «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» թեմայով միջազգային առաջին համաժողովին, որին մասնակցում էին 25 երկրից ժամանած շուրջ 90 հայագետ:

Արևմտյան հայագետների պահանջով՝ հրավիրվել էին բոլոր հայագետները, և միայն մեկին՝ Ա.Այվազյանին թույլ չէր տրվել մասնակցել դրա աշխատանքներին¹: Բանն այն է, որ համաժողովը նախագծած «կեղծ-հայագիտության» պարագլուխների նպատակով՝ պետք էր լռեցնել ու վերջ դնել «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ» մենագրության հրապարակմամբ՝ Հայաստանի և Սփյուռքի հայագիտական ու մտավորական շրջանակներում առաջացած քննադատությանն ու դիմադրական տրամադրություններին: Բանը հասավ նրան, որ Հայաստանում հայագիտության թիվ 1 աստիճանավոր պաշտոնյան՝ ակադ. Վ.Բարխուդարյանը, բացեիքաց խոստովանեց այդ հանգամանքի ու համաժողովի բուն նպատակի մասին. «Համաժողովին Սփյուռքից հրավիրել էինք անխտիր բոլոր հայագետներին՝ նպատակ ունենալով վերացնել ստեղծված որոշ անջատվածությունը, սառնությունը: Դա նկատվում էր հատկապես ԱՄՆ պատմաբանների հետ հարաբերություններում: Պատճառն Արմեն Այվազյանի «Հայոց պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ» (1998) մենագրությունն էր»²:

Այսպիսով՝ անհրաժեշտ էր, մի կողմից՝ ցուցադրել, որ իբր ոչ մի լուրջ խնդիր էլ Հայաստանի և Արևմուտքի պատմաբանների միջև գոյություն չունի, ամբողջ աղմուկն անհիմն հրահրել է մի «մարզինալ» հեղինակ: Մյուս կողմից՝ պետք էր բոլոր հայագետներին ցույց տալ, որ այդ Ա.Այվազյանը մեկուսացված է և պատժված:

Այնուհետև Վ.Բարխուդարյանը խոստովանում է նաև, որ Ա.Այվազյանին թույլ չեն տվել հանդես գալ ամերիկյան հայագիտության քննադատությամբ. «Նա ներկայացրել էր զեկուցում ամերիկահայ պատմաբանների մասին, իսկ այդ հարցը մեզ մոտ վիճահարույց է: Իսկ քանի որ մեր նպատակը Սփյուռքի հետ համագործակցություն ստեղծելն է, և՛ այդ, և՛ ուղղագրության հարցը որոշեցինք քննարկման նյութ չդարձնել՝ դրանք է՛լ ավելի չսրելու և կրքեր չբորբոքելու նպատակով, մանավանդ, որ նման ընդգրկուն համաժողովում հնարավոր չէր դրանք լուծել: Մենք Այվազյանին ասել ենք, որ այդ թեմաներով կհրավիրվեն նեղ մասնագիտական քննարկումներ: Նրան առաջարկել ենք այլ զեկուցում: Հրաժարվել է»³:

Այս կապակցությամբ նշենք երկու հանգամանք:

Նախ, իմ ու համաժողովի կազմակերպիչների միջև *որևէ* խոսակցություն առհասարակ չի եղել, նրանք ինձ համաժողովին չեն հրավիրել, այնուհետև մերժել են անգամ ընթերցել իմ ներկայացրած դրույթները, որոնք վերնագրված էին «Հայրենի և արտասահմանյան հայագետների համագործակցության սկզբունքների մասին» ու բոլորովին էլ նվիրված չէին ամերիկյան հայագիտության քննադատությանը: Պարզապես, իրենց առջև

¹ *Арис Казинян, «ТОЧКИ НАД «і» в каком-то смысле на I международном конгрессе арменоведов расставлены», «Голос Армении», 23 сентября 2003г.*

² «Համաժողովը լուծեց իր առաջադրած բոլոր խնդիրները», «Վասն հայության», 6 թիվ 25 (88), 24.10.2003: Նույն հարցազրույցը կրճատումներով լույս է տեսել ռուսալեզու «Գոլոս Արմենիի»-ում, 28.10.2003:

³ «Վասն հայության», 6 թիվ 25 (88), 24.10.2003: Հմմտ. «Գոլոս Արմենիի», 28.10.2003

դրսից, ակներևաբար, խնդիր էր դրվել արգելել իմ մասնակցությունը համաժողովի աշխատանքներին, որ և ի կատար ածվեց կացնային «նրբությամբ»:

Երկրորդ, ամերիկյան հայագիտության թեմայով նեղ կամ լայն «մասնագիտական քննարկումներ» կազմակերպելու առաջարկով ոչ թե ԳԱԱ հայագիտության ղեկավարությունն է ինձ դիմել, այլ ես՝ նրանց: Այդ առաջարկն արել եմ քանիցս, սկսած տակավին 1999 թվականից, երբ ամերիկյան պատմագրությանը նվիրված իմ մենագրությունը հասավ սփյուռքահայ ընթերցողին ու գիտական հերքում տալու անկարող կեղծ-հայագիտական դպրոցը փորձեց արժեզրկել նրանում եղած քննադատությունը՝ արհեստականորեն կրքեր բորբոքելով ու Հայաստանի հայագետներին իմ դեմ տրամադրելով: Այդ խնդրով քննարկումներ մինչև օրս էլ չեն կազմակերպվել: Հենց այն, որ այսպիսի քննարկում երբևէ չի անցկացվել Գիտությունների ակադեմիայի նախագահության նախաձեռնությամբ, արդեն ինքնին խոսում է հարցից խուսափելու մասին: Իսկ այժմ նման քննարկումներն արդեն գուցե անիմաստ են, որովհետև դրանց փոխարեն արևմտյան «հայագետների» հետ միացյալ ճակատ ստեղծած Վլ. Բարխուդարյանի և Բ.Հարությունյանի միջոցով ու նրանց ջանքերով լուրջ սեպ խրվեց հայրենի պատմագիտության մեջ, որը դեռ երկար ժամանակ իրեն զգալ կտա:

Կարևոր է նկատել, որ երևանյան համաժողովի գաղափարական պատրաստությունն սկսվել էր ավելի վաղ: Օրինակ՝ համաժողովից տակավին մեկ տարի առաջ ՀՀ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Բաբկեն Հարությունյանը կրկնում էր ամերիկյան հայագետների առաջադրած դրույթը, թե «մեր և արտասահմանյան հայագիտության միջև հակամարտություն բնավ չկա, այլ ընդամենը թյուրիմացություններ են առանձին հարցերի վերաբերյալ (*конфликта как такового в принципе не существует, есть недопонимание по отдельным вопросам*): Իմ կարծիքով, պատճառը երկու դպրոցների հայագետների միջև բնականոն կանոնավոր շփման պակասի մեջ է»¹: Բ.Հարությունյանի այսպիսի, մեղմ ասած, հարմարվողական դիրքորոշումներն էին պատճառը, որ դեռևս 1999թ. նա, Ալեքսանդր Իսկանդարյանի համահեղինակությամբ, ռուսերենով հրապարակեց սյունիական դրույթներով գրված մի խայտառակ հակահայկական հոդված՝ «Ազգային պատմությունները խորհրդային և հետխորհրդային պետություններում» ժողովածուում, որը լույս է տեսել Ֆրիդրիխ Նաուման հիմնադրամի հովանավորությամբ, Մոսկվայի «Այրո-XX» հրատարակչությունում: Ժողովածուն վերահրատարակվել է 2003թ.: Թեև բավականին ուշացումով, բայց, ի վերջո, այդ հոդվածը Հայաստանում ենթարկվեց ջախջախիչ քննադատության²: Դա, սակայն, որևէ կերպ չանդրադարձավ Բ. Հարությունյանի տնօրինած վարչա-

¹ «История без сослагательного наклонения», «Новое время», 23 октября 2002г.

² Искандарян Александр, Арутюнян Бабкен, «Армения: «Карабахизация» национальной истории», в сборнике «Национальные истории в советском и постсоветских государствах» (Москва, 1999, 2-е изд., 2003). *Լևոն Մելիք-Շահնազարյան*, «Անցումային ժամանակաշրջանի» արգելքն ու տոտեմը», «Շրջադարձ», թիվ 2, մայիս, 2004. *Լևոն Մելիք-Շահնազարյան*, «Табу и тотем «транзитного периода», На чью мельницу льют воду некоторые армянские историки?» www.defacto.am (Взгляд/Политика) 11.02.2004. *Գևորգ Յազրճյան*, «Ազգային պատմության դարաբաղաճում, թե՛ թուրքացում», «Շրջադարձ», թիվ 3, հունիս, 2004, էջ 34-36: *Александр Григорян*, «Чего изволите»-изация национальной истории», «Голос Армении», 06.04.2004, (ամբողջական տարբերակը լույս է տեսել Դե ֆակտո, 09.04.2004): *Александр Григорян*, «Открытое письмо профессору Б.Арутюняну», «Голос Армении», 31.08.2004: Տե՛ս նաև վավերացված Զ.:

կան կարևոր պաշտոնների ու լծակների վրա: Մյուս կողմից էլ՝ սև գործն արդեն արված էր. Բ.Հարությունյանի և Ա.Իսկանդարյանի հողվածն այժմ արդեն օգտագործվում ու հղվում է հակահայ գրականության մեջ, և այդպես կշարունակվի շատ երկար¹: Օտար ընթերցողի համար այդ հողվածում զետեղված հերյուրանքները ձեռք են բերում արտակարգ հավաստիություն շնորհիվ այն հանգամանքի, որ Բ.Հարությունյանը հողվածը գրելու պահին եղել է Հայաստանի մայր բուհի՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանը, այժմ էլ նույն բուհում պաշտոնավարում է որպես Հայոց պատմության ամբիոնի վարիչ, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող՝ գիտական կոչումներ շնորհող մասնագիտական խորհրդի փոխնախագահն է:

Կեղծ-հայագետների թելադրած նույն գաղափարները քարոզում էին նաև ՀՀ ԳԱԱ որոշ այլ պաշտոնյաներ, այդ թվում՝ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Հովհաննիսյանը. «Ինչ վերաբերում է Սփյուռքի և հայաստանյան գիտնականների միջև վերջին տարիներին եղած տարաձայնությունների խնդրին, կարծում եմ, բնավ պետք չէ կենտրոնանալ դրա վրա: Ըստ իս, դրանք ոչ թե տարաձայնություններ են, այլ տարբեր մոտեցումներ գիտության ամենատարբեր հիմնահարցերի վերաբերյալ: Քանի որ հայագիտությունը գիտություն է, բնականաբար, այստեղ էլ կան տարբեր կարծիքներ ու տեսակետներ: Բայց դրանք վերածել տարաձայնությունների ու բաժանարար գիծ դնել մեր և Սփյուռքի հայագետների միջև՝ մեծ վրիպում է: Գոյություն չունի այնպիսի գիտություն, որտեղ չկան տարբեր տեսակետներ, եթե կա, ուրեմն մեռած է: Հետևաբար, այդպիսի տարաձայնություններն օրինաչափ են բոլոր գիտություններում»²:

Այս տեսակետի քարոզչությանը միացան նաև պետական ու քաղաքական գործիչները: Մի խումբ մտահոգված գիտնականների ու քաղաքացիների նախաձեռնությամբ և Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի կազմակերպությամբ, 2002թ. մայիսի 23-ին կայացան «Հայագիտության և հայոց լեզվի խնդիրները» թեմայով խորհրդարանական լսումները³: Լսումներին, բացի Շավարշ Քոչարյանից և Դավիթ Հովհաննեսից, այլ պատգամավորներ չմասնակցեցին: Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանն իր ելույթում ժխտեց երկու դպրոցների միջև խորը հակասությունների գոյությունը՝ շեշտելով, թե հայրենի և սփյուռքահայ հայագետները «բոլորն էլ հայրենասեր են»⁴:

2002թ. հոկտեմբերի 4-6-ը Հարվարդի համալսարանում կայացավ երևանյան գիտա-ժողովին նախորդած և այն գաղափարապես նախապատրաստող մի գիտաժողով՝ «Հայագիտության վերագնահատումը. անցյալը, ներկան և ապագան» (*Rethinking Armenian Stu-*

¹ Տե՛ս, օրինակ, В.А.Шнирельман, «Войны памяти. Мифы, идентичность и политика в Закавказье» (Москва: ИКЦ «Академкнига», 2003), сс. 47, 50:

² «Առաջին անգամ մեկտեղվելու են հայագիտական բոլոր ուժերը», «Ազգ», 11.09.2003:

³ Այս լսումների կապակցությամբ հայկական մամուլում հրապարակվեցին ուշագրավ վերլուծություններ՝ Լևոն Միքաելյան, «526», «Голос Армении», 18.05.2002, Արիս Կազինյան, «Слушания назначены на сегодня», «Голос Армении», 23.05.2002, Արիս Կազինյան, «Непозволительная роскошь или все мы – патриоты», «Голос Армении», 28.05.2002, *Անուշ Գալստյան*, «Անհանգրվան մտահոգություններ», «Ժամանակի ուղեկից» (շաբաթաթերթ), 25.05.2002, #25 (50), *Գևորգ Յազըճյան*, Լսումներ «Հայագիտության և հայոց լեզվի խնդիրներ» թեմայով... դատարկ դահլիճում, «Ազգ», 24.05.2002: Տե՛ս Հավելված Գ:

⁴ Արիս Կազինյան, «Непозволительная роскошь или все мы – патриоты», «Голос Армении», 28.05.2002.

dies: Past, Present, and Future) թեմայով: Այդ ժողովին ելույթ ունեցավ նաև ԱՄՆ-ում ՀՀ դեսպան, պատմական գիտությունների դոկտոր Արման Կիրակոսյանը: Իր խոսքում նա, նախ և առաջ, դիմեց գովաբանությանը. «Ամերիկյան հայագետները պատմագրության, լեզվաբանության, գրականության և արվեստի ուսումնասիրություններում ակնառու հաջողությունների են հասել...

Վերջին տասնամյակներում ամերիկահայ պատմաբանների աշխատանքն առանձնանում է վիթխարի հետազոտություններով, անկախ մտածողությամբ, օտար աղբյուրների հմուտ օգտագործմամբ, գիտական հիմքերի ապահովմամբ և միջազգային գիտաժողովներին մասնակցությամբ... այսպիսով հող նախապատրաստելով հայ ժողովրդի նոր պատմության, ազգային-ազատագրական շարժումների, Հայկական հարցի և ցեղասպանության պատմության ֆունդամենտալ քաղաքական ուսումնասիրության համար»¹:

Այնուհետև ՀՀ դեսպանն անցավ հայաստանյան և ամերիկյան հայագետների միջև «փոխադարձ մեղադրանքների և անառողջ բանավեճը» բարեկամաբար լուծելու ծանոթ խոսակցությանը²: Իհարկե, Ա.Կիրակոսյանի ներբողն ամերիկյան հայագիտությանը որևէ եզր չունի իրականության հետ, իսկ ՀՀ դեսպանն իր անունից, փաստորեն, Հայաստանի հովանու տակ է վերցնում ու պաշտպանում արդարացի քննադատության ենթարկված Ռ. Սյունիին, Ռ.Թոմսոնին, Ջ.Ռասելին և հայագիտությանն ու հայությանը մեծապես վնասած այլ «հայագետների»:

Հարվարդյան «գիտաժողովին» հրավիրված էր ընդամենը մեկ մասնագետ Հայաստանից՝ պատմական գիտությունների դոկտոր Ալբերտ Ստեփանյանը, որն իր ելույթում, սակայն, որևէ կերպ չանդադարձավ ամերիկյան հայագիտության մեջ տեղ գտած խորապես սխալ ու քաղաքականապես վտանգավոր երևույթներին, ոչ էլ արձագանքեց Հայաստանի հայագիտության ու հայագետների հասցեին հնչած բազմաթիվ վիրավորանքներին³:

Կեղծ-հայագիտական դաշտի ներքին խլրտումները

Նույն հավաքին ելույթ ունեցած Ջորջ Բուռնությանն անվանապես պախարակեց «Հայաստանից Արմեն Այվազյանին»՝ ամերիկյան հայագիտությունը քննադատելու համար, նշելով, որ իսկական գիտնականները, այսինքն՝ իրենք, տարբերվում են հայկական ազգայնականության քարոզիչներից⁴: Սակայն, մեկ տարի անց, Ջ.Բուռնությանը բավականին անսպասելի շրջադարձ կատարեց. երևանյան հայագիտական համաժողովին ներկայացրեց իր ելույթի դրույթները, որոնցով, փաստորեն, հաստատում էր իմ քննադատության գլխավոր եզրակացությունները, ներառյալ ամերիկյան հայագիտության կապվածությունն ԱՄՆ աշխարհաքաղաքական շահագրգռություններին, այսինքն՝ այն, ինչ ինքը

¹ *Amb. Arman Kirakossian, «Armenian Studies and Its Future,» NAAASR Newsletter, Fall-Winter 2002, p. 2.*

² *Ibid.*, pp. 2-3.

³ *Rethinking Armenian Studies: Past, Present, and Future, A Special Issue of the Journal of Armenian Studies, Volume VII, No. 2 (2003), pp. 133-140.*

⁴ *NAAASR Newsletter, Fall-Winter 2002, pp. 7-8.* Ուշագրավ է, որ, կարծես, ճիշտ ու ճիշտ խորհրդային քարոզչության կանոններով՝ այսպիսի հարձակումների ժամանակ հազվադեպ են հիշատակում անգամ անունս, էլ չասած՝ կոչումս և աշխատավայրս:

մերժում էր մեկ տարի առաջ: Ինչնից, ստորև մեջբերում ենք Ջ.Բուռնությանի վերոհիշյալ դրույթներն ամբողջությամբ, որոնք վերնագրված են այսպես՝ «Միացյալ Նահանգներում հայագիտության ոլորտի ներկա ճգնաժամը» (*The Current Crisis in the Field of Armenian Studies in the United States*). «Իմ զեկույցը քննում է Միացյալ Նահանգներում հայագիտության ոլորտի ներկա վիճակը: Այն մանրամասն վերլուծում է այն խնդիրները, որոնց բախվում են հայագիտական ամբիոններն ու հայագիտության գծով դոկտորական ատենախոսություն պաշտպանել որոշած ուսանողները¹: Ինձ օբյեկտիվ գնահատական տալու հնարավորություն է ընձեռում այն, որ ես հայագիտական որևէ ամբիոնում որպես վարիչ չեմ պաշտոնավարում, բայց և 25 տարի շարունակ ԱՄՆ բազմաթիվ համալսարաններում դասավանդել եմ Հայոց պատմություն: Ես մանրամասն կնկարագրեմ տարբեր ամբիոնների աշխատանքը, կգնահատեմ նրանց գիտական արտադրանքը և կքննեմ նրանց ջանքերը՝ ուսանողներ հավաքագրելու, նրանցից հետևորդներ պատրաստելու ուղղությամբ:

Իմ եզրակացությունները, դժբախտաբար, խիստ բացասական են: Բացառությամբ քչերի, ամբիոնի վարիչները չունեն ուսանողներին ներգրավելու [անհրաժեշտ] կիրքը: Նրանք մեծ մասամբ լեզվական և ակադեմիական թույլ պատրաստություն ունեցող և անձնական շահերին հետամուտ անհատներ են: Ամբիոնների մեկենասները չեն սահմանել ամբիոնների խնդիրները: Ավելին՝ համալսարանների ղեկավարությունն, ընդհանուր առմամբ, թշնամաբար է տրամադրված Հայաստանի նոր պատմության [դասավանդման] նկատմամբ, հատկապես, եթե այն առնչվում է Թուրքիային:

Մենք կանգնած են ջրբաժանի առջև. կամ մենք կշտկենք ներկա դրությունը, կամ կկորցնենք այն, ինչ խոստանում էր մեծ ապագա հայագիտության համար»²:

Գաղտնիք է, սակայն, թե ինչու հրապարակվեցին Բուռնությանի ելույթի միայն այս դրույթները, իսկ նա ելույթ այդպես էլ չունեցավ, ո՛չ էլ որևէ տեղ հետազայում տպագրեց այն: Մնում է ենթադրել, որ՝ ա) կամ Ջ.Բուռնությանը ենթարկվել է որոշակի ճնշումների և, տեղի տալով, հրաժարվել է հրապարակայնորեն հնչեցնել իր սուր քննադատությունը, բ) կամ իր դրույթներով նա շանտաժի է ենթարկել ամերիկյան «հայագիտության» ղեկավար շրջանակներին և իր ուզած ինչ-ինչ բաներ ստանալով՝ լռել է:

Համենայնդեպս, ամերիկյան «հայագիտության» մեջ սկսել են ծլարձակել նաև ներքին խլրտումներ: Դրանց ուժգին արտահայտությունն էր Վիսկոնսինի համալսարանի լեզվաբանության պրոֆեսոր (մինչ այդ աշխատել էր Հարվարդի համալսարանում) Բերթ Վոյի քննադատական ընդարձակ և սուր ելույթը, որում նա առանձնակի ուժով ջախջա-

¹ Այժմ ԱՄՆ-ում գործում են 15 հայագիտական ամբիոն - Ա. Ա.:

² «My paper will examine the current situation in Armenian Studies in the U.S. It will elaborate the problems facing the Armenian chairs and the students who decide to obtain the doctorate degree in Armenian Studies. Not being a chairholder in Armenian Studies, but having taught Armenian History for 25 years at many universities in the U.S., provides me with the opportunity to be objective. I shall detail the activities of the various chairs, assess their academic output and examine their efforts in recruiting and preparing students to take their place. My conclusions are unfortunately very negative. With few exceptions, chairs-holders do not possess the passion to attract students. Most are self-serving individuals with weak linguistic and academic backgrounds. The donors of the chairs have not defined the role of the chairs; furthermore, the university administrations are generally hostile to modern Armenian history – especially if it pertains to Turkey. We stand at a crossroad – either we correct the present situation or we loose what promised to be a great future in Armenian Studies». Տե՛ս «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները» (զեկուցումների դրույթներ): Հայագիտական միջազգային համաժողով, սեպտեմբերի 15-20-ը, 2004, էջ 100-101:

խում է Հարվարդի համալսարանում հայագիտության դրվածքը և հայագիտության ամբիոնում «ցմահ» պաշտոնավարող Ջեյմս Ռասելին¹:

Ուշագրավ է, հատկապես, ամերիկյան հայագետներին Ջ.Բուռնոյանի «ներսից» տված բնորոշումը՝ «լեզվական և ակադեմիական թույլ պատրաստություն ունեցող և անձնական շահերին հետամուտ անհատներ» (*self-serving individuals with weak linguistic and academic backgrounds*): Այս դիտողությունը միանգամայն համահունչ է դեռևս 1998թ. մեր արած հետևյալ գնահատականին. «Եթե անգամ մի պահ մոռանանք կանխատրամադրված աղավաղումների իրողությունը, ապա Թոմսոնն ու թոմսոնականներն ավելին չեն, քան սոսկ հայագիտական երկրորդական ու երրորդական մակարդակի պատրաստություն ունեցող արևելագետներ»²: Բերթ Վոն Ճիշտ նույն բնորոշումն է տալիս, մասնավորապես, Ջ.Ռասելին՝ համարելով նրան «իրանագետ», այլ ոչ հայագետ: Բ.Վոն նույնիսկ կոչ է անում հայկական համայնքին դիմել բողոքի համապատասխան քայլերի, քանի որ Ջ.Ռասելը հայերին հաճախ անվանում է «նեոնացիստներ» (*neo-Nazis*), խորհրդահայ պատմաբաններին նույնպես նացիստ է համարում³: Արդեն միայն դրանով, Բ.Վոյի կարծիքով, Հարվարդի համալսարանի Մաշտոցի անվան հայագիտական ամբիոնը վնասում է ամերիկահայությանը, նրանց ճնշել ցանկացող ուժերի համար ստեղծում հարձակումների լավ առիթներ⁴:

Ցավոք, ՀՀ ԳԱԱ հայագիտական ինստիտուտներում չեն փորձում անգամ թարգմանել ու հրապարակել այս կարգի խիստ արժեքավոր «ներքին» քննադատությունը, անել համապատասխան հետևություններ ու մշակել հակազդեցության ծրագրեր:

Միջազգային ասպարեզում հայրենի հայագիտության, հայոց պատմության հանգուցային հարցերում սեփական տեսակետները տարածելուց և պաշտպանելուց խուսափելը, այլ կերպ ասած՝ օտարածին սխալ ու կեղծ տեսակետներին դիմագրավելուց հրաժարվելը բերել են նրան, որ համաշխարհային գիտական, գիտահանրամատչելի և քաղաքական գրականության մեջ Հայաստանին ու հայությանը վերաբերող հարցերը հանձնվել են արևմտյան հայագիտության անկաշկանդ տնօրինությանը՝ դրանից բխող քաղաքական, մշակութային ու հոգեբանական բոլոր ծանրագույն հետևանքներով: Այդ հետևանքները դասակարգենք ըստ ազդեցության ոլորտների:

Ա. Հետևանքները միջազգային քաղաքական ասպարեզում -

1. Հայոց պատմության ու մշակույթի մասին տեղեկությունները Հայաստանի և հայության համար քաղաքականապես վնասաբեր ու աղճատված տեսքով հրամցվում են միջազգային հանրությանը, մասնավորապես՝ համաշխարհային թատերաբեմում կշիռ և հեղինակություն ունեցող պետությունների քաղաքական, դիվանագիտական, զինվորական ու մտավորական վերնախավերին:

¹ Bert Vaux, «The Armenian Language and Armenian Studies: An Interview With Linguistics Professor Bert Vaux by Jason Sohigian», *The Armenian Weekly Online*, September-October 2003.

² Ա. Մյվազյան, «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ», էջ 154:

³ Bert Vaux, «The Armenian Language and Armenian Studies», *op. cit.*

⁴ «It's reasonable to not want to hurt your own people or your own group. But that's one of the reasons that action needs to be taken, because the chair is actually hurting the community at this point. When you call the Armenians neo-Nazis, that isn't helping the community and it's not leaving it alone-it's hurting it. You are providing fodder for people that want to attack the Armenians.» Bert Vaux, «The Armenian Language and Armenian Studies», *op. cit.*

2. Լայն ասպարեզ է թողնվում հակահայկական ու հակահայաստանյան այն քարոզչությանը, որ Թուրքիան պետականորեն իրականացնում է տասնամյակներ շարունակ: Պատահական չէ, որ հայոց պատմությունը, հոգեկերտվածքը և մշակույթը ծուռ հայելու մեջ ներկայացնող այդ քարոզչությունը, մնալով հիմնականում անպատասխան, բավականին արդյունավետ է¹:
3. Հատկապես ուժգին հարված է ուղղվում հայերի նկարագրին: Այս մասին ժամանակին ահագանգել է Գարեգին Նժդեհը, որի կողմից իրավիճակի բնութագրումը, ցավոք, այսօր էլ չի կորցրել արդիականությունը և վկայում է, որ Արևմուտքում՝ հասարակագիտական բնագավառում հայության դեմ քարոզչությունն սկսվել է վաղուց ի վեր. «Քեմալական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից, թուրքերը՝ բարբարոս, բայց արթուն քաղաքական բնագոյով օժտված մի ազգ, փորձեցին մեզ ոչնչացնել նաև բարոյապես: Թուրքիայում կատարված հայերի ցեղասպանությունն արդարացնելու կամ, ծայրահեղ դեպքում, հասկանալի դարձնելու նպատակով, թուրքերը մի շարք եվրոպական ծախու գրչակների ու հասարակական գործիչների աջակցությամբ, հակահայկական քարոզչության արշավ սկսեցին: Հայկական սպանդին հետևեց բարոյական եղեռնը՝ հայերի վարկաբեկումը: Ամերիկյան ու եվրոպական ամբիոններից ոչ թուրքերը հաճախակի հայտարարում էին. «Իրենց անարգ բնավորության պատճառով *հայերը դարձան թուրքերի* նողկանքի, այլ ո՛չ թշնամության գոհերը»: Այսպիսով մեղադրվում և վարկաբեկվում էին միլիոնավոր գոհերը, իսկ արդարացվում՝ մարդասպանները: Հակահայկական քարոզչությունը պնդում էր, որ մեղավոր են սպանվածները և ոչ՝ մարդասպանները՝ հայերին վերագրելով գոյություն չունեցող արատներ. ա) քոչվորականություն, իբր հայերն իրենց հողը չեն սիրում, բ) անամոթ գիշատչի վերաբերմունք իրենց «գոհերի» նկատմամբ՝ տնտեսական բնագավառում, գ) բարոյականության բնածին պակաս, որի հետևանքով և հակահասարակական կեցվածք և այլն: Ահա՛ թե ինչպես էին թուրքերը հայերին ներկայացնում ամերիկյան և եվրոպական ժողովուրդներին: Այդ հակահայկական քարոզչությունը վարում էին թուրքական դեսպանություններն ու հյուպատոսություններն՝ իրենց ռազմական, առևտրական ու մամուլի կցորդների հետ: Դրանում ակտիվ դեր էր խաղում և արտասահմանի թուրք ուսանողությունը: Հակահայկական քարոզչությամբ հատկապես աչքի էին ընկնում գրող Խալիդե հանըմը, Վեհիբ փաշան և ԱՄՆ-ում թուրքական

¹ Ժամանակին արտասահմանում հակահայկական քարոզչության դեմ տարվող աշխատանքի բացակայությունը նկատել ու խստորեն քննադատել էր Գարեգին Նժդեհը. «Մեր ժողովուրդը ոչ միայն քաղաքականապես խաբված է, այլև բարոյապես զրպարտված Եվրոպայում և Ամերիկայում: ...Այն, ինչն արտասահմանում կոչում են հայկական քարոզչություն, ոչ այլ ինչ է, քան գթարտություն աղերսող լալկան նվնվոց, որն արտասահմանցիների մոտ առաջացնում է լոկ խղճահարություն և շարունակ աճող արհամարհանք: ...Եթե նույնիսկ, վերջին քառորդ դարում (իմա՝ 1920-45թթ.- Ա.Ա.), որևէ եվրոպական լեզվով լույս է տեսել այս կամ այն հայամետ գիրքը, ապա հեղինակն արտասահմանցի է եղել» (Գարեգին Նժդեհ, «Դաշնակցության առաջացման պատմական պայմանները և նրա բնութագիրը», հրապարակված է «Նշխարներ. Գարեգին Նժդեհ, Հովհաննես Քաջազունի» զրբույկում, Երևան, «Ազգայնական ակումբ», 2002, էջ 19: Նույն տեղում տե՛ս նաև թուրքական քարոզչության մասին էջ 33): 1940-ական թթ. Նժդեհի տված այս գնահատականից հետո դրությունն էլ լավելի է վատթարացել: Ինչպես խորհրդահայ պատմագիտությունը, այնպես էլ հայ ավանդական կուսակցությունները բացարձակապես անտեսել են սառը պատերազմի տարիներին Արևմուտքում մեծ թափ առած հայոց հին, միջնադարյան և նոր շրջանի պատմության կեղծարարությունը:

դեպի Մուխտար բեյը (ի դեպ, այսօր էլ թուրք դեսպաններն ԱՄՆ-ում և այլուր նույն գործն են անում - Ա.Ա.): Բնականաբար, թուրքական ծավալուն քարոզչությունը որոշ երկրներում պետք է խթաներ հակահայկականությունը...»¹:

4. **Ռուսաստանում հայագիտության դաշտի գրավման փորձեր:** Ամերիկյան «հայագիտության» տիրույթները գնալով ընդլայնվում են՝ ընդգրկելով նոր կարևոր երկրներ: Այսպես, ակտիվորեն սկսվել է Ռուսաստանում հայագիտության դաշտի գրավմանը միտված աշխատանքը: Պետք է ասել, որ 1970-ական թթ. ի վեր Լենինգրադում գործում էր հայանուն կեղծ-հայագիտական դպրոցի հանրահայտ կամակատարներից մեկը՝ պատմական գիտությունների դոկտոր Կարեն Յուզբաշյանը: Վերջինս երբեք էլ չի թաքցրել հայրենի հայագիտության վերաբերյալ իր դիրքորոշումը՝ դեռևս 1978թ. տված մի հարցազրույցում հստակ արտահայտելով հետևյալ միտքը. «...միայն հայերը և հայաստանցիները չեն, որ պետք է զբաղվեն հայագիտությամբ: Ճիշտ է, հայերը (մանավանդ Հայաստանում ապրողները) այս հարցում ունեն բնական մի առավելություն՝ զգացմունքային, հուզական լիցքը, արյան կանչը: Բայց ահա ուրիշներն էլ իրենց առավելությունն ունեն՝ անկանխակալ, նախապաշարումներից զերծ, սառնարյուն, ավանդույթներով չկաշկանդված, թարմ ու նորովի հայացքով երևույթներին նայելու հնարավորությունը»²:

Դժվար չէ նկատել, որ արտասահմանյան հայագիտությանն առաջնություն տալու՝ խորապես հակադիտական իր տեսակետով Կ.Յուզբաշյանը փորձում է հայկական ու, հատկապես, հայաստանյան հայագիտությունը ներկայացնել որպես կանխակալ, նախապաշարումներով լի, տաքարյուն, ավանդույթներով կաշկանդված, երևույթներին թարմ ու նորովի նայելու անընդունակ, կարճ ասած՝ սուտ գիտություն: Ճիշտ ու ճիշտ՝ ինչպես Թոմսոնն ու նրա թիմակիցները:

Նույն հարցազրույցում Յուզբաշյանը խոստովանում է, թե՝ Լենինգրադում «...մենք աշխատում ենք ոչ թե Հայաստանից հրավիրել, այլ տեղում պատրաստել հայագետներ»:³ Եվ իսկապես՝ Յուզբաշյանը պատրաստեց «նախապաշարումներից զերծ» հայագետներ, այդ թվում՝ մոլի բունիաթովական, Արցախը Ադվանք-«Ադրբեջանի» անբաժան մաս հռչակած Ֆարիդա Մամեդովային, որի թեկնածուական դիսերտացիան ինքն էլ «հաջողությամբ» ղեկավարեց:

Այժմ գործընթացները կտրուկ ակտիվացել են: 1999թ. դեկտեմբերին Ս.Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետում բացվել է «Հայագիտության բաժին», որը գործում է Կարեն Յուզբաշյանի եթե ոչ վարչական, ապա գաղափարական ղեկավարությամբ³: Այդ պահի դրությամբ՝ արևելագիտության ֆակուլտետի 130 ուսանողներից 12-ը

¹ Գարեգին Նժդեհ, Հատրնտիր, Երևան, «Հայաստան», 2001, էջ 314-315:

² Տե՛ս «Հայրենիքի ձայն», 15 նոյեմբերի 1978, № 46:

³ Կ.Յուզբաշյանի գործունեության քննադատությունը տե՛ս *Арис Казинян, «История Армении бьет в набат: Потрескается вера, а невежество утвердит лжеучение?»*, «Голос Армении», 8 декабря 2001: *Արմեն Սարգսյան, «Պատմության ճիշտ ճանապարհը»*, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 27 նոյեմբեր 1999: Տե՛ս նաև Հավելված Բ.:

մասնագիտանում էին հայագիտության մեջ, որոնցից 6-ը հայ էին, 5-ը՝ ռուս և ուկրաինացի, մեկը՝ թուրք, որը վերադառնալու էր Թուրքիա՝ Անկարայի համալսարանում հայոց լեզվի ամբիոնը գլխավորելու համար: Այս բաժնում, կեղծ-դպրոցի համապատասխան դրույթներով, դասավանդվում են հայոց լեզու, պատմություն և աշխարհագրություն առարկաները:

Բացի այդ, սկսվել է նաև բացահայտորեն հակահայկական գրականության արտադրությունը:

Նույն Կ.Յուզբաշյանը հրատարակեց մի աշխատություն՝ «*Армянская эпопея V века. От Аварайрской битвы до Нуарсака*» (Москва, 2001), որտեղ, կրկնելով կեղծ-հայագիտության մի շարք դրույթներ (ինչպես, օրինակ, Մովսես Խորենացուն ստախոսության մեջ մեղադրելը), հարձակումների ենթարկեց դրանց քննադատությամբ հանդես եկած հայաստանցի մասնագետներին: Ահավասիկ. «Многие исследователи пришли к выводу, что Мовсес Хоренаци жил не в V веке, а много позже, доводя датировку до IX века. Получалось, что, представляя себя учеником Месропа Маштоца и католика Саака, их младшим современником, автор прибегал к подлогу. К сожалению, к критике литературного и очень сложного памятника подключились и обывательские голоса, которые порой с угрозами по адресу противников настаивали на традиционной точке зрения, придав полемике вокруг чисто академической проблемы крайне нездоровый характер»¹ (ընդգծումն իմն է - Ա. Ա.):

Հայկական խորհրդանիշների դեմ ձեռնարկված **մշտական** արշավում՝ Կ.Յուզբաշյանը միացավ նաև քրիստոնեությունը Հայաստանում պետականորեն ընդունելու 1700-ամյա տարելիցի անհիմն և անպատեհ քննադատությանը՝ պնդելով, թե հայերն իբր դարձի են եկել ոչ թե 301, այլ 314 թվականին (մասնավորապես, այդպիսի մի ելույթ ունենալով Ս.Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետում գումարված գիտաժողովում):

Բոլորովին վերջերս՝ 2003թ. Մոսկվայի «Ակադեմկնիգա» հրատարակությունում լույս տեսավ Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ազգաբանության և մարդաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, *Academia Europaea*-ի անդամ, պատմական գիտությունների դոկտոր Վ.Ա.Շնիրելմանի «Հիշողության պատերազմներ: Առասպելները, ինքնությունը և քաղաքականությունը Անդրկովկասում» աշխատությունը²: Հակահայկական քարոզչությամբ լի այս գիրքը մինչև այսօր չի գրախուսվել Ռուսաստանում աշխատող հայ մասնագետների կողմից, թեև, թվում է, թե հե՛նց դա պետք է լիներ նրանց հիմնական գործերից մեկը: Այն չի գրախուսվել նաև Հայաստանում, ինչը ևս մեկ անգամ ցույց է տալիս հայրենի հայագիտության՝ դիմադրական հատկություններ չունենալը: Մանրամասն գրախոսությունը թողնելով մեկ այլ առիթի՝ նշենք, որ այս աշխատությունը կեղծ-հայագիտական մտքի լուրջ և շատ նշանակալի զարգացումն է: Այն գրված է ամերիկյան հայագետների գաղափարական ու քարոզչական նույն զինանոցի կիրառմամբ, ինչ-

¹ К.Юзбашян, «Армянская эпопея V века. От Аварайрской битвы до Нуарсака», Москва, 2001, с. 34.

² В.А.Шнирельман, «Войны памяти. Мифы, идентичность и политика в Закавказье» (Москва: ИКИ «Академника», 2003), 591 с.

պես նաև նրանց աշխատությունների հրաշալի իմացությամբ և օգտագործմամբ:

Այսինքն՝ ամերիկյան «հայագիտությունն» ինքն իրեն աջակցություն կազմակերպեց և ստացավ արդեն Ռուսաստանից: Նշանակում է՝ նպատակ է դրված հայաստանյան հայագիտությունը համաձայնեցված բազմակողմանի հարձակման ենթարկել նաև արևելագիտության կենտրոն այն երկրներից, որտեղ հայագիտությունը դեռևս ձեռք չի բերել հակահայկական ամբողջական դիմագիծ: Այս ամենի հետևանքները կարող են լիովին կործանարար լինել մեզ համար, եթե մենք շուտափույթ պատասխան քայլեր չձեռնարկենք: Ընդ որում՝ Ռուսաստանում սկսեցին կիրառվել *հայկական համայնքի գումարներով հակահայկական քարոզչություն կազմակերպելու*՝ ԱՄՆ-ում արդեն հաջող փորձարկում անցած եղանակները: Օրինակ՝ Կ.Յուզբաշյանի վերոհիշյալ գիրքը հրատարակվել էր Ռուսաստանի հայերի միության միջոցներով:

Բ. Հետևանքները Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման գործում. -

1. Հայաստանում և Սփյուռքում հայոց պատմության հանգուցային հարցերի տարբեր ուսուցումը, այլ կերպ ասած՝ պատմական հիշողության երկպառակումը, նոր վիճակ է բացում հայրենի և տարագիր հայության միջև: Այդպիսով դաստիարակվում են երկու տարբեր նկարագրեր:

Այս առումով առաջանում է արտերկրում և Հայաստանում հայոց պատմության դասագրքերի միասնականացման խնդիրը:

2. Կեղծ-հայագիտության արտադրանքը սփյուռքահայ զանգվածների մեջ դաստիարակում է ազգային թերարժեքության բարդույթ՝ ընդամին ներարկելով հայկական մշակույթի նկատմամբ արհամարհանք և ստորակարգության զգացումներ¹:
3. Միաժամանակ, կեղծ-հայագիտությունը նպատակապես կերպով վարկաբեկում է Հայաստանում հեղինակված հայագիտական գրականությունը, հայրենի անաչառ մասնագետներին պիտակավորում «ազգայնամոլ» ու «սահմանափակ»՝ դրանով իսկ սփյուռքահայ (նաև օտար) ընթերցողին ներշնչելով արհամարհական վերաբերմունք հայրենի գիտնականների նկատմամբ:

Գ. Հետևանքները բուն հայաստանյան հայագիտության զարգացման համար. -

1. Խորշելով միջազգային գիտական միջավայրում ինքնուրույն ակտիվ դերակատարությունից կամ դրա ձգտումից՝ հայրենի հայագիտությունը (հատկապես՝ պատմագիտությունը) պարփակվում է ինքն իր մեջ, չի զգում մեթոդաբանական հնացած ապարատը հասարակագիտական բազմաթիվ նոր եղանակներով հարստացնելու ներքին կարիքը, դրանով իսկ լրջորեն հետ է ընկնում միջազգային հասարակա-գիտությունից:
2. Ամերիկյան կեղծ «հայագիտության» հայեցակարգային ու տեղեկատվական ընդհանուր գերիշխանությունը միջազգային հայագիտական դաշտում ինքնըստինքյան

¹ Արմեն Այվազյան, «Հիմնատարրեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի», մասն Ա (2003), էջ 139-146:

մեծապես ճնշում է հայաստանցի մասնագետներին՝ նրանցից շատերին ստիպելով գիտակցաբար կամ ենթագիտակցաբար նահանջել գիտական հիմնավոր, ինչպես նաև նախկինում արտահայտած սեփական տեսակետներից՝ անքննադատաբար որդեգրելով թերի և կեղծ օտարածին տեսություններ:

3. Ամերիկյան «հայազգիտության»՝ հայաստանյան հայազգիտության նկատմամբ ունեցած վարչական, կազմակերպչական, ֆինանսական ու կադրային զարգացման (գրավիչ կարիերա ապահովելու առումով) ռեսուրսների բացահայտ գերակշռությունը հայրենի հայագետների նոսրացած շարքերում առաջ է բերում խոր ճեղքեր, որոնք մտածված և նրբորեն կառուցվում են անձնական թշնամության դժվար հաղթահարելի հիմքի վրա:
4. Այս ամենին գումարվում է Հայաստանում հայազգիտության *դեկալարության* արդեն իրականություն դարձած գրեթե ամբողջական կոռուպցիան և հնազանդությունն ամերիկյան «հայազգիտական» դպրոցին (ի դեմս ՀՀ ԳԱԱ փոխնախագահ ու ակադեմիկոս Վլ.Բարխուդարյանի, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ Բ.Հարությունյանի):
5. Այսպիսով՝ ռեալ վտանգ կա, որ հայրենի հայազգիտությունը մի կողմից՝ անկարող կգտնվի պահպանելու իր արձանագրած անառարկելի ձեռքբերումները նույնիսկ ներքին շրջանակներում և աստիճանաբար լիովին կորդեգրի «ամերիկյան» ուղեգիծ՝ դրսից ենթարկվելով լիակատար վերահսկողության ու կառավարման, մյուս կողմից՝ անհուսալիորեն հետ կընկնի համաշխարհային գիտության չափանիշներից: Այդ սցենարի իրականացման դեպքում՝ հայրենի հայագետների համար վերապահված է սոսկ «հում նյութ» ապահովելու մի խնդիր՝ բնագրերի պատրաստում և մատակարարում, իսկ հայոց պատմության և մշակույթի հայեցակարգային խնդիրները զոհվելու և լուծվելու են դրսում՝ մտավոր հզոր լծակներ տրամադրելով հայության վրա իշխել ցանկացող օտար ուժերին:

Եզրակացություններ

Հայազգիտության զարգացման հիմքում պետք է դրվեն հետևյալ ռազմավարական սկզբունքները.

1. Հայեցակարգային ինքնուրույնության ձեռքբերում և զարգացում: Հայաստանի պատմության ողջ հայեցակարգը պետք է վերանայվի՝ հիմքում ունենալով հայոց պետականության, նրա զինված ուժերի, մշակույթի, գաղափարախոսության և, որ ամենակարևորն է, ազգային արժանապատվության փաստարկված պաշտպանությունը:
2. Ֆինանսական ինքնուրույնության ձեռքբերում և զարգացում: Հայաստանի հայազգիտությունը պետք է ֆինանսավորվի Հայաստանի վերահսկողության տակ գտնվող միջոցներով: Ուստի կրկնում են այն առաջարկը, որ արել են դեռևս 1998թ.՝ այս հարցերին նվիրված մենագրության մեջ. անհրաժեշտ է կառավարության հովանու ներքո շուտափույթ ստեղծել հայազգիտության զարգացման հատուկ հիմնադրամ,

որը նպատակային շնորհներ ու կրթաթոշակներ կտրամադրի փաստացի աշխատավարձից զուրկ անհատ գիտնականներին, գիտական առանձին խմբերին, ինչպես նաև հայագիտության ասպարեզ մուտք գործող երիտասարդներին:

3. Ազգային շահերի և դրանց պաշտպանության գիտակցում: Յուրաքանչյուր հայաստանցի հայագետ պետք է հրաշալի պատկերացնի համազգային շահերը և իր աշխատանքում փորձի որևէ կերպ նպաստել դրանց՝ բնականաբար, մնալով գիտական ճշմարտացիության սահմաններում:
4. Հայագիտության ազատագրում բարխուդարյանական պատեհապաշտ, ազգային պատմությունն ու շահերն աճուրդի հանած ամուլ ղեկավարությունից և ազգային մտածելակերպով օժտված, պատրաստված և սկզբունքային ղեկավարության հաստատում:
5. Ազգային արժանապատվության պաշտպանություն հայագիտական բոլոր այն բնագավառներում, որտեղ հայությունը ենթակա է հարձակումների:
6. Առողջ քննադատության խրախուսում թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում գրված հայագիտական գրականության վերաբերյալ: Հայաստանյան հայագիտությունը պարտավոր է ժամանակին արձագանքել պատմական կեղծարարություններին և աղճատումներին (օրինակ՝ պետք է ի մի բերել ու մեկ հաստափոր հատորով հրատարակել պատմահայր Խորենացու և նրա «Հայոց պատմության» արժանահավատությունը հաստատած բազմաթիվ ուսումնասիրությունները):
7. Գիտական բարոյականության հաստատում և անբարեխղճության մերժում, խստագույն վերաբերմունք ստին ու կեղծիքին:
8. Հայրենի հայագիտության հայեցակարգային սկզբունքներով նոր կադրերի պատրաստում՝ օտար լեզուներին (հատկապես՝ անգլերենին) վարժ տիրապետող երիտասարդներից:
9. Միջազգային ասպարեզում անգլերեն և ռուսերեն բարձրորակ թարգմանություններով և հրատարակություններով հանդես գալը: Հայաստանյան հայագիտությունը պարտավոր է սեփական գիտական աշխատություններով դուրս գալ միջազգային ասպարեզ, մասնավորապես՝ ձեռնարկելով կարևոր ուսումնասիրությունների անգլերեն և ռուսերեն թարգմանությունն ու հրատարակությունը: Անհրաժեշտ է նաև ժամանակին հայերենի թարգմանել օտար լեզուներով լույս տեսած արժեքավոր աշխատությունները¹:

Առանց Հայաստանի կառավարության աջակցության՝ այս խնդիրներում հաջողություն ակնկալելն անհնար է:

¹ Որոշակի ձևափոխություններով՝ նշված սկզբունքները ենթակա են պարտադիր կիրառման ոչ միայն հայագիտության, այլև ընդհանրապես հայ հասարակական մտքի զարգացման համար:

Պրոֆ. Լ.Զեքիյանը Թուրքիայում և վենետիկյան «գիտաժողովը»

Ստորև առաջին փաստաթուղթը ներկայացնում է հատվածաբար մեջբերում Ստամբուլում հրապարակվող «Ժամանակ» օրաթերթում՝ 2002թ. ապրիլի 4-ին տպագրված մի հոդվածը: Ուշադրություն դարձնենք նաև այն հանգամանքի վրա, որ Լ.Զեքիյանի այցը կատարվել է Թուրքիա ապրիլյան եղեռնի տարելիցի նախորդին (ներքոշարադրյալում կատարված ընդգծումներն իմն են՝ Ա.Ա.):

Այնուհետև ներկայացված է «Ազգ» թերթում (27.10.2004) հրապարակված Հ.Չաքքյանի վերլուծականը՝ նվիրված Վենետիկում Լ.Զեքիյանի կազմակերպած «գիտաժողովին»: Կարծում ենք, ակնհայտ է կապը Զեքիյանի Թուրքիա կատարվող հաճախակի այցերի և նրա կազմակերպած վենետիկյան «գիտաժողովի» միջև (ի դեպ, Զեքիյանը ծառայել է թուրքական բանակում, Թուրքիայում էլ պաշտպանել է իր դոկտորականը): «Հայերն ու թուրքերը պատմության մեջ 1000 տարվա վաղեմության հարաբերություններ» խոստովանող վերնագրով այս գիտաժողովին արտերկրից մասնակցելու էին Լևոն Զեքիյանը, Ռեյմոն Գևորգյանը, Իվ Թերնոնը, Թուրքիայից՝ Հալիլ Թերքթայը, Մուրադ Բելգեն, Բասքըն Օրանը, Ֆերիաթ Քենթելը և Ռազըփ Զարաքոլուն, ԱՄՆ-ից՝ Թաներ Աքչամը, իսկ Հայաստանից՝ Ռուբեն Սաֆրաստյանը:

Փրոֆ. Հայր Լևոն ծ. վրդ. Զեքիյան վաղը կեսօրին հրաժեշտ պիտի առնե քաղաքես

(Հայտնի մտավորականը Իսթանպուլի և Անգարայի մեջ վերջին օրերուն մեկտեղվեցավ թուրք ակադեմական շրջանակներու հետ)

Սփյուռքահայ ակնավոր մտավորական, Վենետիկի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Փրոֆ. Հայր Լևոն ծ. վրդ. Զեքիյան, որ վերջին օրերուն կգտնվեր Թուրքիո մեջ, վաղը կեսօրվան ժամերուն պիտի վերադառնա Իտալիա: Այս առավոտ հաճույքն ունեցանք խմբագրատանս մեջ ընդունելու Հայր Լևոն ծ. վրդ. Զեքիյանը, որ փութաց հրաժեշտ տալ «Ժամանակ»-ի ընտանիքին:

Ինչպես միշտ, այս անգամ ևս շատ հաճելի գրույց մը ունեցանք Վարդապետին հետ: Ան մեզի բացատրություններ տվավ իր կեցության օրերու շփումներուն մասին:

Ինչպես ծանոթ է, փրոֆ. Հայր Լևոն ծ. վրդ. Զեքիյան սերտ կապեր ունի թուրք մտավորական և ակադեմական շրջանակներու հետ: Այսպես, Իսթանպուլի մեջ կեցության օրերուն ան փրոֆ. Այսուն Թոքթաթլոլուի հրավերով այցելած է Պիլկի համալսարան, ուր հանդես եկած է դասախոսությունով մը: Այս առթիվ Հայր Լևոն ծ. վրդ. Զեքիյան հանգամանորեն խոսած է թրքագիր հայ բանաստեղծներու ու գրողներու և թուրք մշակույթի մեջ անոնց ունեցած տեղին մասին:

Նույնպես քաղաքիս մեջ, Հայր Զեքիյան հանդիպում մըն ալ ունեցած է Իսթանպուլի համալսարանի փիլիսոփայության բաժնի վարիչ փրոֆ. Շաֆաք Ուրալի հետ:

Ինչպես հաղորդած էինք, Հայր Լևոն ծ. վրդ. Զեքիյան քանի մը օրվան համար մեկնած է նաև մայրաքաղաք Անգարա, ուր ևս համախմբված է ակադեմականներու հետ: Այսպես, ան տեսակցած է Անգարայի համալսարանի Լեզվի, Պատմության ու Աշխարհագրության ֆաքուլթետի պատմության բաժնի վարիչ փրոֆ. Մահմուտ Շաքիրօղլուի հետ: Հայր Զեքիյան տեսակցած է նաև նույն ֆաքուլթետին Պիրսեն Գարաճայի հետ, որ հայագիտության ամպլոնի ստեղծման աշխատանքները կվարե:

Հայր Զեքիյան այցելած է նաև Հաճեթթեփեի համալսարանը, ուր տեսակցած է փրոֆ. Ֆիլիպ Ենիշեհիրիօղլուի, փիլիսոփայության ամպիոնի վարիչ փրոֆ. Եոհաննա Քուշուրատիի, ինչպես նաև տոքթորայի թեկնածու Նուրտան Միրպահանի հետ:

Անգարայի այս շփումներն վերջ Հայր Զեքիյան վերադարձած է Իսթանպուլ: Ան այսօր կայցելե Պոմոնթի Մխիթարյան վարժարան և հետմիջորեն Էսայան Սանուց Միության մեջ կդասախոսե «Մենք և մյուսները» նյութին շուրջ...

«Ազգ», #190, 27/10/2004

Հայկական հարցին նվիրված գիտաժողով Վենետիկում

Թե՛ այդ հարցն առանց Հայաստանի մասնակցության լուծելու արատավոր պրակտիկայի նոր դրսեւորում

Հակոբ Չաքրյան

Նախորդ համարում «Ազգը» տեղեկացնելով Եվրոպայում Հայոց ցեղասպանության ճանաչման եւ Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների կարգավորման խնդիրների շուրջը քննարկումների աշխուժացման մասին, քննարկումները պայմանավորել էր հայկական նախաձեռնություններով, իսկ նախաձեռնությունները՝ Եվրոմիության շահագրգռություններով:

Նախաձեռնությունների պարագայում խոսքն առաջին հերթին վերաբերում էր հոկտեմբերի 18-19-ը Բյուուսելում Եվրոխորհրդարանի հովանու ներքո, ՀՅԴ Հայ դատի, Եվրոմիության հանձնախմբի եւ իրեն Եվրոպահայերի ֆեդերացիա կոչող կազմակերպության համատեղ ջանքերով կազմակերպված Եվրոպահայերի առաջին համագումարին, ինչպես նաեւ հոկտեմբերի 28-30-ը Վենետիկում «Հայերն ու թուրքերը պատմության մեջ. 1000 տարվա վաղեմության հարաբերություններ» թեմայով կազմակերպվող գիտաժողովին:

Հիշեցման կարգով նշենք, որ գիտաժողովին հոկտեմբերի 15-ի համարում անդրադարձել է «Ակօսը»: **Թեւ Ստամբուլում հրատարակվող այս շաբաթաթերթը կազմակերպիչների մասին չի նշել, սակայն գիտաժողովի հրավիրման վայրը եւ դրա աշխատանքներին Լեւոն Զեքիյանի, Ռայմոն Գեւորգյանի մասնակցությունը որեւէ կասկած չի հարուցում, որ հայկական է նաեւ գիտաժողովի նախաձեռնությունը** (ընդգծումն իմն է՝ Ա.Ա.):

Ի դեպ, գիտաժողովին Հայաստանից մասնակցում է ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ Ռուբեն Մաֆրաստյանը, ըստ երեւոյթին, Զեքիյանի եւ Գեւորգյանի նման առանց զեկուցման, քանի որ «Ակօսը» զեկուցողների շարքում չի նշում հայաստանցի թուրքագետի անունը: Ինչ վերաբերում է գիտաժողովի մյուս մասնակիցներին, ապա նրանցից Թաներ Աքչամը հանդես է գալու «Իթթիհադական լուծում Հայկական հարցին եւ հանրապետական թուրքի ինքնության խնդիրը» զեկուցմամբ, Իվ Թերնոնը «Ուրացման հոգեբանությունը», Մուրադ Բելզեն՝ «Հայկական հարցը եւ մարդու իրավունքները», Բասքըն Օրանը՝ «Մի տարուի ծագումը. Հայկական հարցում թուրքական հանրային կարծիքի պատմահոգեբանական արգելքը», Ֆերիադ Քեմալը՝ «Թուրքիայում հայ լինելու արվեստը», Ռազըփ Զարաբոյուն՝ «Օսմանյան բազմատարր հասարակությունից դեպի հանրապետության շրջանի ազգային գերիշխանություն. ո՞րն է ելքի ճանապարհը» զեկուցումներով:

Բոլոր զեկուցումներն ուղղակիորեն վերաբերում են Հայոց ցեղասպանությանը կամ առնչվում ցեղասպանության խնդրին, քանի որ Հայկական հարցը ներկայիս ըմբռնմամբ, հատկապես

թուրք գիտնականների հետ հանդիպումներում ներառում է այդ խնդիրը: Իսկ Թուրքիայում առկա տաբուն, ինչպես նաև թուրքական հանրային կարծիքի առջև ծառացած պատմահոգեբանական արգելքն անմիջականորեն բխում են ցեղասպանությունից:

Հայկական նախաձեռնությամբ կազմակերպված այս գիտաժողովը, ինչպես «Ակօսն» է վկայում, հրավիրվել է պատմական ընդարձակ ժամանակահատվածի ծիրում թուրք գիտնականների հետ Հայկական հարցը բազմակողմանի քննարկելու եւ կողմերի մերձեցմանը նպաստելու նպատակով: Թերեւս այդ առումով պատահական չէ գիտաժողովի թեման, առավել եւս՝ դրա «1000 տարվա վաղեմության հարաբերություններ» ձեւակերպումը:

«Գողմերի մերձեցման» հանգամանքը պարզ չէ: Սակայն հարաբերությունների պարագայում խնդրո առարկան Հայաստանի նկատմամբ Թուրքիայի որդեգրած քաղաքականության հետեւանքով դրանց չկարգավորվածությունն է: Գուցե Վենետիկում թուրք գիտնականների հետ հայ-թուրքական հարաբերությունների, Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանության քննարկումները չանդրադառնան Հայաստանի վրա, սակայն քննարկումների արդյունքներն անդրադառնալու են:

Անդրադարձը հատկապես նկատելի է լինելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում, քանի որ ճանաչումը Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգի հիմնախնդիրներից է: Եթե մի կողմ թողնենք այն, որ Վենետիկի գիտաժողովին հայաստանցի գիտնականը մասնակցում է առանց զեկուցման, ինչը Հայաստանի ներկայությունն այնտեղ դիտորդի կարգավիճակով է սահմանափակում, անհնար է շրջանցել կազմակերպչական թերությունները: Այն առումով, որ գիտաժողովին 4 հայ մասնակցի դիմաց հրավիրվել է 6 թուրք մասնակից, ընդ որում զեկուցմամբ հայ մասնակիցներից հանդես է գալու միայն մեկը, իսկ թուրք մասնակիցներից՝ բոլոր վեցը:

Այս անհամաչափությունը մտահոգության տեղիք է տալիս հատկապես Հայոց ցեղասպանության հիմնախնդիրն ուղղակի կամ Հայկական հարցի ենթատեքստում թուրք գիտնականների հետ քննարկելու առումով: Մտահոգությունն էլ ավելի է խորանում, երբ քննարկումների հիմքում դրվում է «կողմերի մերձեցմանը նպաստելու» նպատակը:

Մտահոգության պարագայում խնդիրը սոսկ գիտաժողովի մասնակիցների քանակական անհամաչափությունը չէ, այլ հայկական նախաձեռնությամբ պայմանավորվող այս միջոցառումները հայկական իրականությունից կտրելու, Հայոց ցեղասպանության, հայ-թուրքական հարաբերություններին առնչվող խնդիրները թուրքական կողմի հետ քննարկելիս Հայաստանն անտեսելու դրսևորումներն են: Եթե քննարկումը ենթարկվում է քննարկվող հիմնահարցերի լուծմանը, ուրեմն Վենետիկի գիտաժողովի կազմակերպիչներն էլ հետամուտ են Հայկական հարցն առանց Հայաստանի մասնակցության լուծելու արատավոր պրակտիկային:

**Հայագիտության «ջահակիրը» Ռուսաստանում
(նյութեր Կ. Յուզբաշյանի գործունեության մասին)**

1.

**Գրախոսություն թե՞ զրախոսություն
կամ**

պետերբուրգյան «փաստաբանը» պաշտպանում է ամերիկյան «հայագետներին»¹

Արմեն Այվազյան

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 1999թ. հոկտեմբերի 16-ի համարը՝ «Գրախոսություն» խորագրի տակ լույս է ընծայել պետերբուրգցի պատմաբան Կարեն Յուզբաշյանի «Ամերիկյան հայագիտությունը Ա.Այվազյանի դատաստանի առջև» նյութը, որ նվիրված է մեր՝ «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսությամբ» (Երևան, «Արտագերս», 1998, 259 էջ)։ Ուրախալի է, որ վերջապես՝ 10-ամսյա ետնաբեմային խուլ տրտունջներից հետո, ամերիկյան կնձ-հայագիտության կողմնակիցներից մեկը գրիչ է վերցրել և «հանդես եկել» իր անդրօվկիանոսյան գործընկերների պաշտպանությամբ։ Սակայն, կարդալով Յուզբաշյանի հրապարակումը, ընթերցողը որևէ պատկերացում չի կազմում «զրախոսվող» աշխատության արժանիքների, թերությունների և նույնիսկ՝ բուն բովանդակության մասին։ Ցավոք, Յուզբաշյանն ընտրել է «զրախոսության» հետ ընդհանուր եզրեր չունեցող՝ իրեն հայտնի բոլորովին այլ մի ժանր, որի բնույթն ու հատկանիշները կճշտենք ստորև։

Նախ՝ տեսենք, թե ինչպե՞ս է Կ.Յուզբաշյանը «փրկում» ամերիկյան հայագիտությունը «դատաստանից», այլ կերպ ասած՝ քննենք նրա փաստարկները, արդյոք դրանք հերքում են մեր առաջադրած «մեղադրանքները»։ Ամբողջությամբ մեջբերում ենք Յուզբաշյանի «պաշտպանական» ելույթը՝ Ռ.Սյունիին վերաբերող մասում (ուղղանկյունաձև փակագծերում կատարել ենք անհրաժեշտ սրբագրումներ և վերծանումներ)։ Աշխատության գրեթե կեսը ուղղված է Ռուլանդ Գրիգոր Սյունու «Հայացք դեպի Արարատ. Հայաստանը նոր պատմության մեջ» (անգլերեն, 1998) գրքի դեմ [ոչ թե Ռուլանդ, այլ Ռոնալդ, և ոչ թե 1998, այլ 1993]։ Ա. Այվազյանը աշխատում է հասկացնել ընթերցողին, որ դա [՝] ոչ միայն անօգուտ, այլ[և] նույնիսկ վտանգավոր գործ է։ Կետ առ կետ նա շարադրում է այն դրույթները, որոնք իր կարծիքով անընդունելի են։ Բայց ի՞նչ սկզբունքով է մոտեցել իր խնդրին [՝] ինքը՝ Ռ.Գ.Սյունին, ո՞րն է նրա ելակետը, մնում է անհայտ։ Այս մանրամասների մեջ կորչում է հիմնականը՝ ո՞րն է վերջապես եղել այդ գրքի գիտական հիմնադրույթը։

Ընդամենն այսքանը. այս 5 նախադասությունն է դրված մեր ուսումնասիրության 19-114 էջերի դիմաց՝ որպես յուզբաշյանական նկատառում և քննադատություն։ Հատկապես տպավորիչ է պետերբուրգյան «փաստաբանի» հաստատական հարցապնդումը՝ թե ո՞րն է, ի վերջո, Սյունիի գրքի «գիտական հիմնադրույթը»։ Ընթերցողին տեղյակ պահենք, որ Սյունիի գրքում մեզ, ցավոք, չի հաջողվել հայտնաբերել որևէ լուրջ խնդրի գիտական քննություն, առավել ևս՝ այդպիսի «հիմնադրույթ»։ Անհասկանալի է մնում, սակայն, գրախոս-«փաստաբանի» վարքագիծը. ինչու՞ ինքը, թեև պարտավոր է, չի բացահայտում Սյունիի գրքում առկա առեղծվածային այդ «գիտական հիմնա-

¹ Մեր այս պատասխանը հանձնել էինք «Ազգ» թերթին դեռևս 1999թ. հոկտեմբերին, սակայն բազմակի խոստումներից հետո, խմբագրությունն այն այդպես էլ չտպագրեց։

դրույթը», ինչու՞ չի փորձում կետ առ կետ հերքել Սյունիի դեմ առաջ քաշված «մեղադրանքները», դրանցից որևէ մեկը չի արժարժում և, վերջին հաշվով, մենմենակ է թողնում իր «պաշտպանյալին»՝ Ա.Այվազյանի դատաստանի առջև:

Ինչևէ, համարելով, որ Սյունին փայլուն կերպով արդարացված է, Յուզբաշյանն անմիջապես անցնում է Ռոբերտ Թոմսոնի «պաշտպանությանը»: Այս անգամ 47 էջանոց «մեղադրականին» (տե՛ս մեր 122-169 էջերը)՝ հակադրում է հետևյալ խառնիխուռն, հայերենին խորթ շարադրանքը (մեր նշումները դարձյալ ուղղանկյունաձև փակագծերում են). Ռ. Թոմսոնի՝ Մովսես Խորենացու անգլերեն (այժմ լայն շրջանառության մեջ մտած) թարգմանությունը դիտվում է որպես ոչ ավել, ոչ պակաս «խայտառակ հրատարակություն» (էջ 109, ծան. 187): Գիտնականը ներկայացվում է իբրև «հայաստաց», ընդ որում այդ գործը պատվիրել են Ռոբերտ Թոմսոնին համապատասխան մարմիններ (էջ 181) [181 էջում Թոմսոնն առհասարակ չի հիշված]: Քիչ հետո խոսք կլինի արդեն «թոմսոնների մասին»: ***Մնում է զարմանալ՝ ինչպե՞ս է միջազգային գիտական հանրությունը անտեսել այդ հանգամանքը [՝] և կուրորեն դիտում է [!] Ռ. Թոմսոնին որպես հայ դասական մատենագիտության [՝, հավանորեն՝ մատենագրության] լավագույն գիտակներից մեկին [!]:***

Ինչ խոսք, փառահեղ պաշտպանություն է. Յուզբաշյանն այս գործն էլ «շահեց»: Նույն ոճով և որակով գրված 10 նախադասություն ևս ու... «փաստաբանն պետերբուրգյան» «շահում» է նաև Ն.Գարսոյանի ու Լ.Ավդոյանի «գործերը» (այն է՝ մեր 111, 119-120, 185-205 էջերը): Այնուհետև ծայր են առնում փնջաձև պիտակավորումները. «Առանց չափազանցության, -- առաջ է անցնում Յուզբաշյանը, -- կարելի է ասել, որ գրքի բովանդակությունը կազմում է [են] ոչ թե բուն առարկան և նրա վերլուծությունը, այլ հեղինակի պարզ չարախոսությունը հայոց պատմության բազում մշակների դեմ... Միրողը անտեսում է մեր գիտելիքների հարաբերականությունը, իր տեսակետը դիտում է որպես եզակի և թշնամանքով լցվում այլախոհի նկատմամբ... Բայց դիլետանտիզմը չէ միայն, որ ծնունդ է տվել Ա.Այվազյանի գրքին» և այլն:

Իսկ այժմ՝ ավելի լուրջ խնդիրների մասին: Յուզբաշյանը «չի հասկացել», թե ինչու՞ է Թոմսոնը հայաստաց հեղինակ: Համառոտ կրկնենք այն, ինչ գրքում մանրամասնորեն ապացուցված է: Թոմսոնը՝

1. միտումնավոր կեղծել է Մովսես Խորենացու բնագիրը.
2. իրենց ապրած ժամանակից՝ 5-րդ դարից, փորձել է տեղաշարժել Մովսես Խորենացուն դեպի 8-րդ դարի երկրորդ կես, իսկ Եղիշեին՝ դեպի 6-րդ դարի վերջերը.
3. ընդսմին՝ փորձել է հռչակել հայ ոսկեդարի այդ երկու մեծերի աշխատությունները պատմական հավաստի նյութից գուրկ.
4. փորձել է վարկաբեկել ինչպես Մովսես Խորենացու և Եղիշեի անձերը, այնպես էլ միջնադարյան հայ պատմագրությունն ամբողջությամբ.
5. անդամատել է Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» վերնագիրը՝ անգլերեն թարգմանությունից ջնջել է «Հայոց» բառը.
6. միտումնավոր անտեսել է Հայաստանի պատմաբանների աշխատությունները.
7. միտումնավոր շրջանցել է սկզբնաղբյուրների այն հաղորդումները, որոնք հակասում են իր կանխադրույթներին.
8. Թոմսոնի ջանքերով՝ Արևմուտքում Մովսես Խորենացու և Եղիշեի երկերն այլևս չեն օգտագործվում որպես արժանահավատ սկզբնաղբյուր:

Ահավասիկ՝ մի նմուշ հայոց պատմության այդ «երախտավոր մշակի» արտադրանքից. «Փաստորեն, -- գրում է Թոմսոնը, -- Մովսեսը (Խորենացին) լկտի ու կեղծարար մի խաբեբա է», «առաջին կարգի աճպարար... Խիստ մեթոդաբանության մասին նրա հանդիսավոր հայտարարու-

թյունները նպատակ են ունեցել խաբել, շեղել քննադատական հայացքը և ապահովել իր սեփական տենդենցիոզ շարադրանքի ընդունելությունը» (գրքիս մեջ զետեղել ենք նաև այս և նման հայտարարությունների անգլերեն բնագրերը, տե՛ս էջ 129-131):

Մա՞ է միջազգային գիտական հանրության կողմից ճանաչված Ռ.Թոմսոնի՝ Կ.Յուզբաշյանի որակումով՝ «որպես հայ դասական մատենագիտության լավագույն գիտականներից ՄԵԿԻՆ-ի» հայագիտությունը: Արդյո՞ք այսքանը չի բնութագրում Թոմսոնին իբրև հայատյաց: Ու՞մ պարզ չէ, որ հայերի Պատմահայր Խորենացուն անվանարկելով՝ անվանարկում են հայ ազգն ամբողջությամբ: Այս ճշմարտությունը կարող է չհասկանալ միայն ազգային արժանապատվությունը վաղուց կորցրած մարդը, մասնավորապես՝ Կարեն Յուզբաշյանը, որ ամենուր բարձրաձայն քարոզում է, թե Թոմսոնին պետք է ընտրել ՀՀ Ազգային ակադեմիայի իսկական անդամ:

Սակայն չգարմանանք. Կ.Յուզբաշյանը երբեք էլ չի թաքցրել հայրենի հայագիտության վերաբերյալ իր դիրքորոշումը՝ դեռևս 21 տարի առաջ տված մի հարցազրույցում հստակ արտահայտելով հետևյալ միտքը. «...միայն հայերը և հայաստանցիները չեն, որ պետք է զբաղվեն հայագիտությամբ: Ճիշտ է, հայերը (մանավանդ Հայաստանում ապրողները) այս հարցում ունեն բնական մի առավելություն՝ զգացմունքային, հուզական լիցքը, արյան կանչը: Բայց ահա ուրիշներն էլ իրենց առավելությունն ունեն՝ անկանխակալ, նախապաշարումներից զերծ, սառնարյուն, ավանդույթներով չկաշկանդված, թարմ ու նորովի հայացքով երևույթներին նայելու հնարավորությունը» (տե՛ս «Հայրենիքի ձայն», 15 նոյեմբերի 1978 թ., № 46):

Դժվար չէ նկատել, որ արտասահմանյան հայագիտությանն առաջնություն տալու՝ իր խորապես հակադիտական տեսակետով Կ.Յուզբաշյանը փորձում է հայկական ու, հատկապես, հայաստանյան հայագիտությունը ներկայացնել որպես կանխակալ, նախապաշարումներով լի, տաքարյուն, ավանդույթներով կաշկանդված, երևույթներին թարմ ու նորովի նայելու անընդունակ, կարճ ասած՝ սուտ գիտություն: Ճիշտ ու ճիշտ՝ ինչպես Թոմսոնն ու նրա թիմակիցները:

Նույն հարցազրույցում Յուզբաշյանը խոստովանում է, թե՛ Լենինգրադում «...մենք աշխատում ենք ոչ թե Հայաստանից հրավիրել, այլ տեղում պատրաստել հայագետներ»: Եւ իսկապես՝ Յուզբաշյանը պատրաստեց «նախապաշարումներից զերծ» հայագետներ, այդ թվում՝ մոլի բունիաթովական, Արցախը Աղվանք-Աղրբեջանի՝ անբաժան մաս հռչակած Ֆարիդա Մամեդովային, որի թեկնածուական դիսերտացիան ինքն էլ «հաջողությամբ» դեկլարեց: Պատահական չէ, որ՝ «Հայոց պատմությունը Հայաստանի ռազմավարական անձեռնմխելի պաշարն է» մեր առաջադրած բանաձեռը Յուզբաշյանին կասպիական դողերոցի մեջ է գցել: Չէ՞ որ՝ որոշ «հայագետների» համար հայոց պատմությունը եղել և մնում է սոսկ առուծախի առարկա:

Սակայն արդյոք Հայաստանի գիտական հանրությունը երբևէ միահամուռ արժանի գնահատական տվե՞լ է Ռ.Թոմսոնին կամ Կ.Յուզբաշյանին: Ո՛չ, տակավին չի տվել: Մա՛ է հիմնական ցավն ու խնդիրը:

Հավատարիմ մնալով Հայաստանի գիտական միտքը քամահրելու իր հիվանդագին դիրքորոշմանը՝ Յուզբաշյանը մեզ ևս համարում է տեղացի, հետևապես՝ դիլետանտ, սիրող, գիտությունն անտեղի քաղաքականացնող, ամենուր թշնամիներ տեսնող, իր պարտքն ու կոչումը մոռացած մտավորական, որի «գիրքը իր ոճով այնքան հեռու է այդ [հայագիտության] նորմերից, որ... լուրջ ընթերցողը ակամայից մերժում է նրա դրույթները»: Եւ սա ասվում է այն դեպքում, երբ գիրքը քննարկել և տպագրության է երաշխավորել Երևանի Պետհամալսարանի Պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդը, լույս ընծայումից հետո էլ դրական են գրախոսել մի շարք այլ գիտնականներ (տե՛ս նույն «Հայաստանի հանրապետությունը», 12 փետրվար 1999. «Հայ գիտվոր», 20-27 փետրվար 1999. «Հայաստան», 9 մարտի 1999. «Առավոտ», 18 փետրվար 1999): Բսկ ակադեմիկոս

Մանվել Զուլալյանը, գրախոսելով մեր աշխատությունը հայագիտական ամենահեղինակավոր պարբերականում՝ «Պատմա-բանասիրական հանդեսում» (1999, № 1), մասնավորաբար, գրել է. «Հիրավի, կատարված է պատմական և բանասիրական մեծ քրտնաջան աշխատանք և, հիմնականում, արդարացի գիտական քննադատության են ենթարկված Ռ.Թումանյի և այլոց «հայագիտական» մարզանքները»:

Ավարտենք: Քննադատական բնույթի գրախոսության մեջ ընդունված է կիրառել փաստարկը հակափաստարկով հաղթահարելու և հերքելու միակ հնարավոր՝ Կ.Յուզբաշյանին անձանոթ մնացած եղանակը: Յուզբաշյանի այսպես կոչված «գրախոսությունն» էլ այլ բան չէ, քան հասարակ զգրա-գրախոսություն:

2.



8 декабря 2001г.

История Армении бьет в набат

Арис Казинян

Потрескается вера, а невежество утвердит лжеучение?

Бессмертное творение Мовсеса Хоренаци "История Армении" имеет своим резюме "Плач" великого старца, приобретший в наши дни совершенно новое звучание и особую символику. Вызов, брошенный отечественной истории известными своей предвзятостью представителями американской школы арменистики (К.Туманов, Р.Сюни, Р.Томсон, Н.Гарсоян, Дж.Рассел, Л.Авдоян, Р.Бедроян и пр.), как нельзя более созвучен содержанию "Плача", пролившегося на пергамент XVI столетий назад: "Учители глупые, самодовольные, сами себе присвоившие честь, а не призванные Богом, избранные серебром, а не святым духом, сребролюбивые, завистливые, забывшие кротость, в которой обитает Бог, и ставшие волками, терзающими свое стадо.

Епископы гордые, скорые на осуждение других, суесловные, ленивые, презирающие науку и пастырское наставление, любящие торжища и скоморошества".

Фальсификация истории армянского народа и армянской государственности как вполне самоопределившаяся "научная дисциплина" - явление отнюдь не новое. С середины 50-х годов прошлого столетия, нападки турецких и американских "арменоведов" на отечественную историю приняли более ожесточенный и бесцеремонный характер с явной ориентацией на полное или частичное вытеснение из сознания народа собственной национальной идентичности.

Вместе с тем следует отметить, что 10-летний отрезок независимого развития РА сумел преподнести на суд читателя несколько серьезных статей по данной проблематике и одну-единственную книгу - "Освещение истории Армении в американской историографии. Критический обзор" (А.Айвазян, Ереван, 1998г.). С учетом небывалых доселе по масштабам нападков на все без исключения этапы отечественной истории, в контексте явно предвзятых и более чем циничных толкований армянских первоисточников, на фоне оголтелой клеветы властей соседних государств на прошлое армянского народа и, наконец, с точки зрения мнимого (к сожалению) армянского национализма, это очевидный нонсенс.

Тем не менее сегодня есть основание предполагать, что география фальсификаций армянской истории в самое ближайшее время может заметно расширить свои границы, открыв представительство уже и в России. Во всяком случае такого мнения придерживаются некоторые армянские историки и арменоведы. Согласимся, что одно только название готовящегося к изданию труда - фактор вполне самодостаточный, чтобы представить основной ориентир книги - "Арцах-Карабах как отдельное историко-культурное явление". Отдельное, разумеется, от Армении.

Обращает на себя внимание и фигура редактора данного исследования, выступающего ныне в качестве проводника и гаранта успешного осуществления столь опасной для нас операции, - Карен Юзбашян. Вот уже 20 лет, как он является представителем "новой волны" арменоведов, характерной особенностью коих считается подчеркнутая непримиримость по отношению к специалистам "старого" (традиционного) мышления. В частности, еще в 1978г. он позволил себе заявить об этом, косвенным образом подвергнув критике разворачивающих свою деятельность в Армении ученых: "В конце концов есть еще одно обстоятельство, предопределяющее необходимость работы арменоведов в Ленинграде, да и в других научных центрах. Дело в том, что не только армяне и жители Армении должны заниматься вопросами арменистики. Конечно, армяне (и в первую очередь проживающие в Армении специалисты) имеют одно-естественное преимущество - эмоциональный заряд, чувственность, зов крови. Однако вместе с тем и другие в свою очередь имеют преимущества - непредвзятость (косвенное обвинение армянских ученых в предвзятости. - А.К.), непредубежденность (обвинение в изначальной предубежденности. - А.К.), хладнокровие, нескованность в смысле восприятий легенд и сказаний, возможность смотреть на явления по-новому, свежим взглядом (обвинение в излишней скованности и в архаичных подходах. - А.К.)". ("Айреники дзайн", 15 ноября, 1978).

Книга "Арцах-Карабах как отдельное историко-культурное явление" предусматривает в своем конечном проекте двадцать глав. Автором предисловия и ее главным редактором выступает, разумеется, Карен Юзбашян - в свое время научный руководитель Левона Тер-Петросяна¹.

В одном из своих последних исследований питерский византист, вторя догматическим домыслам представителей американской школы арменистики, пишет: "Многие исследователи пришли к выводу, что Мовсес Хоренаци жил не в V веке, а много позже, доводя датировку до IX века. Получалось, что, представляя себя учеником Месропа Маштоца и католикоса Саака, их младшим современником, автор прибегал к подлогу. К сожалению, к критике литературного и очень сложного памятника подключились и обывательские голоса, которые порой с угрозами по адресу противников настаивали на традиционной точке зрения, придав полемике вокруг чисто академической проблемы крайне нездоровый характер". (К.Юзбашян, "Армянская эпопея V века. От Аварайрской битвы до Нуарсаке". Москва, 2001).

Следует отметить, что к числу "обывательских голосов" Карен Юзбашян относит и голос одного из лучших историков молодого поколения Армена Айвазяна. В частности, он уже однажды позволил себе ("Айастани анрапетутюн", 16 октября, 1999) наброситься на последнего за проявленную им "неслыханную дерзость" в критике "светил арменистики" - представителей американской школы, с которыми Карен Юзбашян связан, видимо, узами не только профессиональными.

Во 2-м номере "Историко-филологического журнала" нынешнего года академик Рач Бартикян обращает внимание и на следующую деталь. На организованной Восточным факультетом Санкт-Петербургского университета международной научной конференции, посвященной 1700-летию официального признания христианства в Армении, Карен Юзбашян не упустил случая выступить: "Армянская церковь датирует это событие 301-м годом. Между тем известно, что с 299 года и до IV века

¹ Арис Казинян здесь неправ. Научным руководителем Л. Тер-Петросяна был другой ученый.

в течение нескольких десятилетий Армения находилась под протекторатом Римской империи. Маловероятно, что как раз в то самое время, когда на рубежах Римской империи христианство подвергалось жесточайшим гонениям, Армения признала бы ее на официальном уровне. Что касается 314 года, то эта дата представляется достаточно обоснованной".

Весьма любопытное свидетельство о ходе подготовки новой книги мы находим у историка Геворга Язичяна, в статье "Арменистика в капкане геополитических игр" ("Айоц ашхар", 3 ноября, 2001г.). Оказывается, Карен Никитич совсем недавно побывал в Армении и встретился с очень известными специалистами. В личной же беседе с автором статьи господин Юзбашян отметил, что "город Шуши и прилегающие 5-6 селений в любом случае будут возвращены Азербайджану, ибо такова воля сильных мира сего". Он также дал понять, что очень спешит реализовать эту программу и побыстрее написать предисловие.

О "предисловиях" и о "редакционных работах", касающихся издаваемых за рубежом исследований по Армении, писалось неоднократно. В этой связи хотелось бы обратить внимание на наиболее свежий пример. В США появилась книга "Армянское народное искусство, культура и идентичность", изданная Индианским университетом в 2001г. Редакторы - Левон Абрамян и Ненси Суизи. Книга отлично отпечатана в Гонконге тиражом в 5000 экземпляров.

Этнограф Левон Абрамян в этой связи сделал пояснения ("Священная гора", "Новое время" 7 ноября, 2001г.): "К сожалению, эта книга несколько отличается от той, которую предложил я. Издатели упростили ее, объясняя тем, что американский читатель мой вариант не понял бы. Я имею опыт преподавания в трех университетах США и убежден, что их научный и студенческий читатель все абсолютно понял бы. В конце концов, она ведь рассчитана не на широкую публику, а на профессионалов". Это - прецедент!

Необходимо акцентировать внимание на следующем: к работе над книгой "Арцах-Карабах как отдельное историко-культурное явление" фактически впервые предпринимается попытка подключить и специалистов из Армении. Согласимся, что в контексте вышецитированных обвинений в адрес последних данная инициатива по меньшей мере настораживает. Очевидно, что любая степень вовлеченности армянских ученых в процесс создания книги с таким названием и с таким редактором - есть косвенное свидетельство полного согласия историков из Армении с обоснованностью именно такой постановки вопроса.

Более того, при нынешней расстановке сил и возможностей даже серьезные разделы, написанные армянскими специалистами, как это ни парадоксально, но пойдут во вред, ибо прибавят вес и предисловию Карена Юзбашяна, и проповедуемой идее в целом.

Не случайно, что отдельные главы предполагаемого издания уже нашли своих авторов в лице представителей "американской школы" арменистики. Проект "Карабах-Арцах как отдельное историко-культурное явление" - есть брошенный армянским ученым крайне дерзкий вызов и попытка кооптации всех сил арменистики с целью изоляции и отторжения самого понятия Карабах-Арцах из национального мышления армян.

Видимо, дело не в Карене Юзбашяне. Дело за армянскими историками. Вероятно, давно назрела необходимость организации крупного форума арменоведов с серьезнейшим рассмотрением всех накопившихся вопросов.

"Плач" Мовсеса Хоренаци, к сожалению, не устаревает, а посему - в назиданье:

"Оплакиваю тебя, Земля армянская, оплакиваю тебя, о благодатнейшая из всех северных стран: у тебя нет более ни царя, ни иерея, ни советника, ни учителя! Мир возмутился, укоренился беспорядок, потряслась вера, невежество утвердило лжеучение".

Հայագիտության վերաբերյալ բանաձևեր և հարակից նյութեր (2001-2002)

1.

Ազգ. 08.01.2002

Հայագիտության հարցեր Հայագիտության արդի խնդիրների քննարկում ԵՊՀ հայոց պատմության ամբիոնում

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի նիստում¹ կայացավ հատուկ քննարկում՝ նվիրված վերջին տարիներին հայոց պատմության ոլորտում որոշ վտանգավոր եւ մտահոգիչ մոտեցումներին:

Քննարկման մասնակիցները նշեցին, որ ներկայումս միջազգային հայ պատմագիտության բնագավառում ստեղծվում է բավական վտանգավոր կացություն, որը բնորոշվում է հայոց տարբեր դարաշրջանների պատմության աղճատումներով եւ ցեղասպանության հարցում թուրքական կամ թուրքամետ տեսակետների՝ հայագի գիտնականների կողմից տարածումով: ԵՊՀ պատմաբան դասախոսները նշեցին, որ նման ոտնձգություններն առ այսօր արժանի հակահարված չեն ստացել Հայաստանի եւ սփյուռքի գիտական շրջանների կողմից: Այս արշավի նպատակներից են՝ «վարկաբեկել հայաստանյան հայագիտական դպրոցը, հայտարարել «Հայաստանում բունիաթովական դպրոցի բարգավաճման», հայրենի գիտնականների կողմից «տգետ ու խելագար», «շովինիստական» տեսակետներ որդեգրելու մասին, իսկ ՀՀ ԳԱԱ-ն հռչակել իբրեւ «մեռելածին» կառույց»:

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դասախոսները շեշտեցին, որ այսպիսի գործունեության նկատմամբ «հայ գիտական հասարակայնության չեզոքությունն ու անտարբերությունն անթույլատրելի ու վնասաբեր են»: Հայ պատմաբանները մտահոգություն հայտնեցին, որ վերջերս այս «կեղծ հայագիտական տեսակետներն անդրօվկիանոսից արդեն թափանցել են Եվրոպա, Ռուսաստան եւ Մերձավոր Արեւելք՝ վերջինիս համար բերելով պետերբուրգցի արեւելագետ Կարեն Յուզբաշյանի ու նրա «Արցախ-Ղարաբաղը որպէս առանձին պատմամշակութային երեւոյթ» քաղաքականապէս վտանգավոր ծրագրի օրինակը:

Քննարկման մասնակիցները պահանջեցին պետական հոգածություն հայագիտության այս կարեւոր գիտական ոլորտին ու շեշտեցին «հանրապետությունը որպէս հայագիտության հզորագույն կենտրոն պահելու ռազմավարական անհրաժեշտությունը»:

Քննարկման ավարտին ԵՊՀ հայոց պատմության ամբիոնը որոշեց.

«1. Անընդունելի համարել կեղծ հայագիտության նկատմամբ Հայաստանի եւ սփյուռքի որոշ գիտնականների չեզոք դիրքը՝ որպէս վտանգավոր մոլորություն:

2. Խնդրանքով դիմել սփյուռքի հայագիտական կենտրոնները ֆինանսավորող հաստատություններին եւ անհատներին՝ հետամուտ լինել, թե ինչպիսի արդյունավետությամբ են օգտագործվում այդ կենտրոնների աշխատողներին հատկացված միջոցները՝ հայանպաստ, թե՞ հայավնաս եւ դրանից ելնելով՝ լուծել նրանց հետազոտությունների ֆինանսավորման հարցերը:

3. Առաջարկել ՀՀ կառավարությանը՝ ա) արագ եւ գործուն միջամտությամբ բարելավել հայագիտության՝ ռազմավարական առումով կարեւորագույն այս բնագավառի նյութական ապահո-

¹ Նիստը տեղի է ունեցել 2001 թ. դեկտեմբերի 19-ին:

վումը: բ) Ստեղծել հայրենի հայագիտության զարգացման հատուկ հիմնադրամ, որն ի վիճակի լինի գիտական աշխատանքի համար գոնե նվազագույն պայմաններ ապահովել՝ գործող կադրերը պահպանելու, նրանց հնարավորությունները լիովին օգտագործելու, ինչպես նաև հայագիտության ասպարեզ մուտք գործող երիտասարդներից նոր հերթափոխ պատրաստելու համար: գ) Հայագիտության անխոտոր զարգացման համար ստեղծել հայագիտական հետազոտությունների համաշխարհային ակադեմիա, որի կենտրոնը գտնվի Երեւանում՝ զերծ օտար քաղաքական ազդեցություններից»:

Գ. Յ.

2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՀ ԱԺ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 23.05.02թ. «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՑՈՒՆՔՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԱՌԱՋԱՌԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի և սփյուռքի մասնագետների ներգրավմամբ մշակել հայոց լեզվի և հայագիտության դիրքերի ամրապնդման և զարգացման պետական ծրագիր և այդ ծրագրի շրջանակներում իրականացնել տվյալ ոլորտների նպատակային-ծրագրային և թեմատիկ ֆինանսավորում:

2. Կառավարության նախաձեռնությամբ և հովանավորությամբ ստեղծել հայոց լեզվի և հայագիտության դիրքերի ամրապնդման և զարգացման հատուկ հիմնադրամ, ծրագրի ֆինանսավորումը ոչ բյուջեի հաշվին ապահովելու նպատակով:

3. Այդ ծրագրում, մասնավորապես, ընդգրկել հետևյալ միջոցառումները, որոնց իրականացումը սկսել ծրագրի հետ համընթաց.

3.1 Պետական հովանավորությամբ ստեղծել հայագիտական կենտրոն՝ հայոց ծագումնաբանության համակողմանի ուսումնասիրության, քաղաքական նպատակներով հայոց պատմության խեղաթյուրումների սրբագրման և կանխարգելման, հայագիտական ժառանգության հաշվառման և պահպանման աջակցության, ինչպես նաև՝ հայոց պատմության միասնական դպրոցական դասագրքի ստեղծման համար:

3.2 Համակարգչային ցանցում ստեղծել «Հայագիտություն» սայթ՝ ընդգրկելով հայագիտության բոլոր բնագավառները:

3.3 Կազմակերպել «պատմա-բանասիրական հանդեսի» եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) էլեկտրոնային հրապարկումը:

3.4 «Հայոց պատմության» ոչ ակադեմիական գրքի ստեղծում և հրապարկում՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև ակադեմիական նոր հրատարակություն:

3.5 Ծրագրեր մշակել հայագիտական ֆակուլտետներում օտար և հին լեզուների ուսուցումը որակապես լավացնելու և ասպիրանտական տեղերի ցանկը մեծացնելու նպատակով:

3.6 Հատուկ միջոցառումներ իրագործել հայերենի համակարգչային կողավորման աշխատանքներն ավարտելու, հայերենը մեքենայական թարգմանության տրվող լեզուների շարքում ընգրկելու համար.

3.7 Սփյուռքի համար հայոց լեզվի, գրականության, պատմության, աշխարհագրության և այլ դասագրքերի և մեթոդական ձեռնարկների էլեկտրոնային տարբերակների ստեղծում և համակարգչային ցանցում տեղադրում.

3.8 Հայաստանի լեզվական բուհերում և ավագ դպրոցի հումանիտար թեքումի վարժարանային հոսքերում մտցնել արևմտահայերի դասընթաց՝ միաժամանակ սովորեցնելով հին ուղղագրություն.

1.9. Հանրակրթական դպրոցներում կազմակերպել գրաբարի ուսուցման դասընթաց՝ դասական ուղղագրության ուսուցմամբ.

1.10. Միասնական ուղղագրության անցնելու խնդիրները համակողմանի ուսումնասիրելու համար ստեղծել հայաստանաբնակ և սփյուռքահայ լեզվաբաններից բաղկացած միացյալ աշխատանքային խորհուրդ.

1.11. Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցման դիստանցիոն մեթոդի կիրառմամբ մանկավարժների վերապատրաստմանը թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում, ինչպես նաև հայերենին չտիրապետող հայազգի երիտասարդության կողմից մայրենի լեզվի ուսումնա-սիրմանը.

1.12. Հատուկ ուշադրություն դարձնել հայերենի՝ որպես պետական լեզվի կիրառմանը և ՀՀ «Լեզվի մասին» և «Գովազդի մասին» օրենքների կատարմանը.

1.13. Պետական աջակցություն ցուցաբերել հայ մատենագրության թվայնացման և համակարգչային ցանցում տեղադրման աշխատանքներին.

1.14. Աջակցություն ցուցաբերել Հայաստանում, ԼՂՀ-ում և հարևան պետություններում գտնվող հայկական պատմական հուշարձանների ուսումնասիրմանը, լուսանկարների և այլ վավերագրական նյութերի թվայնացմանը և համակարգչային ցանցում տեղադրման աշխատանքներին.

1.15. Նախաձեռնել «Ազգագրական գյուղեր» թանգարան-համալիրի ստեղծման ծրագիր՝ ներգրավելով հայրենակցական միությունների և սփյուռքի ներուժը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Շ. ՔՈՉԱՐՅԱՆ

3.

«Հայոց լեզվի և հայագիտության արդի խնդիրները» գիտաժողովի բանաձևը 21 մայիս 2002թ.

21 մայիս, 2002թ. ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Նեմեսիս» Բ/ՀԿ կազմակերպած գիտաժողովը՝ «Հայոց լեզվի և հայագիտության արդի խնդիրները» թեմայով, որին մասնակցում էին ԱԺ պատգամավորներ, մտավորականներ, հայոց պատմության դասախոսներ, հայոց պատմության և հայոց լեզվի ուսուցիչներ, ուսանողներ, աշակերտներ, հասարակական կազմակերպություններ:

Գիտաժողովն ընդունեց հետևյալ բանաձևը

Լեզուն ոչ միայն հաղորդակցության միջոց է, տեղեկություն կրող, այլև մտածելակերպ, գաղափարախոսություն, էություն, իսկ պատմությունը՝ անքակտելի կապ հայրենիքի, նախնիների և նրանց ստեղծած արժեքների հետ, ներկայի և ապագայի ուղենիշ:

Վերջին շրջանում բազմացել են ոտնձգությունները հայոց լեզվի նկատմամբ: Ցավոք, դրանում ընդգրկվել են նույնիսկ ՀՀ պետական որոշ կառույցներ և այրեր, մասնավորապես՝ ՀՀ կրթության և գիտության, արդարդատության նախարարությունները և լեզվի պետական տեսչությունը: Անհրաժեշտ հետևողականություն չի ցուցաբերվում լեզվական ոլորտում պետական վերահսկողությանը: Իջեցվել է լեզվի պետական տեսչության կարգավիճակը: Ազգային ժողովի որոշ պատգամավորներ, տուրք տալով համաշխարհայնացման գաղափարին, հանդես են գալիս օտար լեզուներին՝ ՀՀ պետական և/կամ հանրակրթական լեզվի կարգավիճակ շնորհելու օրենսդրական նախաձեռնություններով: Չեն կիրառվում կամ խեղաթյուրված են կիրառվում հայոց լեզվի՝ ՀՀ Սահմանադրությամբ, Լեզվի մասին օրենքով և այլ օրենսդրական ակտերով ամրագրված իրավունքները: ՀՀ և ԼՂՀ ավելի քան մեկուկես հազար դպրոցներից և ոչ մեկը չունի հայագիտության թեքում:

Մյուս կողմից՝ ծայր աստիճան վտանգավոր շեղումներ են դրսևորվում հայագիտության ոլորտում: Արտասահմանյան հայագետների մի մասը, գիտակցաբար կամ անգիտակցաբար, գործիք է դարձել հայությանը հոգեբանական մշակման ենթարկելու նպատակամիտված օտարածին ծրագրերին: Այս շեղումները բազմացել են հատկապես վերջին ամիսներին՝ «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» ծննդի և ակտիվացման հետևանքով: Նման ապագային ու հա-կա-գային միտումները վերջին տարիներին թափանցել են հայաստանամերձ երկրների հայագիտական ոլորտներ և արդեն իրենց հենակետերն են ստեղծել նույնիսկ ՀՀ-ում:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ իշխանություններին, մասնավորաբար՝ ՀՀ Ազգային ժողովին, նաև Հայրենիք-Միություն երկրորդ խորհրդաժողովի մասնակիցներին և ընդհանրապես հայությանը ներկայացնում ենք հետևյալ առաջարկներն ու պահանջները.

1. Բարձրացնել լեզվի պետական տեսչության կարգավիճակը՝ այն դարձնելով հայոց լեզվի և հայապահպանության նախարարություն:
2. Հիմնովին մերժել հայոց լեզվին զուգահեռ որևէ օտար լեզվի պետական կամ հանրակրթական լեզվի կարգավիճակ շնորհելու բոլոր նախաձեռնություններն ու կոչերը:
3. Կիրառել օրենսդրությամբ ամրագրված, ՀՀ քաղաքացիության ու պետական ծառայության համար դիմորդների՝ հայոց լեզվի իմացության պարտադիր պայմանը:
4. Մշակել ու կիրառել լեզվական ոլորտում խախտումների երկրաչափական պրոգրեսիայով ավելացող տույժերի և տուգանքների համակարգ, համառ օրինախախտներին՝ մինչև իսկ քրեական պատասխանատվության ենթարկել:
5. Պահպանել գրական հայերենի, այսինքն գրական արևմտահայերենի և գրական արևելահայերենի իրավահավասարության օրենսդրական դրույթը:
6. ՀՀ-ում և ԼՂՀ-ում փակել հայագիտական երեխաների համար բացահայտ կամ գաղտնի գործող օտարալեզու դպրոցներն ու դասարանները և արգելել այդպիսիք բացելու բոլոր փորձերը: Ներգաղթող ընտանիքների երեխաներին՝ հայերենի անվճար դասընթացներն ավարտելուց հետո, պարտադիր տեղափոխել հայերենով ուսուցմամբ դասարաններ:
7. ՀՀ-ում, ԼՂՀ-ում և Միությունում բացել հայագիտության թեքումով դպրոցների ցանց:

8. Արմատներից չկտրվելու և դասական ուղղագրության մասին գիտելիք ունենալու նպատակով ՀՀ դպրոցներում մտցնել հին հայերենի (գրաբարի) դասավանդում:
9. ՀՀ պատմագիտական ոլորտի հիմնարկներին պարտավորեցնել արագ հակադարձել մեր ժողովրդի պատմական ժառանգությունը յուրացնելու, խեղաթյուրելու կամ անարգելու բոլոր փորձերին՝ որտեղից էլ դրանք հնչեն:
10. Ստեղծել հայաստանյան հայագիտության աջակցության համահայկական հիմնադրամ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կառույցում:
11. Ամենատարբեր միջոցներով խրախուսել երիտասարդների ընդգրկումը հայագիտական մասնագիտությունների ոլորտներում:
12. Խստագույնս վերահսկել միջազգային կազմակերպությունների կամ այլոց կողմից տրվող դրամաշնորհների նպատակային ուղղվածությունը, դրանց համապատասխանությունը ՀՀ պետական և հայոց ազգային շահերին:
13. ՀՀ, ԼՂՀ և Սփյուռքի հայկական դպրոցների համար, բացառապես հայկական ֆինանսական միջոցներով, պատրաստել ու հրատարակել հայոց պատմության միասնական դասագրքեր, որոնք ներծծված լինեն ազգային ոգով:
14. Քարոզչություն և հետևողական պայքար ծավալել հոգևոր ոլորտներում ապագային և հակագային բոլոր երևույթների դեմ:
15. Ընդունել «Ազգային անվտանգության մասին» օրենք, որի բաղկացուցիչ մասը կլինեն ՀՀ պետական և հայոց ազգային անվտանգության, ռազմավարական նշանակության հոգևոր ոլորտները:
16. Դատապարտել ՀՀ-ում հավատարմագրված դիվանագետների միջամտությունները ՀՀ ներքին գործերին, մասնավորապես՝ լեզվական, կրթական ոլորտներում, հայոց ազգային արժեքային համակարգում, և նրանց զգուշացնել նման քայլերի անթույլատրելիության մասին:

4.

Ազգ, 24.05.2002

Լսումներ «Հայագիտության եւ հայոց լեզվի խնդիրներ» թեմայով... դատարկ դահլիճում

Գևորգ Յազըճյան

Երեկ ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի հանձնաժողովը կազմակերպել էր լսումներ, որոնք տեւեցին շուրջ հինգուկես ժամ:

Բացելով նիստը, հանձնաժողովի նախագահ Շավարշ Քոչարյանն ավետեց, որ պաշտոնապես շրջանառությունից հանվել է հայոց լեզվի շահերի դեմ ուղղված հերթական օրինագիծը: Մասնավորեցնելով իր խոսքը թեմային առնչված ոլորտներին, նա բերեց մի արտառոց փաստ. պարզվում է, որ այս տարի Հայաստանի հանրային հեռուստատեսությանն ու ռադիոյին բյուջեով նախատեսվել է տրամադրել 10 տոկոսով ավելի գումար, քան ամբողջ գիտական բնագավառին:

Զեկուցումով հանդես եկան գիտության եւ կրթության նախարար Լեւոն Մկրտչյանը, ՀՀ ԳԱԱ գիտական քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը եւ Լեզվի պետական տեսչության պետ Լեւոն Գալստյանը: Պրն Մկրտչյանը շեշտեց, որ «ընտրել ենք ազգային պետության մոդելն», ու առաջար-

կեց ստեղծել գիտակրթական լուրջ կենտրոն՝ հայրենիքի եւ սփյուռքի հզոր ուժերի ընդգրկումով, որը կգբաղվի հայագիտության հարցերով: Պրն Բարխուդարյանն առաջարկեց Հայաստանի եւ սփյուռքի դպրոցների համար հրատարակել հայոց պատմության միասնական դասագրքեր: Պրն Գալստյանն առավելաբար անդրադարձավ ուղղագրության միասնականացման հարցին՝ լուծումը տեսնելով «գրական հայերենի կանոնակարգման միասնական սկզբունքների մշակման մեջ», անհմաստ ու անհնար գտնելով հարցի լուծումը վարչական ճանապարհով:

Ինչպես եւ սպասվում էր, ուղղագրության միասնականացման հարցը երկու ուղղագրական համակարգերի կողմնակիցների միջեւ բուռն բախումների առիթ դարձավ: Այսուհանդերձ, ներկաները ողջունեցին օրեր առաջ մի գիտաժողովում հնչած եւ այս լսումներում ակադեմիկոս Գեւորգ Զահուկյանի կրկնած առաջարկը՝ ՀՀ դպրոցներում մտցնել գրաբարի դասավանդում: Դրանով աշակերտները կծանոթանան թե հին հայերենին եւ թե դասական ուղղագրությանը: Համակարգչային տեխնոլոգիաներից օգտվելիս արդի ուղղագրության հարուցած խոչընդոտների մասին խոսեցին Մերուժան Կարապետյանը, Գարեգին Չուքասյանն ու Վահրամ Մխիթարյանը:

Սիլվա Կապուտիկյանն անդրադարձավ հոգեւոր ոլորտները այլասերող գրոհներին եւ խստագույն քննադատության ենթարկեց օպերայի շրջակայքն այլանդակող շինությունները թուլաւորողներին: Հայկական ճարտարապետական հուշարձանների անմխիթար վիճակին անդրադարձան նաեւ ակադեմիկոս Վարագդատ Հարությունյանը եւ ուրիշներ:

Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը խոսեց մարզերում հայ դպրոցի եւ մանկավարժների ողբերգական կացության մասին: «Ի՞նչ հայագիտություն, ի՞նչ հայոց լեզու, դառնությամբ հարց տվեց պրն Անանյանը, երբ հայ դպրոցը քանդված է»: Ուսուցչուհի Ռիտա Խաչատրյանը խոսեց հայոց լեզվի դասագրքերի բովանդակային խոտանի մասին:

Երեւանի բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանն ավելորդ համարեց բուհերում հինգ տարի հայոց լեզվի դասավանդումը՝ համարելով, թե փոքր ազգերը պետք է երկլեզու լինեն:

Ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանը զգուշացրեց չդիպչել հայոց լեզվի կարգավիճակին ու իրավունքներին եւ իր բողոքը բարձրացրեց հանրային ռադիոյի «Հայրենիքն սփյուռք» ծրագիրը փակելու կամ նրա անձնակազմին գործից արձակելու դեմ: Վերջին հարցի մասին ավելի մանրամասն ելույթ ունեցավ նույն ռադիոծրագրի երբեմնի հաղորդավար Հասմիկ Գուլակյանը:

- **«Անհնար է ներկայիս Հայաստանը համարել հին հայկական թագավորությունների ժառանգորդը»** (էջ 155): Խնդրեմ, սա էլ հեղինակների այցեքարտը...

- Հայտարարվում է, որ հայ ժողովուրդը **«յոթ հարյուր տարի պետականություն չի ունեցել»** (էջ 157): Ակնարկը 1375 թ. Կիլիկիայի հայոց թագավորության անկման և 1918 թ. ծնունդ առած Հայաստանի Հանրապետության մասին է: Պարզ թվաբանական գործողություն կատարելով (1918-1375=543)՝ ստացվում է նվազ, քան 550 տարի: Խորհուրդ ենք տալիս տիտղոսավոր պարոններին՝ վերստին դպրոց գնալ՝ տարրական թվաբանություն սովորելու համար: Մյուս կողմից՝ ո՞վ ասաց, որ հայ ժողովրդի որոշ հատվածներ (Արցախ, Սյունիք, Շատախ, Զեյթուն և այլն) գերիշխանության առավել կամ նվազ լիազորություններով պետականության մարմիններ չեն ունեցել այդ **«յոթ հարյուր տարիների»** ընթացքում:

- Հայ **«հասարակությունն ունի կոլեկտիվ բարոյություն», ավելի որոշակի՝ «հակաաղբբեջանական տրամադրություններ»** (էջ 157): Նախընտրելի պիտի լիներ, որ Ռամիլ Սաֆարով կոչեցյալն իր կացինը իջեցներ Բաբկեն Հարությունյան-Ալեքսանդր Իսկանդարյան զույգի գլխին, որպեսզի նրանք հասկանային, թե չի կարելի նման կեղտագրերով բթացնել հայության զգոնությունը, որը բառացիորեն մահացու է:

Կան նաև այնպիսի անճշտություններ, որոնք վայել չեն նույնիսկ կրտսեր դպրոցականներին, ուր մնաց՝ գիտական աստիճաններ ունեցող սույն «պատկառելի» այրերին: Այսպես՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի բացման տարեթիվ է նշվում 1965-ը (էջ 151)՝ 1967թ. փոխարեն, վարդապետ Մեսրոպ Մաշտոցը հայտարարվում է եպիսկոպոս (էջ 156):

Սխալների ու խեղաթյուրումների վերաբերյալ՝ առայժմ այսքանը: Ավելացնենք միայն մի «մանրուք». սույն նյութերի ժողովածուի հրատարակիչ «Այրո-XX» հրատարակչության խմբագրական խորհրդի անդամ է ոչ անհայտ ամերիկացի քաղաքական վերլուծաբան Պոլ Գոբլը: Այսքանից հետո արժե՞ պարզել, թե ովքեր են Հարությունյան-Իսկանդարյան տանդեմի սույն զազրախոսության պատվիրատուները...

Ալ.Գրիգորյանի մտահոգությունը, թե Բաբկեն Հարությունյանն այս ոգով է դաստիարակում հայ պատմաբանների նոր սերնդին, իսկապես տեղին է: Այդ «դաստիարակությունը» տալիս է իր պտուղները նույնիսկ սփյուռքում: Օրինակ՝ Բ.Հարությունյանի սիրասուններից Արա Սանջյանը՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի շրջանավարտ (այլ հարց է, որ Սանջյանը Լոնդոնում հրատարակած իր դոկտորական ատենախոսության մեջ իր կենսագրականում նույնիսկ չի ակնարկում, թե հինգ տարի սովորել է ԵՊՀ-ում): Վերջինս՝ Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչն է: Այդ տարիների ընթացքում ամբիոնը գոնե մեկ ուսանող չի ունեցել: Մեղանյան կրթական հաստատությունը տարիներ առաջ նրան հրավիրել էր Մեծ եղեռնի տարելիցի առթիվ դասախոսություն կարդալու: Սանջյանը համոզմունքով ասել է աշակերտներին. **«Չենք կարող աշխարհին ապացուցել, որ Հայոց ցեղասպանություն է տեղի ունեցել»**, իր խմբագրած «Հայկազեան հայագիտական հանդես»-ում գրում է, որ **«մինչև չբացվեն Թուրքիայի արխիվները, չենք կարող իմանալ, թե ինչ նպատակ էր հետապնդվում հայոց ցեղասպանությամբ»** և նման «հիասքանչ», «բաբկենահարությունական» մտքեր:

Հիշեցնենք նաև, որ Բաբկեն Հարությունյանն ակտիվորեն ընդգրկվել էր նույն հակահայկական շրջանակներից ֆինանսավորվող, Սանկտ Պետերբուրգի սիոնական շրջանակների հետ սերտ կապեր ունեցող Կարեն Յուզբաշյանի «Արցախ-Ղարաբաղը որպես պատմամշակութային երևույթ», ծրագրի հեղինակային խմբում: Ծրագրի տապալմանը նպաստեց ներքոստորագրալիս ելույթը «Հայոց աշխարհ» օրաթերթում (2001թ. նոյեմբեր)՝ հարուցելով Կ.Յուզբաշյանի, Բ.Հարությունյանի և նրանց համախոհներ Պարույր Մուրադյանի, Մերուժան Կարապետյանի և այլոց թշնամանքը անձիս նկատմամբ:

Բացահայտելով այս պատվիրված հոդվածի բուն էությունը, դիմում ենք ՀՀ կրթությունն ու գիտությունը ղեկավարելու կոչված պատասխանատուներին, մասնավորապես՝ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանին, ՀՀ Կրթության և Գիտության նախարար Սերգո Երիցյանին, ԵՊՀ ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանին, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Հայկ Ստեփանյանին, ՀՀ ԱԺ գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանին, ՀՀ ԳԱԱ նախագահությանն ու պատմագիտական երեք ինստիտուտների ղեկավարներին, համալսարանների պատմագիտական ամբիոնի վարիչներին, և ի վերջո, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի աշխատակիցներին՝ հստակ դիրքորոշումով հրապարակայնորեն հանդես գալու պահանջով: Այս հարցում լռությունը հավասարազոր ենք համարելու մեղսակցության Հարությունյան-Իսկանդարյան զույգի հետ:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի նախկին դեկան (մինչև 2003թ. վերջը), այժմ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմագիտության աստիճաններ շնորհող Մասնագիտական խորհրդի փոխնախագահ Բաբկեն Հարությունյանին պետք է զրկել նրա զբաղեցրած պաշտոններից և արգելել նրա դասախոսական գործունեությունը հայկական հիմնարկներում: Նա, որպես «տաշված քար», իհարկե, գետնին չի մնա. նրան նման, թերևս է՛լ ավելի «պրեստիժային» պաշտոններ կարող են շնորհել Բաքվում, Անկարայում կամ Ստամբուլում: «Հոշ գելդին, էֆենդի՛մ»...

Գևորգ Յազբաճյան
(պատմ. գիտ. թեկնածու)

**Պատմագիտական գրականության որակի անկումը և գիտական
վերահսկողության լրոգումը**



05.02.2004г.

Где Кура - где мой дом?

Левон Мелик-Шахназарян

Признаюсь, проблемы геополитики давно волнуют меня, потому и приобрел я написанную Григорием АБРАМЯНОМ и опубликованную по решению отдела истории Третьей Республики Армения Института истории НАН РА книгу с несуразным названием "Геополитическое состояние в Закавказье в конце XX - начале ХХІвв.". Не сомневаюсь: никто ее в названном институте не читал. Иначе не было бы решения о публикации книги, полной ошибок, неточностей и просто фальсификаций. К тому же написанной на смеси армянского с нижегородским, отдельные предложения и словосочетания которого просто не поддаются восприятию русскоязычного читателя.

Чтобы быть кратким, приведу только одно предложение из книги: "По воле Сталина первый этап передачи "несвободных" земель Азербайджану был осуществлен в то время, когда В.И.Ленин тяжело болел, а Сталин все делал, чтобы убедить руководителей Азербайджана в своей роли в революционном движении республики нефти и в Баку лишь для того, чтобы "красной строкой" войти в историю как руководитель революционного движения в Азербайджане, взамен чего, передав последнему ряд территорий, в том числе армянских" (стр. 33). Читая книгу, невозможно поверить, что ее автор является доктором исторических наук. Как может историк написать: "связь с Нахиджеваном, который в 1923-24гг. был передан Азербайджану" (стр. 11). Любой старшеклассник знает, что Нахиджеван был отдан под протекторат Азербайджана в 1921г. Так же плохи дела с географией: непонятно, где автор узрел Китайское море (стр. 11-12) ? Или Тайвань и Тайваньский пролив столь мало значат для геополитического состояния этого региона, что автор решил убрать эти понятия и объединить Южно- и Восточно-Китайские моря в единое Китайское? Так, автор увидел "вертикаль" в перечислении следующих стран: "Россия-Белоруссия-Армения-Нагорный Карабах-Курдистан (!? - Л.М.-Ш.) -Сирия-Палестина-Иран, возможно, и Пакистан, ряд других стран региона, а в ближайшей перспективе - Китай, Индия, Корея, осмелюсь заявить - скоро и Япония и другие страны" (стр. 17). Что ж, смелость - неплохое качество. Наш автор даже решился на редакцию Устава ООН: "Принцип территориальной целостности не может заменить более высокое положение в иерархии основополагающих принципов международного права по простой причине того, что в международном праве такой иерархии принципов нет, и все они обладают одинаковой международно-правовой силой" (стр. 19). Иерархии действительно нет, как нет в Уставе ООН и приведенного набора слов. Вообще, фантазии Абрамяна непредсказуемы. Так, он включил в НАТО Саудовскую Аравию, Пакистан и Израиль (стр. 12). Хорошо, что данное перечисление автор прервал словами "и другие страны". Стоит ли после сказанного удивляться тому, что автор, сам уроженец Арцаха, считает, что Аскеран

был азербайджанонаселенным поселком (стр. 158, 167), а жители Малибейли "закрывали доступ воды в столицу Степанакерт" (стр. 158), когда водопроводы в Степанакерт проложены прямо с противоположной стороны? Помните Гобла, утверждавшего, что карабахские реки снабжают Баку питьевой водой? Стоит ли удивляться тому, что Сарсангское водохранилище автором переименовано в Сарсандское (стр. 164), а Омарский перевал Мравского хребта в Омарский хребет? (стр. 163, 165). Вернемся, однако, к геополитическому состоянию в Закавказье. Автор, мягко выражаясь, слабо представляет себе значение этого термина. Выйти из этого положения ему помог изданный в 1989г. "Краткий политический словарь", начисто отвергающий само понятие "геополитика". Но Абрамян не замечает несоответствия между цитируемым источником и названием своей работы. Не потому ли, что в книге просто нет геополитических изысканий, если не принимать во внимание уже упоминавшуюся "вертикаль". Но, может быть, историк не обязан знать географию, международное право или политологию с геополитикой? Может, ему сподручней об истории писать? Выясняется, что нет. Наш автор и здесь грешит многочисленными неточностями. Начиная с истории древнейшей, кончая новейшей. Так он пишет: "В библейской же мифологии Торгом был праправнуком Мафусаила, сыном Ноя..." (стр. 99). Непонятно, кто был чьим сыном и праправнуком, но во всех случаях неправильно, ибо, согласно Библии, у Ноя было три сына - Иафет, Сим и Хам. Торгом приходился правнуком Ною. Отцом его был Гамер, сын Иафета. А Мафусаил - дед Ноя. Абрамян шокирует: "Отметим, турки гору "Арабат" со времен всемирного потопа переименовали по-своему". Турки не могли и не могут переименовать Арабат, ни "со времен всемирного потопа", ни позже. Они называют Арабат Агрыдаг, и произошло это не раньше X века, после их нашествия в наш регион. Указанные в книге годы русско-турецких войн (стр. 13) неточны, например, не указана война 1853-56гг., и все же я был бы бесконечно благодарен автору за предоставление сведений о баталиях, имевших место в "русско-турецкой войне 1918-21гг.". Каюсь, не знал о такой войне. Абрамян особенно благоволил к Ленину, считая источником зла для армян исключительно Сталина. "Ленин понятен и основательно для всех, вопреки грубым искажениям Сталина, разработал идеи о праве наций на самоопределение" (стр. 108). В подтверждение сказанному он обильно цитирует Ленина. Что ж, добавим еще одну цитату на ту же тему из столь любимого Абрамяном источника: "Интересы освобождения нескольких крупных и крупнейших народов Европы стоят выше интересов освободительного движения мелких наций..." (Ленин. Собрание сочинений, 1921г., т. 14, стр. 199-205). Интересы "освобождения" турок для Ленина были гораздо важнее интересов "мелкой нации" вроде нашей. Если Арцах и Нахиджеван были переданы Азербайджану с подачи Сталина, то Ленин это, безусловно, одобрял. Точно так же, как передачу Джавахка Грузии. Но Абрамян, искренне влюбленный в Ленина, готов обвинить в бедах армянского народа кого угодно - Хрущева, Брежнева - только не его. В этом стремлении он доходит до абсурда, до, простите, бреда, изложенного на бумаге. Вот какими сведениями готов он ошарашить читателя: "... приведем данные по передаче Азербайджану территорий соседних народов и тех, которые были под протекторатом России. Агджабеды были переданы Азербайджану в 1962г., Дашкесан - 1948, Джабраил - 1980, Ждановск - 1966, Зангелан - 1967, Кельбаджар - 1980, курдский Лачин - 1923, Мирбашир - 1949, армянскую Нагорно-Карабахскую область - в 1923г., второй город Нахичеванской области Армении - Джуга, ставший Джульфой, - сохранился на старых армянских картах". Остается лишь предположить, что Абрамян воспринял создание или перекройку административных районов АзССР как "передачу" этой республике новых территорий. И уже как-то неловко напоминать, что Нагорный Карабах был передан Азербайджану в 1921 году, что Лачинский район был лишь курдонаселенным, что на "старых картах" сохранилась не только Джуга, но и все вышеперечисленные города и поселки. Согласен простить Абрамяну незнание истории АзССР (воз-

можно, его диссертация рассматривала проблемы армянской истории второй декады июля 1435г.). Но как простить ошибки, допущенные им при освещении Карабахской войны. Проблема даже не в придуманных должностях Аркадия Тер-Тадевосяна и Гургена Далибалтаяна, соответственно названных им командиром армейской группы войск и командующий войсками Карабаха. Автор, взявшийся описать отдельные эпизоды Карабахской войны, делает это явно со слов человека, недолгое время проводшего в Арцахе, принявшего опосредованное участие в боевых действиях и создающего мнение о своей особой роли в описываемых событиях. Не в силу ли этой опосредованности рассказ о взятии Шуши так живо напоминает пересказ фильма о Мальчише-Кибальчише? Собеседник Абрамяна явно прибыл в Карабах уже после того, как там были организованы оборона Шаумяновского и Мартакертского районов, было освобождено село Тог Гадрутского района, проведена блестящая военная операция по освобождению армянских сел Сариншен и Цор, равно как и господствующей над Гадрутом высоты, на которой находилась превращенная в крепость ретрансляционная телевышка. Обо всем этом в книге нет ни одного слова. Все эти военные операции были разработаны командующим Силами самообороны Арцаха А.Тер-Тадевосяном и проведены при его непосредственном руководстве и участии. Не будет преувеличением сказать, что вышеперечисленные победы заложили основы для последующих успехов, в частности, освобождения Лесного, Малибейли, Ходжалу, Джангасана, Шуши... Будем откровенны, к большинству из перечисленных побед рекомендовавший книгу к печати генерал Далибалтаян не имеет отношения. Да, во время освобождения Ходжалу и Шуши он находился в Карабахе, но эти операции разрабатывались А.Тер-Тадевосяном и проводились под его командованием. В конце-концов, многие из непосредственных участников этих событий живы, и если так уж приспичило исказить историю, то придется подождать несколько десятков лет. Вообще, выдающееся достижение армянской доблести и военной мысли, продемонстрированное при освобождении Шуши, многим не дает покоя. И относится это не только к тем, кто в те дни непосредственно находился в Арцахе. Д.Багдасарян, например, в справке, подготовленной Союзом офицеров Армении "О шушинско-лачинской операции", договорился до абсурда. Он утверждает, что лавры освободителя Шуши должны принадлежать именно ему, поскольку в преддверии операции он... произвел несколько артиллерийских выстрелов из Горисского района по Лачину. Поражение всегда сирота, а вот у победы находится множество родителей. Возможно, потому что многие непосредственные участники этой победы скромно умалчивают о своей роли. Истинные герои не способны на саморекламу, да они в ней и не нуждаются. Это, однако, не значит, что мы должны спокойно наблюдать за тем, как преднамеренно искажается правда. Молчание в данном случае сродни соучастию в воровстве, и если искажение недавней истории будет продолжаться, то, видимо, придется рассказать о некоторых особенностях пребывания в Карабахе иных многозвездных генералов. Пока же, думается, следует признать, у Ходжалинской и Шушинской операций есть два родителя - армянский воин и военный талант Аркадия Тер-Тадевосяна. И последнее. Абрамян, вольно или невольно, публикует "сведения", льющие воду на мельницу азербайджанской государственной пропаганды, пытающейся обвинить Республику Армения в аннексии ее территорий. Так, среди "основных организаторов и вдохновителей карабахской исторической эпопеи" названы президент Армении Л.Тер-Петросян, начальник Главного штаба Вооруженных сил Армении Г.Далибалтаян, министры обороны РА В.Манукян и В.Саркисян. Утешением обеспокоенному читателю может служить тот факт, что данная книга никем не может быть воспринята серьезно.

Հարձակումները ՀՀ ԳԱԱ-ի և հայրենի պատմագիտության դեմ
և հակազդեցության պակասը

1.



06.09.2001

Перлы скверны

Открытое письмо редколлегии "Арменоведческого журнала АЙКАЗЯН"
по поводу выхода в свет 20-го тома

Поздравляю вас с выходом в свет юбилейного номера и - с некоторым опозданием - с 30-летием вашего издания, состоявшегося в прошлом году.

Со дня основания целью журнала было, как свидетельствует его название, способствовать развитию арменоведения, развивать эту столь дорогую и важную для нас научную область посредством объединения усилий арменоведов Армении и диаспоры.

К сожалению, две рецензии, напечатанные в 20-м ежегоднике "АЖА", вызывают серьезные сомнения в верности сегодняшней редколлегии журнала этим целям.

Одна из статей написана заведующим кавказским отделом библиотеки американского Конгресса Левом АВДОЯНОМ в связи с работой историка Армена АЙВАЗЯНА "Освещение истории Армении в американской историографии: критический обзор" (Ереван, 1998). Кстати говоря, эта работа, написанная с научных позиций и основанная на неопровержимых фактах, насколько мне известно, содержит наиболее полную и наиболее принципиальную оценку фальсификаторов армянской истории на Западе.

Чем же примечательна статья Левона Авдояна?

По мнению автора, НАН РА является "мертворожденной", а в области арменоведения в РА, как и в Азербайджане, процветает "буниатовская школа". Желательно, и это было бы правильно, чтобы на это обвинения ответили наши титулованные арменоведы. Увы...

Цель Авдояна - опорочить работу А. Айвазяна. Написанное им не рецензия, а сквернословие, не имеющее ничего общего с этикой интеллигентного человека. Интересно, что ученый, называющий свой "шедевр" рецензией, подвергает критике научное исследование своего оппонента, не приводя ни единой цитаты. Более того, он уже в первом абзаце именует А. Айвазяна "интеллектуальным террористом".

Преодолевая соблазн нацепить Авдояну соответствующий ему ярлычок, хотела бы сказать: пусть таких "террористов", как А. Айвазян, будет побольше - при полном безразличии государственных и научных организаций, может быть, хоть они защитят наше национальное достоинство.

Для нас привычным было, когда в свое время армянские арменоведы давали достойный ответ турецко-азербайджанским фальсификаторам. К сожалению, теперь становится привычным для нас то печальное обстоятельство, что раздающиеся с Запада, в особенности - со стороны американской "арменоведческой" школы, дискредитирующие выпады остаются без ответа.

Пальма первенства здесь принадлежит самому славному нашему ученому за рубежом - иностранному члену НАН РА академику Ричарду Ованнисяну. Еще прежде Авдояна он обозвал "националистами" всех армянских историков, обладающих национальным менталитетом.

Не получив вовремя отпора, еще пышнее расцвела элита американских "арменоведов" - Рональд Сюни, Джеймс Рассел, Роберт Томсон, Роберт Хьюсн, Нина Гарсоян и др. Коллеги в Армении за малым исключением (академики Лендруш Хуршудян, Манвел Зулалян и др.), неизвестно почему, трепещут при одной мысли о критическом отношении к западному арменоведению. И солидарно, в братском согласии помалкивают...

В Армении известны одно-два из перечисленных мною имен - благодаря публикациям в прессе. Сюни, к примеру, имеет свое постоянное место на страницах наших газет. Он - профессор Чикагского университета с 1995г., а до того почти десятилетие руководил кафедрой арменоведения Мичиганского университета. Сюни и сегодня "достойно" продолжает воспевать пораженческую политику Л.Тер-Петросяна - Ж.Липаритяна, организует армяно-турецкие "диалоги" и участвует в них, представляя позицию "армянской" стороны... А то, как иные американские круги защищают Айдат, мы недавно еще раз увидели на примере организации американских богачей, именуемой "Армянская Ассоциация Америки".

И вот честь защищать "арменоведческие" взгляды Сюни в юбилейном томе "АЖА" взял на себя член редколлегии журнала Ара САНДЖЯН, предприняв неудачную попытку "опровержения" неоспоримых аргументов А.Айвазяна. В своей монографии А.Айвазян, приводя параллельный текст английского оригинала, раскрыл суть книги Сюни "Глядя на Арарат. Армения в Новой истории (1997)" - со всеми ее "перлами". Приведем некоторые из них. Сюни отождествляет Восточную Анатолию с Армянским нагорьем, в Карабахском конфликте отстаивает турецко-азербайджанскую точку зрения. Еще позорнее его позиция в вопросе Геноцида - он не только затрудняется квалифицировать происшедшее, выбрать нужный термин - погромы или Геноцид, но и лишает проблему правовой основы и т.д.

Сколько странно, столь и удивительно: неужели в редколлегии "АЖА" не нашлось никого, кто объяснил бы г-ну Санджяну научную несостоятельность и национальную подлость хотя бы вот такого утверждения: "Из-за недоступности османских документов по сей день многие страницы обобщающей истории Геноцида армян (где и при каких условиях он был запланирован, какие именно цели преследовал и т. д.) остаются совсем темными, и перед любым историком (армянским или иностранным) стоит профессиональная задача - проанализировать действительность на основе только имеющегося материала и логики. До какой степени преступны были те, кто запланировал и реализовал Геноцид, выяснится после появления всей истины в целом... Почему ученые обязаны выступать лишь в роли защитников так называемых справедливых прав нации и кому решать, что значит "права" и что значит "справедливый"? (стр. 476-477).

Если кто-либо мне докажет, что это не турецкая точка зрения, я принесу свои извинения.

А чем объясняет уважаемая редколлегия факт публикации на 198-й странице данного тома азербайджанской карты 2000г., на которой Карабах указан в составе Азербайджана, нет освобожденных территорий и Лачинского коридора, а столица Карабаха обозначена как Ханкенди (удовольствуемся тем, что в скобках указан Степанакерт)? Все это повод к тяжелым и грустным размышлениям.

Хочу спросить редколлегию "АЖА": чьи интересы защищает это выходящее за рубежом мастиное издание, публикуя подобные статьи и карты?

И при этом Санджян с оскорбленным видом пишет: "Айвазян призывает... не довольствоваться критикой лишь только турок и азеров, ибо не только они якобы (sic?!- А.Г.) целенаправленно бьют

по интересам армянского народа и армянской государственности... Развернутая внутри американских центров "арменоведения" и сильно политизированная деятельность, согласно Айвазяну, с точки зрения "национальной" безопасности Армении (внутренней - гражданской и внешней - международной) гораздо вреднее по своим последствиям и опаснее, чем турецко-азербайджанские историко-научные фальсификации" (стр. 464).

Прежде чем взять под свою защиту книгу Сюни, Санджян сокрушенно сетует на то, что А.Айвазян высоко ставит источниковедческую ценность историй Мовсеса Хоренаци, Павстоса Бюзанда, Егише, Агатангелоса. Он возмущается тем, что А.Айвазян называет Сюни, Томсона и им подобных арменофобами.

А как иначе можно назвать историка, в частности Томсона (в настоящее время - заведующий кафедрой им. Г.Гюльбенкяна в Оксфордском университете), который, переводя на английский язык работы наших историографов Vв., не только в своих предисловиях перемещает их в VIII-IXвв., называет их истории надуманными, вымышленными, ненаучными, но и, к примеру, именует Хоренаци "перво-разрядным фокусником", "наглым и лживым фальсификатором"? Как же за этим мог не последовать беспристрастный комментарий А. Айвазяна: "... результат перевода (если не собственно цель) - не введение в широкий научный оборот богатого материала армянской историографии, но напротив - он изымается из серьезных научных исследований, навсегда объявляется ненадежным источником" (стр. 166).

На сей раз мишенью тандема Авдоян-Санджян стал Армен Айвазян. Следующим, наверно, будет доктор филологических наук Армен Петросян, опубликовавший в 3-м номере "Историко-филологического журнала" НАН РА за 2000г. ценное исследование "Арменоведческие" измышления Джеймса Рассела". Последний является одним из самых ярких представителей американской школы "арменоведения". Сей муж сменил Томсона на посту заведующего кафедрой арменоведения Гарвардского университета. В вышедшем в свет в США в 1997г. 2-томном учебнике "Армянский народ с Древнейшего до Нового времени" (редактор - Р.Ованнисян) этот последний написал целую главу под названием "Формирование армянского народа".

Еще в 1991г., когда Армен Петросян и заместитель директора Института археологии и этнографии НАН РА Григор Арешян были в Лос-Анджелесе, этот материал передали им, чтобы узнать их мнение. В дальнейшем с их мнением не посчитались. Этот текст изобилует не только "ложными научными идеями, но и потрясающими сведениями" (Армен Петросян). Приведем два примера: оказывается, против Бела воевал армянский бог Ваагн, крепость Эребуни построил Аргишти Второй. Кстати говоря, в НАН РА то ли не хотят, то ли избегают точной и ясной оценки этого "учебника"...

Нужно быть очень наивным, чтобы не видеть, что стоит за всем этим. Думаю, наши бейрутские соотечественники преследуют цель ВЫВЕСТИ центр арменоведения за пределы Армении. Иначе почему Санджян в качестве очередного обвинения подчеркнуто цитирует ту мысль А.Айвазяна, что Армения являлась и является центром арменоведения? Неужели это субъективное мнение одного только А.Айвазяна? Это действительно пока так. И наши вынужденные выступления в адрес отдельных зарубежных ученых обусловлены вовсе не тем, что мы хотели бы лишить кого-либо права заниматься арменоведением: вся проблема в том, с каких позиций это делается.

Санджян, судя по всему, занят весьма неблагодарным и бесперспективным трудом, выполняя заказ сюни, томсонов и стоящих за ними протурецких сил. Они пользуются тем, что сегодня Армения ослаблена, а руководство республики, к сожалению, не осознает, не придает важности, не понимает, что оно проигрывает, уступая арменоведению. Арменоведение для нас - задача стратегии и национальной безопасности, и последовательное ослабление его в Армении, мягко говоря, - предательство.

Это письмо я пишу с душевной болью и необъяснимой горечью. Моя цель не в том, чтобы умалить заслуги "АЖА", а, напротив, в том, чтобы подчеркнуть важность его исторической миссии. Мне хотелось бы впредь никогда не видеть в журнале материалов, наносящих вред нации.

Посредством родного радио, через передачи, адресованные зарубежному армянству, вместе со всем личным составом нашей редакции "Айреник - Спюрк" мы делали и будем делать все для укрепления связи нашей диаспоры с Родиной, для восстановления поколебленной веры в Родину у тех, кто покинул ее в последнее десятилетие из-за ситуации, возникшей в результате политической деятельности наших властей, для устранения заметной холодности к Армении - одним словом, для реализации заветных мечтаний всех армян.

С уважением -

*Асмик Гулакян,
редактор программы "Айреник - Спюрк" национального радио Армении*

2.

Սույն հոդվածը կրճատումներով տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում (դեկտեմբերի 5, 2001)՝ «Պաշտպանենք հայագիտությունն այսօր» վերնագրով, իսկ ստորև ներկայացվող ամբողջական տեքստը հրապարակվել է «Վասն հայության» հանդեսում (#14, նոյեմբերի 27, 2001):

Մեր «անվանի» պատմաբանները Երեք կնիկ, մի Դերենիկ... Կակ հայագիտության «Շիրմաքարի ճարտարապետները»

*Մի՛ վախեցեք
Ժանգոտ թասից ծանգ քերելուց.
Նա դրանից չի փշանա:
Մի՛ վախեցեք
Կեղծի մասին ճիշտ գրելուց
Նա դրանից կքշանա:
Պարույր Սևակ*

Հայաստանում հետևում են «խելագար և բացարձակ տգետ» պատմագիտական մեթոդների, ՀՀ ԳԱԱ-ն «մեռելածին» է, հայագիտության բնագավառում «ծաղկում է բունիաթովյան դպրոցը, ինչպես Ադրբեջանում»... Այս «գոհարների», ինչպես նաև Արմեն Այվազյանի «Հայոց պատմության լուսաբանումը ամերիկյան հայագիտության մեջ. քննական տեսություն» (Երևան, 1998թ.) աշխատությունը «գրախոսող» հեղինակներից մեկը ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանի Կովկասի բաժնի պատասխանատու Լևոն Ավդոյանն է («Հայկազյան հայագիտական հանդես», այսուհետ՝ «ՀՀՀ», Բեյրութ, 2000թ., էջ՝ 480-482):

Մյուս «գրախոսականն» էլ գրել է խմբագրակազմի անդամ Արա Սանջյանը՝ փորձելով կասկածի տակ առնել Արմեն Այվազյանի մենագրության մեջ հրապարակված անվիճահարույց փաստերը («ՀՀՀ», 2000թ., էջ՝ 457-479): Տարեգրքի այս համարը տպագրել է նաև մեկ այլ ցնցող փաստաթուղթ. «Ադրբեջանն այսօր» երկլեզու քարտեզը (2000թ.), որտեղ Ղարաբաղը Ադրբեջանի կազմում է, մայրաքաղաքը՝ Խանքենդին, փակագծում՝ Ստեփանակերտ, նշված չեն ազատագրված տարածքները և Լաչինի միջանցքը (էջ՝ 198):

Վերոնշյալ հրապարակումների մասին, արդեն քանի ամիս, չէին արձագանքում ոչ Հայաստանում, ոչ սփյուռքում: Եղբայրաբար լռում էին... բոլորը: Ես ստիպված այս փաստերի մասին առաջին անգամ բարձրաձայն խոսեցի Ե.Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարա-

նում, երբ հուլիսի 26-ին տեղի էր ունենում «ՀՀՀ»-ի հոբելյանական այս հատորի շնորհանդեսը (պատասխանատուները չէին բավարարվել հեռվից մեզ վրա ցեխ շաքրտելով ու մեր երեսին թքելով, հայրենիքում ցուցադրում էին իրենց «նվաճումները»):

Ներկաներից միայն «Պատմա-բանասիրական հանդեսի» («ՊԲՀ») փոխմամբագիր, պատմական գիտությունների թեկնածու Պավել Չոբանյանն արժանապատիվ մտավորականի պես մոտեցավ ամբիոնին՝ բացատրելու համար, թե ինչ վտանգներով է հղի նման քարտեզի հրապարակումը: Այնտեղ նաև այլ պատմաբաններ կային, սակայն նրանց ներկայությունը չզգացվեց...

Ես ստիպված էի հայաստանցի պատմաբաններին կրկին հիշեցնել իրենց մասնագիտական և քաղաքացիական պարտականությունները՝ բաց նամակ հրապարակելով «Վասն հայության» (28.08.2001) և "Голос Армении", (6.09.2001) թերթերում:

Ըստ իս՝ Լ.Ավդոյանը ծանր մեղադրանքներ է հասցրել Հայաստանի ակադեմիական գիտությանը, մասնավորապես՝ հայագիտությանը: Իսկ Ա.Սանջյանը իր հուսահատ պաշտպանության տակ է առել ամերիկյան «հայագիտական» դպրոցի մի «կարկառուն ներկայացուցչի»՝ ոչ անհայտ Ռոնալդ Սյունուն, որի «հայագիտական» հայացքները մինչև ուղն ու ծուծը բացահայտել, մերկացրել է Արմեն Այվազյանը՝ իր աշխատության մեջ: «Օսմանյան փաստաթուղթերու անհասանելիության հետևանքով,- գրում է Ա.Սանջյանը,- առ այսօր հայոց Եղեռնի համընդհանուր պատմության շատ երեսակներ (թե ան է՛րբ եւ ի՛նչ պայմաններու տակ ծրագրվեցավ եւ թե ճշգրիտ ի՛նչ նպատակ կհետապնդէր և այլն) տակավին մութ կմնան, և որևէ պատմաբանի (հայ կամ օտարազգի) մասնագիտական առաջադրանքն է իրականությունը վեր հանել՝ հենվելով առկա փաստական նյութի ու տրամաբանության վրա միայն: Թե՛ ո՛ր աստիճանի հանցավոր էին ցեղասպանությունը ծրագրողներն ու իրականացնողները, կպարզվի ամբողջական ճշմարտության երևան գալեն ետք... Ինչու՞ գիտնականները հանդես պետք է գան միայն ազգի այսպես կոչված արդար իրավունքներու պաշտպանի դերով, և ո՞վ պիտի որոշե, թե ի՛նչ բանը իրավունք է, և ի՛նչը արդար» (էջ՝ 476-477):

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի մի խումբ ընկերներ՝ պատմագիտության դոկտորներ՝ Էմմա Կոստանդյանը, Լիդա Գևորգյանը, թեկնածուներ՝ Գոհար Առաքելյանը և Դերենիկ Մուրադյանը, հոկտեմբերի 30-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում ինձ պատասխանեցին «Հայ պատմաբանների իրական խնդիրները» հոդվածով: Որ հոդվածի իրական հեղինակներն այն ստորագրած անձինք չեն, զգացվում է նյութի բովանդակությունից և շարադրանքից: Այնտեղ նույնիսկ ճշացող անիրազեկություն և հակասություններ կան: Ելնելով խորագրի բովանդակությունից՝ կարելի էր ենթադրել, որ նրանք պետք է ի ցույց դնեին հայագիտության արդի փուլի խնդիրները և փորձեին առաջադրել լուծման ուղիներ: Դեղատոմս, այո, առաջարկում են. ձեռք բերել... հավկուրություն: Այսինքն՝ առանց պատճառը վերացնելու, առաջարկում են վերացնել հետևանքները՝ իրենք էլ չիմանալով, թե ո՞ւմ և ի՞նչ նպատակի են ծառայում (ասենք՝ շատ էլ լավ գիտեն): Դրանց մասին քիչ հետո՝ ըստ հերթականության: Թվում էր՝ մեր պատմաբանները պետք է գոհ և շնորհակալ լինեին, որ լրագրողը քաղաքացիական զգոնություն է դրսևորել նաև իրենց փոխարեն:

Սակայն, ինչպես պարզվում է, ներքոստորագրողների խռովքի պատճառն ամենևին էլ արևմտյան «հայագետների» կատարած ավերածությունները չեն: Քառյակը զայրացել և բավական անհաջող ընդվզել է իմ դեմ, որ համարձակվել եմ հիշատակել ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ռիչարդ Հովհաննիսյանի անունը, այսինքն՝ հանդգնել եմ ասել. «Արքան մերկ է»: Անդրադառնալով նրանց առավել «ծանրակշիռ փաստարկներին»:

1. Քառյակը գրում է, որ հայագիտության ոլորտում ստեղծված «անցանկալի վիճակն ավելի սրեց 1998թ. երիտասարդ շնորհալի պատմաբան Արմեն Այվազյանի հրատարակած «Հայաստանի պատմության հարցերի լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ» աշխատությունը: Գոնե ճիշտ արտագրեին մենագրության վերնագիրը... Այստեղ միտումնավոր կերպով խառնված են

պատճառն ու հետևանքը: Արմեն Այվազյանի գիրքը գրվել է ի հետևանք հայագիտական դպրոցում արդեն ստեղծված անառողջ մթնոլորտի և ի պատասխան ամերիկյան «հայագիտական» դպրոցի տված արտադրանքի, որտեղ իր «ծանրակշիռ» տեղն ունի Ռ.Հովհաննիսյանի խմբագրած, ամերիկյան հայագիտության «մեծ նվաճում» համարվող «Հայ ժողովրդի պատմությունը հինգ մինչև նոր ժամանակները» (Լոս Անջելես, 1997թ.) երկհատոր դասագիրքը, որի վրա պրոֆեսորն իր 17 «քաջարի» հեղինակների հետ տքնել է շուրջ 20 տարի: Այս հեղինակները՝ Ռոնալդ Սյունի, Նինա Գարսոյան, Ռոբերտ Թումսոն, Ջեյմս Ռասել, Ռոբերտ Հյուսըն և ուրիշներ հայտնի են իրենց հակահայկական տեսակետներով: Արդեն քանի տարի այս «գիտնականները» լծված են մի շատ կարևոր «գործի». ապացուցել, որ հայ ժողովուրդը Հայկական բարձրավանդակում եկվոր է, իսկ նրա պատմագրությունը՝ մտացածին, ոչ գիտական, այսինքն՝ այն չի կարելի օգտագործել որպես սկզբնաղբյուր: Խորենացին «առաջին կարգի աճապարար» է, «լկտի և կեղծարար խաբեբա», Եղիշեն՝ «ստախոս», Արցախը՝ Աղվանքի մաս, Հայկական լեռնաշխարհը՝ Արևելյան Անատոլիա և այլն, և այլն: Եվ մարդկանց աչքերին թոզ փչելով՝ անվերջ կազմակերպում են Հայաստանի մշակույթին նվիրված միջազգային գիտաժողովներ, ելույթներ ունենում, գեղեցկախոսում՝ մոռանալով խոստովանել, որ խոսքն այն ազգային մշակույթի մասին է, որի կրողներին հաջողությամբ նույն այդ հոետորները կտրում են հարազատ արմատներից: Կարծում եմ՝ սա նաև ազգային անվտանգության լուրջ խնդիր է, և համապատասխան կառույցները չպետք է աչք փակեն սրա առաջ («Հայոց աշխարհ», «Հայագիտությունը աշխարհաքաղաքական խաղերի որոգայթներում», 3. 11. 2001)...

Քառյակը հեզնանքով գրում է. «Պարզվում է, որ ըստ Արմեն Այվազյանի, Ռ.Հովհաննիսյանի «մեղքն» այն է, որ նա «հովանավորում» է «թուրքամետ» ու «հայատյաց» արևմտյան գիտնականներին, անձամբ խմբագրել և նրանց հետ հրատարակել է «Հայ ժողովրդի պատմությունը հինգ մինչև նոր ժամանակները» անգլերեն «սխալաշատ» երկհատորյակը»: Մասնագետների կարծիքով՝ այն լեփլեցուն է սխալներով, հաճախ՝ միտումնավոր, երբեմն՝ զավեշտալի: Եվ դա բացատրում են այն աննախանձելի «խիզախությամբ», որով 20-րդ դարի մասնագետն ստանձնել է խմբագրել կոլեկտիվ այնպիսի մի աշխատություն-դասագիրք, որի համար ինքը, ըստ գիտական չափորոշիչների, կոմպետենտ չէ: Բերենք ընդամենը երկու օրինակ: «Հայկական առաջին տպագիր գիրքը լույս է տեսել... 1660թ. Հոլանդիայում» (տես Ա.Ա.-ի նշվ. աշխ., էջ՝ 225): Բելի հակառակորդը ոչ թե Հայկն է, այլ՝ Վահագնը (Արմեն Պետրոսյան, «Ջ.Ռասելի «հայագիտական» հնարանքները», «ՊԲՀ», 2000թ., N-3, էջ՝ 243):

Քառյակը դիտավորյալ անտեսում է այս քննադատությունները և չի էլ փորձում բանավիճել կամ հերքել Արմեն Այվազյանի և Արմեն Պետրոսյանի առաջ քաշած դրույթներից գեթ մեկը: Մի՞թե սա է գիտական մոտեցումը: Հավանաբար, քառյակն այսպես է պատկերացնում իր իսկ առաջադրած «իրական խնդիրների» լուծումները: Այսպիսով՝ արտասահմանում հայկական դպրոցների և ընթերցողների լայն շրջանակների համար պատրաստված այս դասագրքի կոպիտ և միտումնավոր սխալները քառյակը դարձյալ լռության է մատնում: Այդ քննադատություններին չի անդրադառնում նաև Ռ.Հովհաննիսյանը, ըստ ներքոստորագրողների՝ այս «հանիրավի հերյուրանքներին պատասխանելու անհրաժեշտության» փոխարեն «մեծահոգաբար» նախընտրելով «արժանապատիվ» լռություն պահպանելը: Ավելին, այդ մասին նա լսել անգամ չի ուզում. «Ես խնդրած եմ 17 տարբեր հեղինակների, որոնք նշանավոր հեղինակներ են, տարիներով աշխատած են այս հարցերի շուրջ, որ ներկայացնեն իրենց տրված թեմաները» (տես Ռ.Հովհաննիսյանի հարցազրույցը «Իրավունքին», 1999թ., N-35): Ռ.Հովհաննիսյանը միշտ և ամենուրեք բոլոր հնարավոր միջոցներով պաշտպանում է իր գործընկերներին: Բերենք մեկ օրինակ. «Վերջերս, օրինակ, այստեղ (ՀՀ-ում - Հ.Գ.) գիրք մը հրատարակվեցավ, ուր կը քննադատվի արտասահմանյան հայագիտությունը: Ես չունեմ այդ գիրքը, գրախոսականը կարդացած եմ: Անհեթեթ բաներ գրված են, որ իբր արտասահմանյան հայագետները ինչ-որ թրքական ծրագիրներ առաջ կը տանեն: Ցնորամտություն է, քանի

որ մենք 30-40 տարի է՝ կայայքարինք հայկական տեսակետներն առաջ տանելու համար» («Հայացք Երևանից», «Թշնամական դիրքեր բռնելով՝ ոչ մեկ բան չի փոխվիր», 1999թ., թիվ 3, էջ՝ 14) :

2. Քառյակը գրում է. «Մեր պատմաբանների մի մասը, այդ թվում ազգային ակադեմիայի շատ գիտնականներ, որոնք հավանաբար չէին հասցրել ամբողջովին ընթերցել այս աշխատությունը, բավարարվեցին միայն հեղինակին գովաբանելով» (՝): Իսկ ամերիկյան «հայագիտական» դպրոցի մասին մամուլի համար իմ պատրաստած նյութերը, որոնք հիմնականում հարցազրույցներ են, անվանել են «անհիմն և փաստագուրկ»:

Նախ՝ ո՞վ է ձեզ իրավունք տվել նսեմացնելու ուրիշների գնահատականները, և երկրորդ՝ դա հարի՞ր է գիտնականի էթիկային... Երեք տարին չբավարարե՞ց մասնագետներիդ՝ այդ գրքի բովանդակությանը ծանոթանալու համար, մանավանդ, որ ձեր «կուռքերի» մասին է խոսքը... Թե՞ դուք միայն ձեր գրածներն եք կարդում...

Արմեն Այվազյանի մենագրությունը լույս է տեսել 1998թ.՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտխորհրդի միաձայն երաշխավորությամբ: Այս աշխատության մասին ծանրակշիռ հոդված է տպագրել ակադեմիկոս Մանվել Զուլալյանը («ՊԲՀ», 1999, N-1, էջ՝ 351-354): Ըստ նրա՝ «...սույն գիրքը կարելի է դասել գիտական սխրագործությունների շարքը: Հեղինակը, հիրավի, ցուցաբերել է քաղաքացիություն և հայրենասիրություն՝ փորձելով ակադեմիական ղեկավար շրջաններին հիշեցնել, որ ամերիկյան և ամերիկահայ որոշ հայտնի պատմաբանների նկատմամբ որդեգրած մոտեցումը գիտական ու քաղաքական առումով սխալ և վնասաբեր հետևանքների է հասցնում» (էջ՝ 354):

Հրապարակումներ են եղել նաև հանրապետական մամուլում: Գրքին, որպես կարևոր երևույթ, անդրադարձել են ռադիոյի տարբեր խմբագրություններ: Քառյակը հիշատակում է ռադիո-հաղորդումներից մեկը, որտեղ ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանն այն անվանել է «գիտական սխրանք». «ԱՄՆ-ի հայագիտությունը թուրքական հայագիտության ազդեցության տակ է... Հայաստանի հայագետները մեղադրվում են գավառականության և ազգայնականության մեջ: Այդ ոլորտում ընդգրկված են անգամ հայագրի հայագետներ: Ստեղծված իրավիճակում Արմեն Այվազյանի ուսումնասիրությունը, իմ կարծիքով, կդառնա սկիզբ՝ հայագիտության իրավունքների համար մղվող պայքարում: Արևմտյան պատմագիտության հարձակման պայմաններում Հայաստանի պատմագիտությունը վարել է այդ վտանգավոր միտումները «չնկատելու» քաղաքականություն: Ներկա փուլում Հայաստանի հայագիտությունը պարտավոր է վարել հարձակողական՝ քաղաքականություն: Դրա հիմքը դրվում է սույն աշխատությամբ» (Ազգային ռադիո, «Հայաստանի ձայն» խմբ., «Ամերիկյան հայագիտություն, թե՞ հայագիտություն», 28 մարտի, 1999թ.): Այս, ձայնագրությունը պահպանվել և հրապարակվել է («Եթեր», «Ամերիկյան «հայագիտության» նվաճումները», 2000թ., N- 42-44): Նույն այդ ռադիոհաղորդման մեջ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանն ընդգծել է, որ ամերիկյան հայագիտությունն իրո՞ք շեղվել է իստորիզմից:

3. ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը «Իրավունք» շաբաթաթերթի ընթերցողի՝ «ի՞նչ կարծիք ունեք անձամբ Դուք և... ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը ... Արմեն Այվազյանի «Հայոց պատմության լուսաբանումը ամերիկյան հայագիտության մեջ. քննական տեսություն» գրքի վերաբերյալ» հարցին այսպես է պատասխանել. «Ես ծանոթ եմ այդ գրքին: Մեր գիտնականները լավ գնահատական են տալիս, համարում են, որ արտահայտված մտքերն առողջ են և հաջողված» («Իրավունք», «Եթե գիտնականը դպրոց չի ստեղծել...», 1999թ., N-93):

«Հայ պատմաբանների իրական խնդիրների» լուծումները որոնելիս՝ քառյակը միտումնավոր շեղվում է թեմայից և, ի պաշտպանություն Ռ.Հովհաննիսյանի, «հայտնաբերում» «մեղմացուցիչ դեպք հանցանագր»՝ մեջտեղ բերելով 1998թ. նոյեմբերի 18-ին Բերկլիի համալսարանում նրա ելույթի սղագրության պատմությունը, որի համար *“Contemporary Caucasus Newsletter”* (“CCN”) պարբերականի գլխավոր խմբագիր Էդվարդ Վոլքերն իբր «ոչ միայն հրապարակավ ներողություն է

խնդրել պրն Հովհաննիսյանից, այլև դրանք ուղարկել է Հայաստան՝ համապատասխան գիտական հաստատություններին և Արմեն Այվազյանին»:

Իրականում «CCN» պարբերականի հաջորդ համարում (1999թ., ամսաթ, N-8, էջ՝ 12) Է.Վոլքերը հրապարակել է Ռ.Հովհաննիսյանի նշած վրիպակների բոլոր ուղղումները: Ռ.Հովհաննիսյանը չի պահանջել հերքել իր հնչեցրած «հայ ազգայնամոլ պատմաբաններ» արտահայտությունը, որի համար նրան քննադատել էին Հայաստանում: Եվ նրա այն պնդումը, թե իբր ինքն ասել է «նացիոնալ» և ոչ թե՝ «նացիոնալիստ», նախատեսված էր միայն հայաստանյան լսարանի համար, իսկ ԱՄՆ-ում այդ հարցին չի էլ անդրադարձել՝ հայաստանցի պատմաբաններին ներկայացրած մեղադրանքը թողնելով ուժի մեջ: Մենք, փաստորեն, գործ ունենք երկակի ստանդարտի հետ: Իսկ այն, որ «ի դեպ» ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն Աշոտ Մելքոնյանը ներկա է եղել այդ դասախոսությանը և չի լսել «հայ ազգայնամոլ պատմաբաններ» արտահայտությունը, լուրջ չէ և փաստարկ ծառայել չի կարող, որովհետև՝ ա) Ա.Մելքոնյանն անգլերենին չի տիրապետում, բ) այդ արտահայտությունը հրապարակված է «CCN»-ում (1998-99թթ., ձմեռ, N-7, էջ՝ 18), իսկ Ռ.Հովհաննիսյանի ուղղումները «նացիոնալ»-«նացիոնալիստին» առհասարակ չեն առնչվում:

Ահավասիկ Ռ.Հովհաննիսյանի ուղղումներն՝ անգլերեն բնագրով.

In the summary of the talk by Dr. Elkhan Nuriyev in the previous issue of this newsletter, the second sentence in the first full paragraph on page 23 should read, "Azerbaijan has aligned itself with the West, and its ability to survive as an independent state, and to build democratic institutions, will largely depend upon the presence of the West and American support."

There were also errors in the summary of the lecture by Professor Richard Hovannisian. Professor Hovannisian submitted the following corrections and clarifications:

"1. Professor Nina Garsoian has never stated that the Armenians were actually Iranians. She has argued, however, that the medieval Armenian and Iranian social structures mirrored one another in many ways and that, as the result of the adoption of Christianity in Armenia and the long struggle against Sassanid Iran, classical Armenian historians tended to obscure much of these common features. Garsoian also emphasized that Armenian society was based on the 'nakharar' system of semifederal, rural organization rather than on an urban structure. Classical Armenian historians have themselves attested to the presence of significant non-Armenian elements in certain Armenian cities. The point I wished to make during my talk was that these issues of medieval Armenian history are in need of further investigation and elucidation, just as are questions related to the ethnogeneses of the Armenian people and other aspects of ancient Armenian history.

2. The massacres of Armenians in 1909 took place in 'Cilicia', not 'Silyassia.'

3. The Russian revolution and Kerensky government were in 1917, not 1918.

4. The dates in the sentence, 'There is also a lacuna in our knowledge of Soviet-Turkish relations from 1912 to 1918,' are in obvious error and should be read '1918 to 1921'."

The referenced articles, we would like to reiterate, were summaries of talks by Professor Hovannisian and Dr. Nuriyev, not verbatim transcripts. Neither were they reviewed in advance by the speakers. We regret any inconvenience the errors may have caused.

BPS Caucasus Newsletter/2

«Հայացք Երևանից» հանդեսը տպագրեց խմբագրի ներողությունը, ինչպես ենթադրվում էր, առանց վրիպակների (1999թ., թիվ 3, էջ՝ 16): Իսկ թե ինչո՞ւ «Իրավունքը» չտպագրեց Է. Վոլքերի ուղարկած անճշտությունները, չեմ կարող ասել՝ չնայած «Իրավունքը», ի պատիվ իրեն, ի՞նքն է սկսել այս բանավեճը: Իսկ Ա.Մելքոնյանի պարագայում խմբագրությունը, հավանաբար, ավելի հե-

ռատես ու շրջահայաց է եղել, հասկացել, որ երիտասարդ պատմաբանին ներքաշել են անագնիվ, ոչ մեկին պատիվ չբերող խաղի մեջ, որ ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի, կքանդի հարմարվող հայրենասերների ու կրավորակերպ չեզոքների լուսապսակները և չի տպագրել այդ հոդվածը՝ միայն ի շահ հեղինակի: Օգտվելով առիթից՝ ուզում եմ իմանալ՝ ինչպե՞ս է Ա.Մելքոնյանը մեկնաբանում այդ նույն դասախոսության ժամանակ Ռ.Հովհաննիսյանի արտահայտած մեկ այլ միտք. «Հայ ազգայնամոլ պատմաբանները... շատ են զայրանում ինձ պես մարդկանց վրա, ովքեր գրքեր են հրատարակում, ուր ասվում է, որ հայերը խառնուրդ են» («CCN», 1998-99թթ., ձմեռ, N-7, էջ՝ 18):

Բարեբախտաբար, թե դժբախտաբար՝ նաև մեզ է բախտ վիճակվել տեսնել՝ ինչպես են մեր ավագ սերնդի ներկայացուցիչներից ոմանք կարմրում անցյալի իրենց գաղափարական ստրկամտության, քաղաքացիական տհասության և կենսագրական նմանատիպ «մանրամասների» համար: Տեսնում ենք՝ ինչպես են ջանում խմբագրել, սրբագրել իրենց անցյալը հատկապես որոշ վայր պատմաբաններ, ովքեր, պարզվում է՝ ժամանակին ավելի շատ վառարանի հուրք էին արտադրում... Հազիվ անցել են մեծ խմբաքանակներով «դոկտորներ» թողարկելու ժամանակները, հազիվ հնարավորություն է ստեղծվել հայագիտությունն ազատել օտար կապանքներից ու պարտադրանքներից, իսկ ոմանք, պնակալեզության իներցիայով, շարունակ նոր տերեր ու կերակրամաններ են փնտրում: (Փակագծում հիշեցնենք՝ ինչպես էին աղմկում հայաստանցի շատ հայագետներ, երբ մի քանի տարի առաջ հանգուցյալ Լենդրուշ Խուրշուդյանը կարևորում էր Հայաստանում հայագիտական միջազգային կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը՝ հայագիտությունը գիտական խիստ վերահսկողության ոլորտում պահելու համար:)

4. Քառյակն ինձ մեղադրում է, որ ես, «մոռանալով» իմ «նամակ-հոդվածի իրական նպատակը, կրկին անգամ... անհարկի» անվանարկել եմ Ռ.Հովհաննիսյանին: Պատմաբաններիդ ամբողջ խմբին խորհուրդ եմ տալիս մեկ անգամ ևս ուշադիր կարդալ իմ բաց նամակը՝ համոզվելու համար, որ Ռ.Հովհաննիսյանի հասցեին ոչ մի նման արտահայտություն չկա: Իմ նպատակն ամենևին էլ դա չի եղել: Այդ մեղադրանքը ինձ ամբաստանողներիդ երևակայության արգասիքն է: Ի տարբերություն տիտղոսակիր պատմաբաններիդ՝ ես խոսում եմ փաստերով և չեմ կարող իրերն իրենց անուններով չանվանել, ինչպիսի հնչողություն էլ այն ունենա: Հոդվածի կազմակերպիչներին, ինչպես արդեն ասացի, նյարդայնացրել, հունից հանել է Ռ.Հովհաննիսյանի անունը հոլովելը: Իսկ ինչո՞ւ են լռում, երբ պրոֆեսորը քննադատվում է մամուլի մյուս հրապարակումներում («Երկիր», «Մագոխիզմ», 15.10.1999թ.: «Голос Армении», «Диалог под звон турецких лир», 12.06.2001г.: «Ազգ», «Հոգեբույժ Վամրք Վոլքանը...», 19.07.2001: «Ազգ», Հայաստանն իր դրացիների հետ...», 28.07.2001 և այլն):

Ամերիկյան «հայագիտությանը» մի շառաչուն ապտակ է հասցրել բանասիրական գիտությունների դոկտոր Արմեն Պետրոսյանը՝ մեր արդեն հիշատակած «Զ.Ռասելի «հայագիտական» հնարանքները» ծավալուն վերլուծական հոդվածում: Ռասելի այդ «գլուխգործոցը», որի «էջերն անհասկանալի և անիմաստ կերպով հեղեղված են հեղինակի կասկածելի մտքերով, ինքնահնար լեզենդներով, տեսությունների անլուրջ շարադրանքով, լեզվաբանական մարզանքներով և այլն» (տես նույն աշխ., էջ՝ 246), իր «պատվավոր» տեղն է գրավել Ռ. Հովհաննիսյանի խմբագրած հայտնի երկհատորյակում՝ հայ ժողովրդի ծագման վերաբերյալ բոլոր հակահայկական տեսակետներով հանդերձ: Հետաքրքիր է՝ ինչո՞ւ է անտեսվում նաև Արմեն Պետրոսյանի ուսումնասիրությունը: Գուցե այն պատճառով, որ քննադատողները գիտաստիճաննե՞ր ունեն, իսկ ես՝ լրագրողս, այդ առումով շատ խոցելի եմ իրենց համար՝ որպես «самое слабое звено» («ամենաթույլ օղակ»)...

Ինչպե՞ս կբացատրի քառյակն ապագայում իր այս «քաղաքացիական խիզախությունը», իր խնդիրն է: Իրականում նրանք միայն այս չորսը չեն: Հոդվածի հեղինակի անունը կհրապարակենք մի ավելի հարմար առիթով: Կասկած չկա՝ նա կրկին ցույց կտա իր «պայծառ» դեմքը. ինչպես երևում է՝ ՀՀ ԳԱԱ սույն բարձրաստիճան այրը պարտավորված է ամերիկյան իր բարեկամների,

գուցե և ամերիկյան ոչ գիտական կառույցների առջև: Ի՞նչ իմանա... Ըստ մեզ հասած հավաստի տեղեկությունների՝ տեքստը վաղուց էր պատրաստ, պարզապես ստորագրահավաքը դանդաղեց...

Սա մի անգրագետ ներկայացում է՝ նույնքան ապաշնորհ կատարումով: Պարզապես ներքոստորագրող-կամակատարները՝ երեք կնիկ, մի Դերենիկ, ստանձնել են էպիգոդիկ շատ տխուր դերեր՝ ըստ տրամաչափի: Ի՞նչ կա որ, նրանք էլ ա՛յս կերպ են պատկերացնում շուկայական հարաբերությունները պատմագիտության մեջ՝ շտապելով տեր կանգնել իրենց փայաբաժնին՝ մի գրիչ, մի գուգագուլպա... Նման ծառայության համար դժվար թե նրանց համար վիզա ուղարկեն օվկիանոսի այն կողմից: Թեև ո՞վ գիտե... Ի վերջո՝ պատվեր կատարողի համար գլխավորը հաճոյանալն է, իսկ թե ի՞նչ են վճարում և ինչի՞ դիմաց, այնքան էլ էական չէ նրանց համար: Վկան՝ մեր պատմությունը, որից դաս առնել չեն սիրում հատկապես պատմաբանները...

Հարգելի ներքոստորագրողներ (դատելով ձեր վարքագծից՝ դուք միշտ մնալու եք ներքո և ստորագրող), դո՛ւք տվեք ձեր այս քայլի բարոյական և քաղաքացիական գնահատականը: Ժամանակն այն կտա: Վախենում եմ՝ ձեզանից ոմանք չհասցնեն «վայելել» փառքի դանիներն ու «հաղթանակի» բերկրանքը... Իսկ այսօր անձնապես ինձ ոչ մի վիրավորանք չեք հասցրել: Լրագրողիս ակադեմիայում, հատկապես ձե՛ր ինստիտուտում, լավ են ճանաչում: Իսկ ձեր թխած այդ ողորմելի պիտակները ձեզ համար արդե՛ն դարձրել եք... այցեքարտեր: Ինչևէ, գոնե կարողացա՞ք իրականացնել ձեր գերնպատակը՝ պաշտպանել Ռ.Հովհաննիսյանին՝ հանուն «առանց այն էլ պառակտված հայագիտական դպրոցի» միավորման, ինչպես փանջունիաբար գրում եք: Հայաստանում նրան «կուռք» եք դարձել՝ իբրև պատվանդան դեմ տալով ձեր անողնաշար մեջքը: Իսկ երերուն պատվանդանին կանգնելը չափազանց վտանգավոր է յուրաքանչյուրի համար... Ինչևէ, թող սա էլ ձեր հոբելյանական նվերը լինի պրոֆեսորի գործունեության 40-ամյակին:

5. Դուք միտումնավոր շրջանցում եք «ՀՀ»-ին հասագրած իմ քննադատությունները, ոչ մի խոսք չեք ասում Ա.Սանջյանի թրքաշունչ «տեսակետների» մասին, որոնց հանգամանորեն անդրադարձել եմ իմ բաց նամակում: Չեք էլ հիշատակում Ադրբեջանի 2000թ. քարտեզը, որտեղ Ղարաբաղը նույնիսկ ինքնավար մարզի կարգավիճակ չունի... Իսկ Լ.Ավդոյանի գառանցանքներն ու զագրախոսությունը ՀՀ ԳԱԱ-ի և Արմեն Այվազյանի աշխատության հասցեին պատմաբաններիդ համար «բացասական գրախոսության» արժեք ունի: Ի՞նչ գրախոսության մասին կարող է խոսք լինել, երբ Ավդոյանը ոչ մի մեջբերում չի կատարում Արմեն Այվազյանի մենագրությունից: Ամերիկացի ձեր գործընկերը ծանր մեղադրանք է հասցրել ՀՀ ԳԱԱ-ին: Սակայն, ինչպես երևում է, շատ տարօրինակ, անբացատրելի սիրով, առանց որևէ վերապահության կամ վարանումի դուք ընդունեցիք նրա «հաճոյախոսությունները»: Միայն ա՛յս կետում կարելի է պաշտպանել հիշյալ պարոնի տեսակետը և ձեզ, բոլոր ձեզ նմաններին ու ձեզ «խաղի կանոններ» թելադրողներին անվանել «մեռելածիններ» և «բունիաթովյան դպրոցի ներկայացուցիչներ»: Ես ձեզ շնորհավորում եմ՝ այդ պիտակը վայրկյան առաջ գրպանելու համար: Իսկ այսօր շնորհակալություն՝ մեկ անգամ ևս ինձ հրապարակավ ելույթի հնարավորություն ընձեռելու համար: Կարծում եմ՝ բերված փաստերը բավարար են, որպեսզի Արմեն Այվազյանի՝ հայագիտության մեջ հիրավի դարակազմիկ այս աշխատությանը դեռևս անձանոթ ընթերցողը հասկանա, որ ա՛յս աշխատությանն է վերապահված հայ պատմաբանների քաղաքացիական դիրքորոշումը ճշգրտող լակմուսի թղթի դերը...

Ցտեսություն:

Հասմիկ Գուլակյան

Հայագիտության վիճակի երևակումը Ա.Այվազյանի 2003 թ. դեկտեմբերի 9-ի
դոկտորական ատենախոսության պաշտպանության լույսի ներքո

1.

Новое время,
11.12.2003

Беспрецедентный провал беспрецедентной защиты

Арсен Алтунян

Часть выступавших высказывалась в пользу диссертанта, высоко оценивала проведенную автором работу. Академики Манвел Зулалян, Сен Аревшатян, Грачья Симонян, Вардгес Микаэлян, профессора Вальтер Дилоян, Мгер Карапетян, Владимир Казахецян убежденно и страстно подчеркивали важность проведенной автором работы и призывали ученых коллег голосовать за присуждение диссертанту степени доктора исторических наук. Армен Айвазян признавался ими одним из наиболее перспективных молодых историков. “Айвазян — будущее нашей историографии”, — прямо заявляли некоторые из них. Однако подобные заявления не только не находили отклика у другой части ученого совета, но генерировали еще более отрицательное отношение к защищаемой диссертации. Критические замечания высказывались по всем параметрам: не обеспечен необходимый текстовый объем, заголовок не соответствует хронологическим рамкам исследования, структура — параметрам докторской диссертации, “скандално известный” по мхитаристским источникам католикос Казар Джахкеци (1737-1751гг.) представлен одним из идеологов и тайных руководителей армянского освободительного движения и т.д. Армен Айвазян защищался принципиально и жестко. Методично, пункт за пунктом диссертант отстаивал свои позиции, приводил контраргументы и делал это столь безупречно, с такой уверенностью и логическим построением, что вольно или невольно вызывал восхищение. “Учитесь, как надо защищать диссертацию”, — говорили друг другу присутствующие. Тем не менее диссертацию не утвердили. Из восемнадцати членов ученого совета семеро проголосовали “за”, восемь — “против”, три бюллетеня признаны недействительными... Итоги голосования вызвали резкое негодование в зале. Образцовая защита закончилась скандалом, за которым может последовать резкая поляризация мнений и дестабилизация в жившем доселе размеренной жизнью академическом сообществе историков. Но что же реально произошло? Голосовавшие “против” утверждают, что, давая отрицательное заключение, они руководствовались исключительно академическими соображениями. Была озвучена и другая версия. Академики Рачья Симонян, Рафаэль Казарян призывали ученый совет голосовать по совести, а не на основании личных симпатий к диссертанту и “некоего политического заказа”. Всякое упоминание о “заказном” характере отрицательного отношения части ученого совета вызывало у последних крайне нервную реакцию, что и было расценено большинством зала как невольное подтверждение его существования.

Тридцатидевятилетний Армен Айвазян — автор семи монографий, старший научный сотрудник Матенадарана, преподает политологию и военную историю в Ереванском госуниверситете и Американо-армянском университете Армении. Блестящий интеллект, сильный и волевой характер снискали ему уважение одних и зависть других. Яркую известность он приобрел благодаря труду “Освещение истории Армении в американской историографии. Критический обзор, Ереван, 1998г.”. В этой книге,

вышедшей в свет при полном одобрении факультета истории Ереванского госуниверситета, автор подверг резкой, местами уничтожающей критике труды многих западных арменоведов. С присущей ему четкостью и неоспоримой аргументацией он высветил многие фундаментальные несурезицы и вопиющую некомпетентность, в изобилии свойственные американской школе арменоведения. Однако Айвазян пошел дальше и убедительно показал, что заведомо ложные и предвзятые концепции, насаждаемые этой школой, носят заказной характер и являются действенным инструментом, обслуживающим четкие внешнеполитические интересы определенных государств. Суть подобных концепций крайне проста. Армяне являются пришлым этносом на армянском нагорье, армяне никогда не составляли в нем большинства населения, не имели традиций и институтов трехтысячелетней государственности, армянская культура являлась периферийным придатком иранского мира и никогда не отличалась глубиной и самобытностью, средневековые армянские исторические хроники не имеют фактологической ценности, отец армянской истории Мовсес Хоренаци прямым текстом объявлен “наглым лжецом” и фальсификатором... (Изумляет, что тезис о трехтысячелетней традиции армянской государственности вызывает негодование у некоторых членов ученого совета, что и нашло отражение в одном из официальных мнений на диссертацию Айвазяна.) Надо прочесть книгу, чтобы понять всю важность и глубину осуществленной Айвазяном работы, в первую очередь, с точки зрения национальной безопасности нашего государства. Конечно, столь фундаментальная уничтожающая критика в адрес “китов” американского арменоведения вызвала шок в соответствующих кругах. Началось давление на ученые круги Армении с неприкрытым требованием охулить, нейтрализовать Айвазяна, объявленного за бугром “интеллектуальным террористом”. Утвердить докторскую диссертацию Армена Айвазяна – значило не внять тем, от кого в значительной мере зависит распределение грантов, выдача приглашений на научные конференции за рубежом и т.д. Призывы академиков Рачья Симоняна, Рафаэля Казаряна и других – не руководствоваться сиюминутными конъюнктурными соображениями – были адресованы к части заседавших, уже умудрившихся проявить “чудеса” услужливости, не допустив Айвазяна к участию в первом Всемирном конгрессе арменоведов. Убедительная защита Айвазяном тезисов собственной диссертации была столь очевидна, что не оставляла места для отрицательного голосования, однако диссертация так и не была утверждена...

2.

«Նոր կյանք» (Լոս Անջելես),
31 դեկտ. 2003-3 հունվարի, 2004

«Մոլորակ» (Լոս Անջելես),
14-20 հունվարի, 2004

«Արարատ» (Բեյրութ),
23 հունվար 2004

Անբարոյականությունը հայրենական հայագիտության մեջ

«Մի՛ փնտրեք ողջեր մեռելներուն մեջ»
Աստուծո Միածինը

Նկատի ունենալով, աշխարհի տարողությամբ, հայագիտության մեջ պարզված վերջին տարիներու իրողությունները, ամիսներ առաջ, ի շարս այլոց, գրած էինք. «Մենք լուրջ մտավախու-

թյուն ունինք, որ հենած իրենց տեղացի համախոհներուն վրա, ամերիկյան հայագետները պիտի փորձեն «Հայկական դիմադրություն» համակարգի հիմնասյուներեն եղող հայկական ազգային պատմագիտության պարիսպը խորտակել, կամ, առնվազն, մեծ ճեղքեր բանալ անոր մեջ, չարաշահելով հայրենաբնակ հայագետներու մեծագույն մասի կյանքի ողբերգական պայմանները» (տե՛ս մեր «Առճակատումը սկզբունքային-հայեցակարգային է, ոչ թե տեղայնական» հոդվածը, «Արա-րատ», Բեյրութ, 28 մարտ – 4 ապրիլ 2003, էջ 5): Ուրիշ հրապարակման մը մեջ դիտել տված էինք, թե 2003-ի սեպտեմբերի կեսերուն Երեւանի մեջ տեղի ունենալիք Հայագիտական միջազգային առաջին համաժողովի «բուն նպատակը մեկն է՝ հայագիտության ամերիկյան դպրոցի...ՀՀ-ի մեջ ներկայության բացահայտման հռչակումն ու հայագիտության ազգային դպրոցի ջախջախումը իր սեփական օջախին մեջ իսկ» («Մտորումներ հայագիտութեան համաժողովին ընդառաջ», «Զարթոնք», Բեյրութ, 13 մայիս 2003, էջ 2):

Մեր այս կանխատեսումները, ցավոք, իրականացան: Ադոր առաջին մեծ դրսևորումներեն մեկն եղավ 9 դեկտեմբեր 2003-ի հետմիջօրեին Արմեն Այվազյանի դոկտորական ատենախոսության կազմակերպված տապալումը ՀՀ Գիտություններու ազգային ակադեմիայի Պատմության հիմնարկին մեջ, որով հայագիտության ապագային դպրոցի ու վերջինիս անդրծովյան տերերուն կարկառուն դեմքերը կկարծեն, թե գլխատած կըլլան հայագիտության ազգային դպրոցը ի՛ր իսկ բնօրրանին մեջ:

Քանի մը խոսք Արմեն Այվազյանի մասին: 1964-ին ծնած Ա.Այվազյանը 1990-ականներու սկիզբը եղած է ԵԱՀԿ Մինսկի խումբին մոտ ՀՀ-ի պատվիրակության ղեկավար. ներկայիս, ան Մատենադարանի ավագ գիտաշխատող է, Երեւանի պետական համալսարանին մեջ պատմության, իսկ Հայաստանի ամերիկյան համալսարանին մեջ՝ քաղաքագիտության դասախոս, պատմական գիտություններու թեկնածու: Հեղինակն է բազմաթիվ գիտական հոդվածներու եւ ուրժ մենագրություններու, որոնց շարքին՝ 1998-ին Երեւանի մեջ լույս տեսած «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն» գիրքին, ուր ան կմերկացնե ամերիկյան հայագիտության կեղծարարությունները եւ կապացուցե անոնց՝ աշխարհաքաղաքական նպատակներու ծառայեցումը: Բնական է, որ այս գիրքը հառաջ պիտի բերեր հայագիտության ամերիկյան դպրոցի ու անոր դաշնակից աշխարհասփյուռ նպաստընկալներուն կատաղի հակադեցությունը, որը կշարունակվի արդեն հինգ տարի... Ավելորդ չէ այստեղ նշել, որ այս մենագրությունը լույս տեսած է ԵՊՀ-ի Պատմության բաժանմունքի Գիտական խորհուրդին որոշումով, որու այն ատենվան նախագահ Բաբգեն Հարությունյանն այսօր Այվազյանի գաղափարական հակառակորդներու գլխավոր պարագլուխներեն մեկն է... Ահա թե ո՛ր կրնա հասնիլ ոմանց բարոյական անկումը...

Վերադառնանք ատենախոսության հրապարակային պաշտպանության:

ՀՀ ԳԱԱ Պատմության հիմնարկի նիստերու դահլիճը լեփ-լեցուն էր, շատերը նույնիսկ ոտքի կանգնելու տեղ ճարելու դժվարություն ունեին: Ներկաներուն մեջ կային ուսանողներ, դասախոսներ, հասարակական գործիչներ, պետական պաշտոնյաներ, լրագրողներ եւ գիտնականներ, որոնց շարքին՝ ակադեմիկոսներ Ռաֆայել Ղազարյանը (երբեմնի «Ղարաբաղ» կոմիտեի անդամ) եւ Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանը: Հետաքրքրությունը մեծ էր հատկապես այն պատճառով, որ ըստ տարաձայնությանց, նախօրոք որոշված էր տապալել Ա.Այվազյանի ատենախոսության պաշտպանությունը, այդպիսով իբր գորավոր հարված հասցնելով ամերիկյան ճնշումներուն՝ հակադարձել փորձող քանի մը խելագար հայագետներուն: Հստակ էր, որ պատվեր կար դուրսեն՝

մեկուսացնել Այվազյանն ու անոր գաղափարակիցները: Ա՛յդ էր նաեւ Ամերիկայի Հայագետներու ընկերակցության 24 հուլիս 2002-ի հայտարարության բուն էությունը:

Պաշտպանությունը, որը կձայնագրվեր ու կտեսագրվեր, տեւեց ավելի քան 5 ժամ: Մատենադարանը (ուր Այվազյան երկար տարիներու տքնաջան աշխատանքով պատրաստած է իր ատենախոսությունը), առաջատար կազմակերպություն¹ ԵՊՀ-ի Հայոց պատմության ամբիոնը (վարիչի պաշտոնակատար՝ պատմական գիտություններու դոկտոր Բաբգեն Հարությունյան), Պատմության հիմնարկի Միջին դարերու պատմության բաժինը (վարիչ՝ ակադեմիկոս Հրաչ Բարթիկյան) ու երեք պաշտոնական ընդդիմախոսները² հաճախ տրամագծորեն հակառակ գնահատականներ կուտային Արմեն Այվազյանի «Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում» վերնագիրով ատենախոսությանը, զոր 2003-ի գարնանը առանձին գիրքով լույս տեսավ Երեւանի մեջ: Մինչ Մատենադարանը եւ ընդդիմախոսներն ակադեմիկոս Մանվել Զուլալյանը շատ բարձր գնահատեցին ատենախոսությունը, մյուս ընդդիմախոսները՝ պատմական գիտություններու դոկտորներ Վալտեր Դիլոյանն ու Էդիկ Դանիելյանը ավելի զուսպ էին իրենց գնահատականներուն մեջ: Այդուհանդերձ, բոլոր ընդդիմախոսները իրենց կարծիքի ավարտին կմիջնորդէին Մասնագիտական խորհուրդին³ առջեւ՝ Ա.Այվազյանին շնորհելու պատմական գիտություններու դոկտորի գիտական աստիճանը:

Հայրենաբնակ պատմաբաններուն համար գաղտնիք չէ, որ պատմագիտական ուղղություններու հարցերով Ակադեմիային մեջ տերն ու տիրականը Ակադեմիայի փոխնախագահ, հիշյալ Մասնագիտական խորհուրդի նախագահ, գիտական շրջանակներուն մեջ «Ակադեմիայի գորշ կարդինալ» անունով հայտնի, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանն է, իսկ ԵՊՀ-ի Հայոց պատմության ամբիոնին ու պատմության բաժանմունքին մեջ՝ հիշյալ Մասնագիտական խորհուրդի փոխնախագահ Բաբգեն Հարությունյանը: Հիշյալները, չափազանց սերտ կապեր ունենալով արտասահմանի կեղծարար հայագիտական «տիտաններուն» հետ, իհարկե, պիտի հաճոյանային վերջիններու՝ տապալելով Ա.Այվազյանին, իրենց կառքին լծելով իրենցմէ կախյալ (պաշտոնի բերումով եւ/կամ ֆինանսապէս) գիտնականները, հատկապէս՝ հիշյալ Խորհուրդին անդամներն ու մայր համալսարանին դասախոսները: Վերջիններու համար իսկապէս՝ ուր ծանր է. մեկ կողմէն՝ խիղճը, մյուս կողմէն՝ անգործ մնալու ահալոր հեռանկարը: Նմանապէս, շատ ծանր է դեռ վերջերս Պատմության հիմնարկի տնօրէն նշանակված ու դոկտորական ատենախոսություն պաշտպանած, հակումներով դաշնակցական Աշոտ Մելքոնյանի վիճակը. մեկ կողմէ՝ խիղճն ու ինքզինք ազգային հայտարարող կուսակցության նկատմամբ հավատարմությունը, մյուս կողմէ՝ արտասահմանի բարեկամները չվշտացնելու խնդիրը, գումարած՝ նախանձը: Եւ այս բոլոր զգացմունքներն ու աղտոտ հաշիվները ջուրի երես ելան այս պաշտպանության ժամանակ:

Մասնագիտական խորհուրդի նախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանն ու Խորհուրդի քարտուղար, պատմական գիտություններու թեկնածու Կարեն Խաչատրյանը փորձե-

¹ Առաջատար կազմակերպություն կկոչվի գիտական այն մարմինը, ուր կորկվի ատենախոսությունը՝ քննարկվելու եւ գնահատվելու համար:

² Թեկնածուական ատենախոսությանց պաշտոնական ընդդիմախոսները երկու հոգի կըլլան, որոնցմէ գոնէ մեկը պետք է գիտություններու դոկտոր ըլլա: Դոկտորական ատենախոսությանց պարագային՝ պայման է երեք ընդդիմախոսի առկայությունը, ընդ որուն երեքն ալ պետք է գիտություններու դոկտոր ըլլան:

³ Ատենախոսություններու պաշտպանությունները կկայանան հրապարակայնորեն, Մասնագիտական խորհուրդներու առջեւ, որոնց անդամները կնշանակէ ՀՀ-ի Բարձրագույն որակավորման հանձնաժողովը՝ տվյալ գիտական ոլորտի ճանչցված մասնագետներէն, թեւ ԽՕԲ (խնամի-ծանոթ-բարեկամ) եւ այլ գործոններ երբեմն ավելի որոշիչ կըլլան:

ցին ընթացակարգային խախտումներ անցկացնել՝ Այվազյանին ճզմելու համար: Թվարկենք ընթացակարգային հիմնական խախտումները.

1. ՀՀ ԲՈՀ-ի կանոնադրությամբ, բոլոր կարծիքները, գրավոր տեսքով, պետք է ատենախոսին հանձնված ըլլան Խորհուրդի քարտուղարին ձեռքով, պաշտպանութենեն ոչ ուշ, քան տասը օր առաջ: Տվյալ պարագային, Միջին դարերու պատմության բաժինին՝ նոյեմբերի 4-ին պատրաստ կարծիքը Այվազյանին փոխանցված էր մեկ շաբաթ առաջ՝ 2 դեկտեմբերին: Ավելի արտառոց էր ԵՊՀ-ի Հայոց պատմության ամբիոնին վարքը. ամբիոնը բարեհաճե՛ր էր ատենախոսության քննարկումը կատարել 3 դեկտեմբերին ու իր կարծիքը ատենախոսին հանձնել 4 դեկտեմբերին: Այս ուշացումները դիտավորյալ էին, որպեսզի Այվազյանը ժամանակ չունենար գիտական պատշաճ մակարդակով պատասխանելու անոնց մեջ նշված քննադատություններուն:

2. Ռիչըրդ Հովհաննիսյանի երեւանյան երկրպագուներեն պատմական գիտություններու դոկտոր Էմմա Կոստանդյանը, չես գիտեր որո՞ւն հաճոյանալու համար, գրավոր կարծիք գրած էր (վստահաբար՝ խիստ բացասական), որը փորձվեցավ Այվազյանին փոխանցել...պաշտպանության նիստին ժամանակ: Այվազյանի վճռական մերժումին հանդիպելով, նիստին նախագահող Վլ. Բարխուդարյանը դիմեց պաշտպանությանը ներկա եղող, ՀՀ ԲՈՀ-ի փոխնախագահ, բանասիրական գիտություններու դոկտոր Լիլիթ Արզումանյանին, որը բավարարեց Այվազյանի մերժումը:

Բազմաթիվ անտեղի, թույլ հիմնավորված կամ չհիմնավորված քննադատություններ կպառունակեր Պատմության հիմնարկի Միջին դարերու պատմության բաժինին կարծիքը: Այվազյանին նկատմամբ անբարյացակամության դրսեւորում էր այս բաժինին կողմէ Այվազյանին իմաց չտալը բաժինին մեջ քննարկման օրվան մասին, ինչը անգիր կանոն է: Ցավալի է արձանագրել, որ այս բաժինը, ուր կան ակադեմիկոս եւ գիտություններու դոկտորներ ու թեկնածուներ, «ազգայնակաւնություն» եզրի սահմանումը շփոթեր էր «ազգայնամոլության» հետ: Սա «մանրութ» թվացող մանրամասնություն մըն է, բայց շատ բան կբացահայտե, եթե նկատի ունենանք ամերիկյան աշխարհակուլ բռնակալության հիվանդագին մոտեցումը ամեն «ազգայնականի» նկատմամբ... Հիշյալ բաժինը իր կարծիքին մեջ մինչեւ իսկ ժպրհած էր ցեխ նետել Մատենադարանին վրա, «զարմանք» հայտնելով, թե Մատենադարանը ինչպե՞ս թույլ տված է իր ներսը նման անորակ (sic!) աշխատություն պատրաստել... Փաստորեն, բաժինը կասկածի տակ դրած էր Մատենադարանի կարծիքին անաչառությունը: Շատ ավելի դատապարտելի էր առաջատար կազմակերպություն հանդիսացող ԵՊՀ-ի Հայոց պատմության ամբիոնին կարծիքը: Հիշյալ ամբիոնը, իր երբեմնի վարիչ, այս Մասնագիտական խորհուրդի անդամ, ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի առաջարկությամբ, 19 դեկտեմբեր 2001-ին որոշում ընդունած էր՝ ամերիկյան հայագիտության հակահայկական ու հակագիտական նկրտումները դատապարտող, իսկ այժմ, անդրովկիանոսյան հայագիտության «Տրովադայի ձիերեն» Բարգեն Հարությունյանի ճնշման տակ, ամերիկացի «բոսերուն» հաճոյանալու վարքագիծ կտանի՝ ամերիկյան առատության եղջյուրեն որոշակի ակնկալիքներով (ոմանց համար՝ ուսանողներեն գանձվող կաշառքը երեւի բավական չէ՝ «լավ» ապրելու համար): Սույն ամբիոնը դույզն իսկ դրական բան չէր գտած Այվազյանի ատենախոսության մեջ, եւ առանց գիտական որեւէ հիմնավորման ճամարտակություններ եւ դատողություններ ընելով՝ կմիջնորդեր Մասնագիտական խորհուրդին մոտ՝ Այվազյանին դոկտորի աստիճան...ջնորհել: Ավելին, ամբիոնի՝ հայտնապես հապճեպորեն եւ բազմաթիվ սխալներով գրված կարծիքի ավարտին կար անսովոր նորություն մը. կհայտնվեր, որ ամբիոնի այս պաշտոնական կարծիքին կողմ է քվեարկեր ամբիոնի տասը դասախոսներեն իննը, իսկ մեկը՝ ձեռնպահ (մեր ունեցած հավաստի տեղեկություններով՝ վեր-

ջինս Գեղամ Բաղդասյանն է): Այս «նորույթը» մեկ օղակն էր պաշտպանության տապալման նախօրոք գծված սենարիոյին, մանավանդ եթե նկատի ունենանք, որ այս ամբիոնի վարիչի պաշտոնակատար Բարգեն Հարությունյանն ու երկու դասախոսներ Մասնագիտական խորհուրդի անդամ են:

Ի դեպ, մեկ ուրիշ «մանրույթ». Խորհուրդի քարտուղար Կարեն Խաչատրյանն ու նախագահ Վլ.Բարխուդարյանը փորձեցին խախտել Ա.Այվազյանի հետ պայմանավորվածությունը՝ Միջին դարերու պատմության բաժնի կարծիքին փոխարեն անկե առաջ ընթերցելով ամբիոնին կարծիքը՝ Այվազյանին հոգեպես ճգմելու համար: Վերջինս ձախողության մատնեց անոնց այս նկրտումը եւս: Ան իր պաշտպանությունը գերազանց էր պատրաստած՝ հակառակ իրեն «շնորհված» 4-5 օրերուն՝ կարգով նախատեսված առնվազն 10 օրվան փոխարեն: Ան մեծ մասամբ չընդունեց ատենախոսությանն ուղղված քննադատությունները բոլոր վերոհիշյալ կարծիքներուն մեջ, անոնց պատասխանեց մեկ առ մեկ՝ իր պատասխանները հիմնավորելով համապատասխան աղբյուրներե մեջբերումներով, գիտական լուրջ եւ տրամաբանական կոտ փաստարկներով: Ան հիմնահատակ ջախջախեց ԵՊՀ-ի Հայոց պատմության ամբիոնին կարծիքը՝ ապացուցելով անոր անհիմնությունն ու կանխամտածվածությունը՝ շատ նեղ դրության մատնելով իր սկզբունքային-հայեցակարգային հակառակորդները: Պաշտպանության ընթացքին զուգահեռ, Մասնագիտական խորհուրդի անդամներեն ոմանց վիճակը հետզհետե կծանրանար, քանի որ Այվազյանը հստակորեն կապացուցեր իր նկատմամբ անբարոյական մոտեցման առկայությունը: Կ. Խաչատրյանը փորձեց իր կատաղությունը թափել ներկա խոսներամ բազմության վրա, վերջինիս այվազյանամետ անթաքույց համակրանքը «քաղաքական շոտ» հայտարարելով, թեեւ ի՛նք էր, որ իր խորհրդակիցներեն ոմանց նման, քաղաքական պատվեր կկատարեր: Իսկ լիովին անձրկած Աշոտ Մելքոնյանը արտառոց, մինչ այդ չլսված բան (իր իսկ խոսքով՝ «կոմպրոմիս», այսինքն՝ փոխզիջում) առաջարկեց՝ Այվազյանի ատենախոսության համար Մասնագիտական խորհուրդի անդամներուն քվեարկությունը ուրիշ օրվա հետաձգել (կարծե՛ք ներկաները արեւելյան բազար եկած ըլլային, ուր կարելի է ամեն ինչ սակարկել): Այվազյանը կտրականապես մերժեց այս առաջարկը, նախընտրելով ջուրի երես հանել ամբողջ խայտառակությունը, քան ստոր գործարք կնքել գիտական աստիճաններ ունեցող խումբ մը անբարոյականներու հետ: Վերջիններս, հայտնապես կատղած Այվազյանի հաստատակամութենեն, շարունակեցին մինչեւ վերջ հասցնել իրենց սկսած աղտոտ խաղը: Պահեր եղան, երբ մթնոլորտը այնքան շիկացավ, որ տիկ. Արզումանյանը ստիպված էր միջամտել նիստի ընթացքին, բոլորը կարգի հրավիրել եւ, ի հեճուկս նիստին նախագահող Վլ.Բարխուդարյանի, ընթացակարգային որոշ հարցեր տեղվույն վրա լուծել: Տիկ Արզումանյանն ինչ իմանար, թե «Գորշ կարդինալը» ընթացակարգային մեկ այլ խախտում եւս կատարած էր՝ չհրապարակելով Մայր աթոռ Ս.Էջմիածինեն ստացված կարծիքը ատենախոսության վերաբերյալ: Արդարեւ, հիշյալ պարոնը, որը նաեւ Մայր աթոռի Գերագույն հոգեւոր խորհուրդի անդամ է (այսքան հզոր լծակ-պաշտոններ շատ չե՞ն մեկ հոգիի, այն ալ՝ հիշյալ պարոնին նման մեկու մը համար, որը միշտ պաշտոնի վրա է բոլոր վարչակարգերու եւ բոլոր նախագահներու ժամանակ), շաբաթներ առաջ ատենախոսությունը դրկած էր Ս.Էջմիածին, անոր կցելով նամակ մը, ուր ան Մայր աթոռին կիռուշեր բացասական կարծիք հայտնել: Մայր աթոռը, բարեբախտաբար, չինկավ այս թակարդը: Իր պատասխանին մեջ, Մայր աթոռը կհայտնեք, որ դավանաբանական առումով, ատենախոսությունը որեւէ հակասություն չունի Հայ եկեղեցվո պաշտոնական դավանաբանության հետ, իսկ պատմական առումով՝ ինքը իրավասու չէ կարծիք հայտնել: Ահա այս պատասխանն էր, որ Բարխուդարյան չհրապարակեց, քանի որ, այլապես, ավելի՛ պիտի պարզվեր, թե ո՛ր է թաղված շան գլուխը...

Կարծիքներու ընթերցումեն ու անոնց հետեւած ատենախոսի պատասխաններեն ետք, ելույթ ունեցան Մասնագիտական խորհուրդի շուրջ 10 անդամներ, նաեւ՝ ակադեմիկոսներ Ռ.Ղազարյանն ու Ս.Արեւշատյանը: Ակադեմիկոսներ Մանվել Զուլպյանն ու Հրաչիկ Միմոնյանը կոչ ըրին Խոր-

հուրդի անդամներուն՝ քվեարկելու «խղճով», Այվազյանի նմաններուն մեջ տեսնելով «մեր պատմագիտության հուսալի ապագան»: Հր.Միմոնյանը անբարոյական որակեց 1999-2003-ի կեսեր ժամանակահատվածին իր վարած ամբիոնին կարծիքը: Ան ուղղակիորեն հայտարարեց, թե Այվազյանի նկատմամբ բացասական վերաբերմունքն անմիջական հետեւանքն է ամերիկյան հայագիտության կեղծարարությունները մերկացնող ու խարազանող անոր գիրքին: Այվազյանի հակառակորդները, մասնավորաբար Բաբգեն Հարությունյանը, չընդունեցին այս տեսակետը, թեեւ բոլորին ալ ակնհայտ է այս ճշմարտությունը: Իրենց ելույթներուն մեջ, թե՛ ատենախոսությունը եւ թե՛ ատենախոսին մինչ այսօր գիտական գործունեությունը Բաբձր գնահատեցին Խորհուրդի անդամներէն՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտություններու դոկտոր Միհր Կարապետյանը, պատմական գիտություններու դոկտոր Վլադիմիր Ղազախեցյանը եւ «Պատմաբանասիրական հանդես» եռամսյա պարբերականի գլխավոր խմբագիր, ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը: Ցավոք սրտի, Խորհուրդին մյուս անդամները չանսացին «խղճով, գիտական ազնվությամբ եւ ոչ վրեժխնդրությամբ» քվեարկելու հորդորներուն: Մասնագիտական խորհուրդը իր կազմէն ընտրեց քվեարկության Հաշվեքննիչ հանձնաժողով, եւ բոլորը, բացի Խորհուրդին անդամներէն, դուրս եկան սրահէն: Փակ, գաղտնի քվեարկությունը պարզեց հետեւյալ արդյունքը՝ 7 թեր, 8 դեմ եւ 3 անվավեր քվե: Երբ այս արդյունքը հայտարարվեցավ վերստին սրահ մտած ներկաներուն, ամեն կողմէ լսվեցան վարկաբեկիչ արտահայտություններ՝ «Թուրքէ՛ր», «Ամո՛թ ձեզ», «ստորնէ՛ր, սրիկանէ՛ր»... Ակադեմիկոս Վ.Միքայելյանն ալ չկրցավ կիրքը զսպել ու նետեց Խորհուրդի՝ Այվազյանին հակառակորդ անդամներուն երեսին. «Թքէ՛լ եմ ձեր վրա»...

Հաղթեցին անբարոյականությունն ու անսկզբունքայնությունը, նաեւ՝ ամերիկյան հակահայկական հայագիտությունը:

Ինչպէս կսպասվեր, հակազդեցությունը այս բացահայտ անարդարության՝ չուշացավ: Հաջորդ օրը, ակադեմիկոսներ Վ.Միքայելյանն ու Հր.Միմոնյանը հանդես եկան ՀՀ ԲՈՀ-ի նախագահ Ա.Թոչոյանին ուղղված «Հայտարարությունով», ուր կըսվի, որ նախորդ օրը կայացած նիստը իրենց «մի անգամ եւս» այն համոզման է բերած, «որ այդ Խորհրդում ստեղծված մթնոլորտը թույլ չի տալիս կատարել գիտական հարցերի անկողմնակալ քննարկում եւ լուծում», որու արդյունքով, անարժաններու գիտական աստիճաններ կշնորհվին, մինչդեռ «փակվում է ճանապարհը շնորհալի երիտասարդ կադրերի առջեւ»: Ստորագրողները նիստի ղեկավարը, այսինքն՝ Վ.Բարխուդարյանը կմեղադրեն կամայականության մեջ: Իրենց հայտարարության ավարտին, երկու ակադեմիկոսները «անիմաստ» կգտնեն իրենց «հետագա մասնակցությունը Խորհրդի աշխատանքներին»:

Հինգշաբթի, 11 դեկտեմբերին, երեւանյան չորս պարբերականներ գրեցին այս աղաղակող անարդարության մասին. Ա.Հ.[Արմեն Հակոբյան], «Վրեժխնդրությո՞ւն էր» («Հայոց աշխարհ»), Գեւորգ Յազըճյան, ««Իսկական պաշտպանություն» Պատմության ինստիտուտում» («Ազգ»), Արսեն Ալթունյան, «Աննախընթաց ատենախոսության աննախընթաց տապալումը» («Նովոյե վրեմիա»), անստորագիր, «Ո՞վ է պատվիրած Արմեն Այվազյանին» («Գոլոս Արմենիի»): Վերջինս, հակիրճ տեղեկատվության ավարտին, կխոստանար իր մոտակա թիվերուն մեջ անդրադառնալ «այս ամոթալի պատմության»: «Հայոց աշխարհը» իր 12 դեկտեմբերի թիվին մեջ հրապարակեց նույն Արմեն Հակոբյանի հարցազրույցը Հր.Միմոնյանի հետ՝ «Դա վրեժխնդրություն է եւ խայտառակություն միաժամանակ»՝ մեկնաբանության չկարոտող վերնագիրին տակ:

Մեր ունեցած տեղեկություններով, իսկապէ՛ս խայտառակ այս նիստին ներկա, ՀՀ նախագահին կից Մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ, իրավաբան Հովհաննէս Ասրյանն ու երկու անդամները զեկուցագիր մը պատրաստած են այս մասին, իսկ Մատենադարանն ալ կպատրաստվի պաշտոնական բողոք ներկայացնել ՀՀ ԲՈՀ-ին: Կսպասվի, որ «Գոլոս Արմենիի»-ն իր 16 դեկտեմբերի թիվին մեջ երկարորեն անդրադառնա այս «ամոթալի պատմության»:

Այս զարգացումները տակնուվրա ըրած են ՀՀ-ի պատմագիտական շրջանակները, մասնավորաբար՝ 9 դեկտեմբերի ներկայացման գլխավոր դերակատարները, որոնց համազգային խայտառակություն կսպասե (ինչին հաճությամբ պիտի մասնակցինք)։ Վիճակը ա՛լ ավելի կբարդանա այն փաստով, որ 19 դեկտեմբերին կսպասվի այսօրվան դրությամբ ԵՊՀ-ի Պատմության բաժանմունքի տնօրենի (դեկան) պաշտոնակատար, ոչինչով աչքի ինկող Էդիկ Մինասյանի դոկտորական ատենախոսության «պաշտպանությունը»։ Վերջինիս հաջող ավարտը ա՛լ ավելի երեսան պիտի հանե հայրենական պատմագիտության մեջ տիրող անբարոյականությունը, թեև բացառված չէ, որ այս միջոցառումը հետաձգվի կամ չկայանա։

Ա.Այվազյանի գիրքին դեմ «Հայկազեան հայագիտական հանդեսին» մեջ զագրախոսական «գրախոսությամբ» հանդես եկած ամերիկահայ կեղծարար ու ապագային հայագետ Լեւոն Ավդոյանը ՀՀ-ի Ակադեմիան «մեռելածին կառույց» կհայտարարեր¹։ 9 դեկտեմբերի այս խայտառակությունը ապացուցեց Ավդոյանի...ճշմարտացիությունը։

Աստուծո Միածինը ըսած էր նաև. «Ձգե՛, որ մեռելնե՛րը թաղեն մեռելները»։

Երևան, 14 դեկտեմբեր 2003

Գեորգ Յազրճյան

պատմական գիտություններու թեկնածու

Հ. Գ. «Գոյոս Արմենիի» թերթի 16 դեկտեմբերի համարին մեջ լույս տեսավ թերթի գլխավոր խմբագիրի տեղակալ Լեւոն Միքայելյանի «Հատուկ պատվեր Մասնագիտական խորհուրդին» վերնագիրով հրապարակումը։ Անկե կիմանանք, որ Մատենադարանն արդեն իր բողոքագիրը ՀՀ ԲՈՀ-ին դրկած է։

3.

Հայոց աշխարհ, 12 դեկտեմբերի 2003

Պատմագիտության չինովնիկները

«Ինձ չափազանց մտահոգում է մեր պատմագիտության մեջ ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը, որի շարժիչ ուժը դարձել են անձնական մոտեցումները, անհատական համակրանք-հակակրանքը։ Մեզանում ձեռավորվել է պատմագիտության չինովնիկություն, կարելի է ասել անգամ՝ բյուրոկրատիա։ Խոսքս, նախ եւ առաջ, վերաբերում է հայ ժողովրդի պատմության մասնագետների շրջանակներին», - ասի Լեւոն Ավդոյանը ՀՀ ԲՈՀ-ի ՍԻՄՈՆՅԱՆԻՆ։

Դա վրեժխնդրություն է և խայտառակություն միաժամանակ

«Հայոց Աշխարհ»-ն արդեն անդրադարձել է պատմաբան, քաղաքագետ Արմեն Այվազյանի «Հայոց եկեղեցին 18-րդ դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում» դոկտորական թեզի պաշտպանության ժամանակ ԳԱԱ պատմության ինստիտուտում օրերս տեղի ունեցած սկանդալային ընթացքին։ Այդ իրադարձությանը վերաբերող եւ մի շարք այլ հարցերով «Հայոց Աշխարհ»-ի թղթակիցը երեկ դիմեց ակադեմիկոս ՀՀԱԶԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ։

-Չնայած երեք ընդդիմախոսներն էլ դրական գնահատական էին տվել Ա.Այվազյանի դոկտորական դիսերտացիային, սակայն մասնագիտական հանձնաժողովի քվեարկությամբ այն չհաստատվեց։ Որպես դիսերտացիայի քննարկմանը ներկա գտնված գիտնական, ինչպե՞ս եք գնահատում տեղի ունեցածը։

-Եթե մեկ բառով պատասխանելու լինեմ՝ դա խայտառակություն է։ Այդպես եմ ասում, որովհետեւ նույն այդ գիտությունը վերջին տարիներին պաշտպանվել են դոկտորական այնպիսի

¹ Ի դեպ, Ակադեմիան եւ անոր հիմնարկները մինչեւ օրս չեն պատասխանած իրենց հասցեին տարիներ առաջ հնչած այս «հաճոյախոսության», ինչը եւս մեկ վկայություն է այս գիտական կառույցի ղեկավարությանը մեջ տիրող ապառոջ բարքերուն մասին։

դիսերտացիաներ, որոնք նույնիսկ թեկնածուական աստիճանի հայցելու արժանի չեն եղել: Մեկը չէ, երկուսը չէ: Ըստ էության, ձեւավորվել է այնպիսի մթնոլորտ, երբ մասնագիտական խորհրդի քվեարկությունները գերազանցապես կամայական բնույթ են կրում: Այսինքն՝ գնահատականը շատ հաճախ տրվում է, ելնելով ոչ թե ներկայացված գործի արժեքից, այլ նրանից, թե քվեարկողները համակրո՞ւմ կամ հակակրո՞ւմ են դիսերտացիա պաշտպանողին: Սա է ողջ ցավը, որ արմատացած է պատմության ինստիտուտում եւ մասնագիտական խորհրդում: Ի դեպ, մասնագիտական խորհրդի մասին: Կրկնակի ցավալի է, որ այդ բոլոր գործընթացները ղեկավարում է մասնագիտական խորհրդի նախագահ, ԳԱԱ վիցե-պրեզիդենտ Վլադիմիր Բարխուդարյանը, որը կարծես ձգտում է ներկա լինել ամենուր: Ընդգծում եմ, որ Ա.Այվազյանի դիսերտացիայի հետ կապված այս խայտառակությունը նա էր կազմակերպել: Ինչ վերաբերում է կոնկրետ դիսերտացիային, ապա ներկայացված էր 4 հիմնավորված կարծիք: Մեկը Մատենադարանի դրական կարծիքն էր: Նշեմ, որ այդ տաղանդավոր տղան տասը տարուց ավելի ներկայացված թեմայի վրա աշխատել է Մատենադարանում եւ, չեմ վախենա այդ բառն ասելուց, գրել է մի փայլուն դիսերտացիա, որով ոչ թե շատերի նման վերաշարադրել է մինչ այժմ լույս տեսած աշխատությունները, այլ ներկայացրել է միանգամայն նոր աշխատանք՝ տասնյակ ճշտումներով, կատարել է գիտական խոր ընդհանրացումներ: Մի խոսքով, իմ գնահատականն այն է, որ աշխատությունը եզակի է եւ իր բովանդակությամբ, եւ կառուցվածքով:

-Եթե ներկայացված աշխատությունն այդքան լավն էր, ապա ինչո՞ւ տապալվեց:

-Հարցին պատասխանելու համար պետք է փոքր-ինչ հետ գնալ: Բանն այն է, որ Արմեն Այվազյանը ժամանակին գրեց եւ հրատարակեց «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ» հայտնի գիրքը, որտեղ բացահայտված եւ քննադատված են ամերիկյան հայ եւ ոչ հայ այն պատմաբանները, որոնք իրենց արհեստն են դարձրել հայ ժողովրդի պատմության կարեւոր դրվագների ու խնդիրների կեղծարարությունը: Այլ կերպ ասած՝ Ա.Այվազյանը բացահայտել է մեր պատմության նորօրյա խեղաթյուրումներն ու դրանց հեղինակներին: Այդ աշխատությունը մեծ աղմուկ հանեց եւ Հայաստանի, եւ արտերկրի, հատկապես ԱՄՆ-ի պատմագիտական շրջանակներում: Բայց ողջ հարցն այն է, որ մեր պատմության նույն այդ կեղծարարները այստեղ՝ Հայաստանում, ունեն իրենց ընկերներն ու «եղբայրները»: Իսկ սրանք արդեն կրծքով պաշտպանում են նրանց: Ինչո՞ւ են պաշտպանում: Որքան էլ տխուր է դա նկատել, բայց պաշտպանում են, որովհետեւ տարեկան մի քանի անգամ այդ կեղծարարների հրավերով մեկնում են ճանապարհորդությունների եւ այնտեղ էլ չգիտես ինչով են զբաղված: Համենայն դեպս, փաստն այն է, որ չափազանց կուռ դաշինք է ձեւավորվել հայոց պատմության կեղծարարների եւ նրանց այստեղի կողմնակիցների միջեւ: Եւ ինչ էլ ասեն, պնդում եմ, որ հենց սա էր Ա.Այվազյանի դիսերտացիան տապալելու հիմնական պատճառը:

-Այսինքն՝ համամի՞տ եք այն տեսակետին, որ տեղի ունեցածը վրեժխնդրություն էր:

-Այո, չնայած այստեղ ոմանք կաշվից դուրս էին գալիս, փորձելով համոզել, որ այդպես չէ: Բայց ուրիշ բան չկա: Իմ խորին համոզմամբ, տապալելու հիմնական պատճառը վրեժխնդրությունն էր: Թեպետ ոչ միայն դա: Այստեղ երկու խնդիր կա. մեկը՝ հայ ժողովրդի պատմության կեղծարարներին պաշտպանելը, մյուսն էլ՝ հայի նախանձը:

-Լավ, մի՞թե տարօրինակ չէ, որ Հայաստանում, այն էլ հայ ժողովրդի պատմության մասնագետների մեջ կան մարդիկ, որոնք պաշտպանում են մե՛ր պատմության կեղծարարներին:

-Իհարկե՝ տարօրինակ է: Ավելին՝ դա նշանակում է, որ այդ պաշտպաններն էլ կանգնած են կեղծարարների կողքին: Ստացվում է, որ նրանց համար հայ ժողովրդի պատմության խեղաթյուրումը ամենեւին կարեւոր չէ: Ստացվում է, որ՝ հերն էլ անիծած, կկեղծեն, չեն կեղծի, մեզ եկվոր կհամարեն, թե՞ Խորենացուն՝ «ոչ ստույգ աղբյուր»: Ստացվում է, որ ոմանց համար շատ ավելի օգտապաշտական գործոններ կան:

-Դուք այդ երեւոյթների մեջ ի՞նչ վտանգներ եք տեսնում:

-Վտանգներից առաջինն այն է, որ փակում են տաղանդավոր երիտասարդների ճանապարհը: Մինչդեռ արդեն սերնդափոխություն պետք է լինի: Մեր գնալու ժամանակն է արդեն: Ուստի հիմա ինձ ամենից առավել անհանգստացնում է մեզ փոխարինողների խնդիրը: Իսկ փոխարինելու պետք է զան ինտելեկտուալ անհրաժեշտ մակարդակ ունեցող մարդիկ, այլ ոչ թե միջակություններ: Եւ իմ մտահոգության առիթն այն է, որ եթե այսպես են վերաբերվում այդ երիտասարդին, ապա ինչպե՞ս են վարվում մյուսների հետ: Գանք կեղծարարների վտանգին: Ակադեմիայում ընդհանուր ժողովի ժամանակ ունեցած ելույթում առիթ ունեցել եմ ասելու, որ մեր պատմության կեղծարարները ծառայության են լծված արտերկրների համապատասխան օրգաններին: Համենայն դեպս, այդ են ցույց տալիս փաստերի համադրումը, ընթացքը, նրանց արտահայտած մտքերն ու առաջադրած կոնցեպցիաները: Փաստորեն դրսում Վահագն Տատրյանից բացի, մեկը չկա, որ հակադարձի թուրքական քարոզչական «պատմագրությանը», նրանց դեմ մի բան գրի: Գլուխը քարը, չեն գրում, թող չգրեն: Սակայն իբր դա քիչ է, ելնում, ասում են, թե հայերը եկվոր են: Սանկտ Պետերբուրգից մեկը վեր է կենում հայտարարում, թե Ղարաբաղը հայ եւ ադրբեջանական ժողովուրդների մշակութային օրրանն է: Միացյալ Նահանգներում Սյունին կասկածի տակ է դնում հայ պատմիչների հայտնած տեղեկություններն ու տվյալները: Եւ այսպես շարունակ: Իսկ այդ ամենի վրա հիմնվելով, թուրքերը զարգացնում են հակահայկական տեսություններ: Այսինքն՝ սրանք քարոզում են այն, ինչ-որ թուրքերն են ասում: Ու այս պայմաններում արտասահմանի այդ ապիկարները ջուր են լցնում թուրքերի ու ադրբեջանցիների ջրաղացին: Սա է ամենից ահավոր վտանգը: Եւ եթե այստեղ ոմանք դեռ նման նկրտումներ չեն դրսևորում, պատճառը թերեւս այն է, որ վախենում են ոչ միայն պատմաբաններից հակահարված ստանալուց:

Արմեն Հակոբյան

4.



16.12.2003

Спецзаказ для спецсовета

Левон Микаелян

Надеемся, Армен Айвазян поймет нас, если, разделяя общее возмущение ходом и итогами защиты его докторской диссертации, мы тем не менее признаемся, что, с другой стороны, даже рады происшедшему. Рады потому, что организованно проваленная защита взорвала ту лицемерную и по сути губительную для дальнейшего развития нашей исторической науки атмосферу внешнего благополучия и согласия, которую, в частности, тщетно пытались продемонстрировать миру во время прошедшего в сентябре текущего года Первого всеармянского конгресса арменоведов его организаторы.

Связь между происходившим на том конгрессе и на заседании специализированного совета 9 декабря очевидна. Несомненно, что силы, не допустившие Армена Айвазяна к участию в конгрессе, окрыленные "успехом", решили еще раз "наказать" его за непослушание. Причем наказать болезненно и даже жестоко, дабы и другим было неповадно.

Уже сейчас можно с уверенностью утверждать, что инициаторы этой антинаучной и антинациональной террористической акции ошиблись в своих расчетах. Ибо не поняли главного: *происхо-*

дившее во время конгресса, в частности, откровенная дискриминация Армена Айвазяна, не удостоилось тогда адекватной реакции только потому, что все искренне заинтересованные в дальнейшей судьбе арменоведения посчитали, что первое общенациональное мероприятие подобного масштаба, носившее не столько научный, сколько знаковый характер, не должно быть омрачено разногласиями и взаимными упреками. Чтобы тех, кто, мягко говоря, критически относился к "хитроумно" разработанному сценарию конгресса, невозможно было обвинить в том, что они "помешали осуществить задуманное" и т. д. Вероятно, это джентльменское, продиктованное исключительно национальными интересами поведение "оппозиции" кое-кто посчитал за проявление слабости или соглашательской беспринципности и самонадеянно решил развить "успех". Принципиальная ошибка. Ибо присуждение А.Айвазяну ученой степени доктора наук, которое было бы воспринято как вполне естественное и даже заурядное событие, не могло пойти ни в какое сравнение с тем общественным резонансом, который вызвал и еще вызовет организованный провал защиты.

Ясно, что этот резонанс вызван не только проявленной по отношению к А.Айвазяну несправедливостью, но и осознанием глубинной сути происшедшего, озабоченностью растущим влиянием на нашу научную среду чуждых научным и национальным интересам внешних сил, в данном случае мстящих Армену Айвазяну за те скандальные разоблачения, которые содержала его книга "Освещение истории Армении в американской историографии. Критический очерк" (1998г.). Книга, которая вздым развела миф о якобы высочайшем научном уровне и исключительной национальной ценности трудов ряда "авторитетных" арменоведов США как армянского, так и неармянского происхождения.

Защита 9 декабря, однако, подтвердила давно известное: главная беда, как всегда, не в тех или иных внешних силах, а в наших доморощенных исполнителях их заказов. Гранты, приглашения, продолжительные командировки, издание книг и т. п. - слишком действенные соблазны для нашей бедствующей ученой братии, и, к сожалению, не все способны устоять и сохранить принципиальность в этой ситуации.

Углубление этой опасной тенденции также показал провал специализированным советом диссертации А.Айвазяна. Но этот же провал помог нам лучше понять сложившуюся на сегодняшний день диспозицию противоборствующих в арменоведении сил и узнать их представителей *поименно*. Хотя и, если говорить только об участниках заседания специализированного совета, было бы просто оскорбительным для армянской науки сомневаться в принципиальной позиции выступивших в защиту А.Айвазяна академиков Грачика Симоняна, Вардгеса Микаеляна, Манвела Зулаляна, Сена Аревшатяна и Рафаэла Казаряна, докторов наук Владимира Казахецяна и Мгера Карапетяна.

Зато в изумление несведущего человека мог привести *отзыв кафедры армянской истории ЕГУ, 9 из 10 членов которой рекомендовали спецсовету НЕ присуждать А.Айвазяну ученой степени доктора исторических наук*. В изумление, естественно, может привести не столько сам отрицательный отзыв, по отзывам специалистов, блестяще опровергнутый в ходе защиты диссертантом, но прежде всего та метаморфоза, которая произошла в течение нескольких месяцев с кафедрой, пользовавшейся безусловным уважением во времена заведования ею академиками Л.Хуршудяном и Гр.Симоняном, всего два года назад вслед за А.Айвазяном выступившей с резкой критикой американского арменоведения, а сегодня так неосмотрительно играющей своей репутацией после прихода нового руководителя - доктора исторических наук Бабкена Арутюняна. Это как раз и есть та самая опасная тенденция, о нарастании которой возвестила защита 9 декабря. Кафедра истории армянского народа ЕГУ, как и Институт истории НАН РА, неизменно являлись надежной цитаделью армянской исторической науки и было бы просто преступным допустить их превращение в послушные инструменты в руках отдельных лиц или сил. Это, конечно, в первую очередь дело самих ученых, однако опыт, к

сожалению, подсказывает, что национальная наука - слишком важное дело, чтобы полностью и бесконтрольно передоверять ее ученым...

Специализированный совет при Институте истории не признал А.Айвазяна достойным ученой степени доктора исторических наук. Что ж, как говорится, тем хуже для самого совета, из состава которого в знак протеста уже вышли два его авторитетнейших члена - академики Грачик Симонян и Вардгес Микаелян.

А за Армена Айвазяна беспокоиться нечего - доктором наук он станет и, мы уверены, очень скоро. (Насколько нам известно, дирекция Матенадарана уже отправила в ВАК РА протест по поводу нарушений, допущенных в ходе защиты.) Мы уверены также и в том, что он еще создаст немало ценных научных трудов и его, вопреки недругам, ждет блестящее будущее. *Наше беспокойство иное: оно - об армянской науке, о развитии и процветании глубоко научного и патриотического арменоведения - ведь о наших противниках и фальсификаторах армянской истории есть кому позаботиться.*

5.

Ազգ. 23.12.2003

Ի պաշտպանություն ճշմարիտ գիտության

Պատմաբան Արմեն Այվազյանի դոկտորական ատենախոսության պաշտպանության տապալումը վրդովեցրել է մեր գիտական մտավորական շրջանակներին: Եվ արդարորեն: Շարունակվում են բողոքի հրապարակային ելույթները, որոնցից երկուսին տեղ ենք տալիս ստորև: Ավելացնենք, որ, ըստ ոչ պաշտոնական տեղեկությունների, ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կազմից դուրս են եկել հայտնի պատմաբաններ Հրաչիկ Սիմոնյանը եւ Վարդգես Միքայելյանը, որպես բողոքի արտահայտություն:

ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահ պրն Ա.Թոչոնյանին

Սույնով Ձեզ տեղեկացնում ենք, որ ս.թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող խորհրդի նիստում տեղի ունեցավ Մատենադարանի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Արմեն Մարտինի Այվազյանի՝ դոկտորական ատենախոսության պաշտպանության կանխորոշված եւ կազմակերպված տապալումը:

«Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում» թեմայով գրված դոկտորական ատենախոսությունը հաստատված է Մաշտոցի անվան Մատենադարանում: Այն գրված է աղբյուրների մանրակրկիտ քննության հիման վրա: Նոր մոտեցում է ցուցաբերված հայոց եկեղեցու՝ հայ ազատագրական շարժումների գաղափարախոսական ու կազմակերպչական խնդիրներին մասնակցություն բերելու վերաբերյալ:

Ելնելով ուսումնասիրվող նյութի բարդությունից, հեղինակը դիմել է խնդիրների համալիր քննությանը, ճշտելով բազմաթիվ մինչ այժմ մութ մնացած պատմական իրողություններ: XVII և XVIII դարերում տեղի ունեցած մի շարք կարեւոր իրադարձությունների վերլուծությունը զանազան թելերով շաղկապվում է աշխատության հիմնական առանցքում՝ XVII դարի առաջին քառասնամյակում ու հատկապես 1720 և 1730-ական թթ. հայոց եկեղեցու՝ ազատագրական շարժումների հետ փոխառնչություններում եւ փոխազդեցություններում:

Աշխատությունն ունի յուրօրինակ ու շահեկան շարադրանք եւ ոճ, որով պատմական բարդ նյութի ընթերցումն ու ընկալումը դառնում են դյուրամատչելի:

Ա.Այվազյանի աշխատությունն անցել է փորձաքննության բոլոր փուլերով, այն գրված է գիտական բարձր մակարդակով եւ Մաշտոցի անվ. Մատենադարանի գիտխորհրդի համոզմամբ համապատասխանում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու պահանջներին: Մաշտոցի անվան Մատենադարանում վստահ են Ա.Այվազյանի կատարած աշխատանքի բարձր արժեք ունենալու մասին:

Սակայն ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող՝ ԲՈՀնի 004 մասնագիտական խորհրդի նիստում տեղի ունեցավ այն, ինչն արդեն հայտնի էր գրեթե բոլորին եւ սպասվում էր:

5 ժամից ավելի տեւած օրինակելի եւ փայլուն պաշտպանությունից հետո՝ 7 կողմ, 8 դեմ եւ 3 (!) անվավեր քվեներով Ա.Այվազյանի ատենախոսությունը տապալվեց:

Ակնհայտ էր պաշտպանության բուն ընթացքը վարողների բացահայտ եւ անթաքույց անբարյացակամությունն ատենախոսի նկատմամբ:

ա) մասնագիտացված խորհրդի նախագահ ակադ. Վ. Բարխուդարյանը պարբերաբար անտեղի դիտողություններով փորձում էր շփոթեցնել ատենախոսին:

բ) Վ.Բարխուդարյանը ձայնի իրավունք այդպես էլ չտվեց մասնագիտացված խորհրդի անդամ, Մատենադարանի գիտական խորհրդի նախագահ, փոխտնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Վարդան Գրիգորյանին, որը XVIII դարի ճանաչված մասնագետներից է:

գ) Մասնագիտական խորհրդի գիտքարտուղարի պատասխանատու պաշտոնին անհարիր՝ ագրեսիվ վարքագիծ դրսևորեց Կարեն Խաչատրյանը: Ի դեպ, նրա ընդգրկումը հաշվիչ հանձնաժողովի կազմի մեջ կասկածներ է հարուցում նաեւ քվեարկությունից հետո հրապարակված արդյունքների, մասնավորապես 3 անվավեր քվեների աննախադեպ փաստի վերաբերյալ:

դ) Ա.Այվազյանի պաշտպանական ելույթները սկզբունքային էին եւ հանգամանալից. պատահական չէ, որ նրա բերած փաստերին եւ փաստարկներին որեւէ հակադարձություն չեղավ:

Բնականաբար, հարց է առաջանում, թե ի՞նչն էր պատճառը Ա.Այվազյանի ատենախոսության նկատմամբ այսօրինակ արտառոց վերաբերմունքի: Բանն այն է, որ 1998 թ. Ա.Այվազյանը հրապարակեց «Հայաստանի պատմության լուսաբանումն ամերիկյան պատմագրության մեջ: Քննական տեսություն» աշխատությունը, որի մեջ արդարացիորեն քննադատության էր ենթարկել մի շարք ամերիկյան հայագետների, որոնք ձգտելով հաճոյանալ թուրքական պատմագրությանը, հետեւողականորեն աղավաղում եւ ֆալսիֆիկացիայի են ենթարկում հայոց պատմության բազմաթիվ հիմնախնդիրներ: Փաստորեն, Ա.Այվազյանից վրեժ է լուծվում նրա հայրենասիրական, սկզբունքային դիրքավորման համար:

Մաշտոցի անվան Մատենադարանի գիտխորհուրդը խորապես վրդովված է Ա.Այվազյանի գիտական բարձր արժանիքներով աչքի ընկնող դոկտորական ատենախոսության տապալման փաստով:

Ըստ այդմ՝ խնդրում ենք Ձեզ չեղյալ հայտարարել պատմության ինստիտուտում գործող մասնագիտացված խորհրդի ս.թ. դեկտեմբերի 9-ի նիստը, վերանայել նրա որոշումը, ինչպես նաեւ կազմակերպել Ա.Այվազյանի ատենախոսության պաշտպանությունն այլ ձեւով:

Հարգանքներով

Տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ Սեն Ս. Արևշատյան
Մատենադարանի գիտական խորհրդի նախագահ Վարդան Ռ. Գրիգորյան

Օրերս հայաստանյան լրատվամիջոցներում տեղ գտած հրապարակումներից տեղեկացանք, որ երիտասարդ գիտնական Արմեն Այվազյանի դոկտորական ատենախոսությունը մերժել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող խորհուրդը:

Արմեն Այվազյան անունը հայտնի է մեզ մի շարք ուշագրավ եւ, ըստ մեզ, պատմական արժեք ներկայացնող մենագրություններից:

